158. Յաւուրն իմոյ վախճանի հրեշտակ բարի լինձ առաքեա՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. ընդ ուղիղ ճանապարհ գնացից սրբոցն՝ հոգւոց իմոց առաջնորդեա, և պատգամն դարանակալ կտրծանեա. անցս զիս անխռով ընդ օդս խաւարինա, և զերծս՝ ի չարաժանի դատանէն. ապրեցո և անեղկիւղ պահեա, և՝ ի կացանս սրբոցն հանգո՝ ստացել և ակն ունել գալստեան քո։

159. Յորժամ գաս տէր՝ յերկինից ահեղ փառօք և անթիւ դասուք հրեշտակօք, և զարհուրեալ դողան առ հասարակ տարերք ամենայն՝ երկնայինքն և երկրայինքս.

յանկարծակի զօրութեանդ՝ առնել առ հասարակ տարերք ամենայն յահեղ փառաց դատաստանիդ և աննեղելի պատուհասիդ։ Զայնմ առնուր և զիս ընկալ տէր՝ ընդ արդարս և ընդ կատարեալս քո, և կարզեա ընդ աջմէ դառնն, և պահեա ընդ սուրբս քո. և շնորհեա ինձ զկեանս յաւիտենից, և զանձառ խորհս քո պարզեւեա ինձ. և քեզ փառք արարողիդ և պարգեւողիդ լոյս բարեաց։

140. Զիշեա տէր՝ զհոգիս նոցին ջեղջեղոց մերոց յառաջ մեծի քուամ գալստեանդ՝ յորժամ գաս յերկինից անձառ փառօք, ահեղ և սոսկալի զօրօք, հրանիւթ և հոգեղէն զբաւորիսն։ Ահաւոր հուր առաջի քո ընդհատեալ տարածանի, կիզէ զերկինս և հալէ զբուրս, և զարարածս ամենայն առ հասարակ տա-

սոլէ . յայնմ աւուր ահեղին ողոր-
մեա լինիմ մարդասէր , զի գին սուրբ
արեան քո եմ : Յորժամ գաղթեա-
ցուցանես , և զինացս գե-
ղոյ դադարեցուցանես , զծովա-
ղոյն զանդաւաւթիւն սպառեցու-
ցանես , զլուսատուս խաւարեցու-
ցանես , զոսկն ահագին ընդ սիե-
զերս ամենայն հնչել և զմեռեալսն
ամենայն զարթուցանել և զաշխար-
հըս ամենայն դողացուցանել , և
սարսածք ամենայն յարուցեալքն
առաջի աոոուածոլմեանդ քո :
Յայնժամ գնես զդատաստան ա-
նաո քո , և ընդ քեզ բազմեցու-
ցանես զերկոտասան առաքեալսն .
անաչառ դատաստանաւ դատիս և
յամենեցունց զարդարութիւն պա-
հանջես , զկամարարս քո պատուես
և զապստամբեալսն ի ձայնէ կոչ-
ման քո պատժես , և զարդարսն
փառաւորես , զմարտիրսն և զք-

սուրբ վկայն պսակես, զիմաստուն
սուրբ կուսանան զարդարես, և
յիմար կուսանացն զառագաստին
դուռն փակես, և ի փառացն և
յերանութեանցն հալածես, զո-
դիան քո ընտրես, և զայծիան ի քէն
ի քաց մերժես և ի գեհեանն ա-
ռաքես՝ ուր լալումն է աչաց, և
դառնապոյն կսկիծ ահեղ տանջա-
նաց հրեղինաց՝ չար արդանցն
Թուհաւորաց կատուլացն գազա-
նաց և կրճտումն ատամանց։

Ուրդ՝ գԹա և յիս յայնժամ
մարդասէր աէր և բարերար փըր-
կիչդ իմ Յիսուս Քրիստոս. և ողոր-
մութեամբ քով գԹացիս ի հոգիս
ննջեցելոց մերոց՝ որք հաւատով ի
քեզ ննջեցին, զարս յարուցեալ կա-
ցուցանես առաջի ահաւոր քո մե-
ծի դատաստանիդ՝ յայնմ ոիւն զերա-
կան ահեղ հրապարակին։ Յորժամ
յայտնին ամենայն գործք բարւոյ և

չարն անթափչելն ի մէջ առնելին, յայնմ աւուր ահեղն ԹաղուԹիւն ընդհեա յուսացելոց քոց, որք յանուն քո սուրբ ննջեցին յերկրի, զոր պնեցեր պատուական արեամբ քովդ քո: Ջննջեա զձեռագիր ամենայն մկրտելոցս ի քեզ, և Թող զպարտիս յանցանաց ամենայն հաւատացելոց ղկամայիկ և զակամայիկ. ընդ այմմ քումմէ դասեա, և ղերանական ձայնն ի լսելիս ամենայն հաւատացելոց աւետաբերեա ասելով. եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զյաւիտեննից բարութիւնան:

141. Ընդ՝ սէր բարեբար ողորմած և մարդասէր, ընկալ զաղօԹս և զխնդրուածս իմ, որ պաղատիմ և հայցեմ ի քէն վասն իմ և վասն ամենայն հաւատացելոց. Մի դարձուցաներ զերեսս քո ի ժողէս, այլ խոնարհեա յաղաչա-

նրա իմ, և լսեր ինձ մարդասէր տէր
և ցոյց յիս զսովրական քո մար-
դասիրութեանդ զողորմութիւնն,
և խնայեա ՚ի մեղուցեալ ծառայս
քո. և կարգեա զիս ընդ ալմէ դա-
ռանն, և մի կացուցանես ընդ ձախ-
մէ ընդ ուլն՝ որք գայրացուցին
զքեզ: Եւ մի պահանջեր յինէն
զանհամար պարտիս յանցանացդ ի-
մոց, և մի դատապարտեր զմեղա-
ւորս յայնժամ. և մի յայտնեացին
ծածուկ գործք ամբարշտութեան
իմոյ յանցանացդ յանհաչատ քո ա-
տենին՝ առաջի հրեշտակացն և
հրեշտակապետացն և ամենայն ստե-
ղոյ քոյ սկզբանց: Ա յլ յաղթեալ
՚ի քումմէ մարդասիրութենէդ՝ ա-
րասցես այցելութի և ողորմութիւն
մեղուցեալ ծառայիս քո. և մի լսես
զայր գործոց իմոց հատուսցես ինձ
և մի հրամայեր կապեալ ոտիւք և
կապեալ ձեռօք հանել ՚ի խաւարն

արուաքին, ուր լալ աչացն է և կըռ-
ձել ատամանց. այլ ըստ քում գը-
թութեդ և բարերարութեանդ և
անյիշաչարութեանդ ողորմեա ինձ
բազմամեղիս: Յայնմ աւուր զեր-
ծո զիս յամօթոյն յաւիտենից, և
վրկեա զիս յանվախճան տանջա-
նացն, և տպրեցո զիս յանեերելի
պատուհասից, և բաց ինձ դրու-
ռըն ողորմութեան քո, և մի՛ վա-
կեր զդուռն արքայութեան:

Տէր իմ տէր, Աստուած իմ Աս-
տուած՝ Յիսուս Քրիստոս, արժա-
նի արա զիս զանարժանս յաւուրն
յայնմիկ երանութեան՝ պարզեւաց
լուսոյ և անապատ յաւիտենից ու-
րախութեդ և բարեաց հաստուց-
մանց արքոյն և արդարոյն՝ զիւտս
երանելեացն վայելել միշտ, զի մտից
արժանապէս յատապատս անմահ
վենասիդ, և ժառանգեցից զանըս-
պառ բարիսն ընդ ամենայն սուրբս

քո, մաքուր յատակ եւ սուրբ սրտիւ՝ համարձակ երեսօք անհատ տեսլից զքեզ ընդ հրեշտակս, եւ ընդ ոբ սիրոյդ քո վայելեցիկ պանհաս զանձառելիդ. եւ զանեզը լոյս երկրպագութեանդ՝ գոհանալով. եւ զուգահաւասար արասցես ընդ սէս քո յօրհնաբանութիւնս միշտ արժանապէս, հանապազ աստուածային անբասւեր լուսով քով պայծառացայց, եւ անդադար երգով փառաւորեցիկ եւ բարեբանեցիկ եւ վերօրհնեցիկ զամենասուրբ երրորդութիդ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք գարձեալ նորին սրբոյն Եփեմ.

Տէր երկնի եւ երկրի, իշխան մահու եւ կենաց, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց, Քրիստոս Աստուած, յոյս եւ ապաւէն հոգ-

ասա ինձ. քեզ խոնարհեցուցանեմ
զերկրպագութիւն և մատուցանեմ
փառաբանութեամբ մաղթանս ։
Լուր պարգեւիչ՝ հայցուածոց ի-
մոց, որ միայնդ ես առանց մեղաց,
որ միայնդ ես սուրբ և՛ի սուրբս
հանգուցեալ, որ միայնդ ես գլե
թած և ողորմած ։ Ողորմեա ինձ
Աստուած ըստ մեծի ողորմութեան
.քում, .և ըստ բազում գթութեան
.քոյոց ջնջեա զանօրէնութիւնս իմ ։ Սոսկ
ծիչ իմ՝ ողորմեա ինձ և օրհնեա
զիս, երեւեցո զերեսս .քո առ ի-
ս և հաշտեա ընդ իս ։ Ապրեցուցիչ
իմ՝ դարձ առ ի-ս, երեւեցո զե-
րեսս .քո և յիշեա զիս յարքայու-
թեան .քում ։ Դարձ առ ի-ս Աստ-
ուած փրկիչ իմ, և դարձո զբարե-
աւութիւնս .քո յինէն. մի յաւե-
ւտեան բարկանար ինձ, և մի դար-
ձուցաներ զերեսս .քո յինէն. մի
բարկութեամբ խրատեր զիս, և

մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. մի յաւիտեան բարկացար ինձ, և մի յիշեր զչարիս իմ, և մի պատուաստեր զիս ըստ իմում անօրէնութեանս. մի յաւիտեան պահեր ոխս, և մի՛ ի սպառ բարկանար ինձ: Մի ըստ մեղաց իմոց առներ, և մի ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ: Մի ընկենուր զիս յերեսաց քոց, և մի խնդրեր զիս յանցանաց իմոց. մի դատապարտեր զիս, զի ես ինձէն դիտեմ զի անուղղայ եմ և յանցաւոր՛ ի մանկութենէ իմմէ, և անպատասխանի յամենայնի:

Այլ դու դատաւոր հզօր և անոխակալ, որ զյանցանս մեզայն Թոյլեր զանառակ որդւոյն, Թող և ինձ զպարտիս մեղս ցեալ և առնարժան քո ծառայիս. քանզի քո առատ բարերարութենդ յարժամ չիս ցուցցես, յայնժամ երեւեսցի

բարեգթութիւն քս, որ արժանի
եմ բիւր տանջանաց. զի զամենայն
գիւեանս իմ անառակութեամբ ան-
ցուցի, և ոչ կացի ՚ի հրամանի
քում: Այլ քաղցրացիր ինձ քաղց-
րութեամբ՝ քաղցր և բարի Թագա-
ւոր, և հաշտեա ընդ բազմամեղիս:
Մի հայիր յիմ անհնազանդութիւնս
և ՚ի ծուլութիւնս. մի անարգեր
զիս և մի թողուր զիս, և մի ընդ
վայր հարկաներ զիս: Զի Թէպէտ
ես զառաձար հոգւոյդ սրբոյ ապա-
կանեցի իմով ծուլութեամբս և ա-
նառակ գնացիւքս, այլ դու գԹա
յիս ստեղծիչ իմ ողորմած և ան-
յիշաչար: Մի ապականեր զհոգի
իմ պեհենաժառանգ այրմանքն յա-
ւիտենականս. այլ գԹայեալ
մարդասիրատէս՝ երկայնամիտ լեր
առ իս, և ներեա յանցանաց իմոց,
և շնորհեա ինձ ժամանակ զղջման
ապաշխարութեան:

եւ տուր զօրութիւն եւ իմաստութիւն խորհել զօրէնս քո ՚ի տուէ և ՚ի պիշերի, գործել զքաւիլ և առնել վարդապետութիւն առաջի եւ բեռաց քոց ։

Համբառնամ առ քեզ աչեր զաչս իմ բոլորով սրտիւ լանով. կարդամ առ քեզ, Քրիստոս Աստուած միածին Որդի Աստուծոյ ։ Որ կամաւոր խոնարհեցար յանձառ վիճառաց, առեր զկերպարանս ծառայի և անպարտականդ յաղագս դատապարտութեան մերոյ համբերեցեր մինչեւ զջարչարանս խաչի և. մահու յանձն առեր վասն փրկութե՛ առեզծուածոց քոց ։ Արդ՝ որ այսպիսի սէր ունիս առ. ազգս մարդկան , և կամիս զի ամենայն մարդկեցցէ և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ , զիա ՚ի բազմամեղս՝ զիաձ և մարդասէր Տէր , և կամեաց ընդ իմ փրկութիւնն , և

արա ողորմութիւն ինձ եկեղեցւոյս և
թշուառականիս, որ առաւել վի-
րաւորեալ եմ և ողորմելի քան զա-
մենայն մարդիկ: Զի ոչ մի օր սիրե-
ցի զքեզ՝ ի բոլոր սրտէ իմմէ, և
ոչ մի ժամ յամենայն զօրութենէ
իմմէ պահեցի զպատուիրանս քո.
այլ պղերգութեամբ և զբօսանօք
անցուցի զամենայն ժամանակս իմ,
և ապրելի խորհրդովք անցուցի
զկեանս իմ: Աւուրք իմ պակասե-
ցան, և անօրէնութիւնք իմ բարձ-
րացան, և ոչ գոյ ինձ յոյս փրկու-
թեան և ոչ ունի ապաւինի. բայց
միայն յուսացեալ եմ և ապաւի-
նեալ յառաւ ողորմութիւն քո՝
Քրիստոս Աստուած:

Եւ արդ՝ անկեալ բեմամբ ար-
տասուաց ապաչեմ զքեզ, և հա-
ռաչմամբ սրտի առ քեզ պաղատիմ.
մինչեւ եմ կարօտանալ և մինչեւ ե
ժամանակ դարձի իմոյ հասանել՝ զո-

նորհեա ինձ ժամանակ ապաշխա-
րութեան, և յառաջ քան զվախ-
ճանն արձակեա զիս ի կապանաց
մեղաց իմոց, և անտես արա զան-
թիւ անօրէնութիւնս իմ: Որ ամե-
նայն բարութեանց ես տէր, և ինչ
խանդ ես Թողուլ զմեզս, ծածկեա
և արա անտեսութիւն անօրէնու-
թեան իմոց յամենայն մեծութենէ
քումմէ: Սկսիմարեա զչեռացեալ
և զտառապեալ հոգիս իմ. և ար-
ժանի արա զիս յայսմ հետէ ըստ
կամաց քոց քաղաքավարել զայլ և ս
պանդխտութեան իմոց ժամանակս:
Եթէ կամիմ և եթէ ոչ կամիմ՝
բռնադատեա զիս, և մի Թողուր
զիս ի կամս անձին իմոց, մինչեւ
տարեալ հաստատեսցես յօթևանս ար-
քայութեանդ երկնից:

Լուր տէր՝ աղօթիւդ անարժան
ծառայիս քո, և պաշտօնանաց իմոց
ունկն դիր, որ ասացեր՝ Թէ հայ-

ցեցէք և գոլիք, բախեցէք և բաց-
ցի ձեզ, և այժմ բաց լինձ Տէր ըզ-
դուռն ողորմութեան՝ որ ողբալով
կարդամ առ քեզ։ Եւ մի անտես
առներ զաղաչանս մեղուցեալ ան-
ձին իմոյ, որ ոչ եկիր կոչել զար-
դարս, այլ զմեղաւորս յապաշխա-
րութիւն։ Արդ՝ խոնարհեալ ան-
ձամբ և բեկեալ սրտիւ և ամօթա-
լից երեսօք անկանիմ առաջի քո և
աղաղակեմ առ քեզ. Հայր, մե-
ղայ յերկինս և առաջի քո. Թէ-
պէտ և ոչ եմ արժանի կոչիլ որդի
քո յայտպես ապականեալ վարուց
իմոց, և ոչ անուանել զանուն քո
գարշելի բերանով իմով, այլ հա-
մարձակիմ՝ ի գթութիւն քո, զի
գիտեմ զքեզ քաղցր և անհատակալ
բազմանանամ և երկայնամիտ առ ա-
պարաճս քո։ Եւ յայտպես այնորիկ
ժառելով պաղատիմ առ քեզ. և յա-
ռաջ քան զդնել ատենին աղաչեմ,

և նախ քան զփակել դրանն ապաշ
խարութեան և հաւանել անդարձ
վճռին՝ զարհասաւս իմ՝ արիանեմ
առաջի անհնակալ գթութեանդ
քո, ողորմած Տէր երկայնամիտ,
քաղցր և անչափաբար. մի ընդ քան
քարամաքսցան դատապարտեր զիս
և մի ընդ յիմար կուսանացն փա
կեր զդուռն արքայութեան քո.
մի ընդ չար և ընդ վատ ծառայիցն
լծակցեր զիս, և մի ընդ անհաւատ
սըն և ընդ հերձուածողն դներ
զբաժին իմ. մի ընդ պոռնիկան և
ընդ չարագործն կորուսաներ զիս,
և մի ընդ ախտաւորան և ընդ շա
ղախեալն հոգեւոյ հաներ զիս՝ի կե
նացն: Այլ ներծո զիս յանեզրական
տանջանացն, և ապրեցո յանհան
գիստ ալեկոծութենէ, և փրկեա յան
մահ մահուանէն, և ազատեա յա
ւիտենական ամօթոյն, զերծո՛ի միշտ
ապականչին և հանապատղծող ոգւոյն:

Մի տարապիր առներ և մի մերժեր զնա ՚ի քո գտուցն և յերանաւէտ կենացն. մի անբաժին հաներ զնա ՚ի հայրենի ժառանգութենէն, և մի զրկեր զնա յերկնաւոր հարսանեացն, և մի կարօտ պահեր զնա ՚ի քո անճառելի տեսլենէդ։ Այլ ընդհակառակ լինիր ընդ արժանաւորան և ընդ կատարեալ ոգիան վերանալ լուսեղէն ամպովք ընդառաջ քո յօդս, և պարզ երեսօք և աչալրջութեամբ կալ առաջի քո տէր։ Եւ զնան քո փառաւորեալ հզօր և ահեղ թագաւորութեանդ մի մոռաներ ՚ի դառնաստան ընդ ծառայիս քո, և մի հատուցաներ լինիր ըստ անօրէնութեանս, և մի ամաչեցուցաներ զնա առաջի անթիւ և ահեղ բանակաց քոց. այլ ողորմեա լինիր, զի ոչ ոք է հակառակ քեզ, և պարգեւեա լինիր զքո աւրհնութիւնդ։ Ընդ սուրբս քո

դասեա, և ընդ արդարան պսակեա, ընդ սիրելեան քո օրհնեա, և ընդ կամարարս կամաց քոց յարակից աւարձ ուրախութիւնեան ուրախացո, և առատապարգեւ փառօք փառաւորեա զնա՝ տէր, ի լսաւեղէն երամս արդարոց՝ ընդ նոսին հանդիսել ի վերինդ երուսաղէմ յանուանէ և յաստուածակեաց ուրախութիւնդ. զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զամենասուրբ երրորդութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք նորին գործեալ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ մի մոռաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, և մի տար այլոմ զրաստանանս իմ, այլ ի փառաւորեալդ քեզ մին մերձենալ զիս արժանաւորեա.

քանզի զոր Աստուած դատի, ոչըմեւթեան արժանի լինի: Աղեղով զայս ՚ի հանճարեղաց և յիմաստնոց և ՚ի արբոց առաքելոցն զայսոսիկ՝ ասեմ, զի ամենայն ոք որ զԹագաւոր տեսանէ, Թէպէտ և մեղուցեալ է՝ ոչ մեռանի: Աղաչեմ ըզքեզ՝ ստեղծիչ իմ և փրկիչ իմ, մի զնա ՚ի նեղելն իմոյ Թշուառացուցաներ, մի խորտակելով չարչարեր զնա: Քանզի եԹէ արժանապէս ըստ գործոց այց արասցես ինձ, յերկոցունց կողմանց կազմի ինձ որոգայԹ կորուսեան. զի յորժամ յիշեմ զգործս իմ զանըմբեռելի, դողդողմն ՚ի վերայ իմ անկանելով խորտակեն զնա, և սարսուռ դըժնեայ ունի զնա յորժամ վաստահանամ հաւատոյդ ընդունել ՚ի հանգստեանն՝ որ առաջի կայ, և ոչ կարեմ համբերել: Եւ յառաջագոյն յայտ առնէ առաքանց իմոյ

կրճատումն, որ անդ առաջի կայ լինել
ցասքն և սպրսումքն: Տես սէր՝
զհոնարհութիւնս իմ և զթա յիս:
Աղաչեմ զքեզ՝ միածին Որդի Աս-
տուծոյ, արժանի արա զիս Թողու-
թեան մեղաց, և մի հաւատացանել
ինձ ըստ վարձուց վաստակոց իմոց.
քանզի եթէ զանօրէնութիւնս իմ
ապահեցես, ոչ տեւեսցէ քեզ.
և եթէ ըստ մեծութեան քումմ
հաւատացանես մեզ ողորմութիւն,
արժանի գտանիմք ի դատաստանի
քումմ. քանզի ամենայն բերան
կայցի և դատապարտեսցի ամենայն
աշխարհ առաջի Աստուծոյ: Արդ
ոչ եթէ գքո հնարհատ արհամար-
հելով յառաջ բերեմ զայսոսիկ,
այլ զդրեալսն ըստսիմ՝ երկայնամիտ
Քրիստոս: Ջինչ օգուտ կայ քեզ
ի մարմնոյ իմոյ, եթէ ի բարե-
քեալ հուրն առաքեցայց. արա
ընդ իս ըստ ողորմութեան քումմ

պլծուլթիւն քո, և ծանիցի ամե-
նեցուն չնարհք քո և երկայնմտու-
լթիւն քո։ Եթէ զդատաստան ամե-
նայն երկրի առնես, որպէս պատ-
ուիրանք քո յայտնեցին, ոչ ապրես-
ցի մի ՚ի հազարաց, և ՚ի բիւրոց
ոչ փրկեսցին։ Այլ վինչ հոգալով
խօսիմ զայս ես տառապեալս. աղա-
չեմ փրկիչ՝ ոչ զի զուգեսցես վմե-
ղաւորն ընդ արդարն՝ քեզ մաղ-
թեմ, բարերարուլթե արդի, այլ զի
արժանի արասցես զպլծուլթիւն քո
սիրել՚ի մեզ, յիս և ՚ի մերձաւորս
իմ։ Դարձեալ աղաչեմ և ոչ դա-
դարեցից երբեք յայտնել. զի թէ
ոչ զգուշուլթիւն քո ձգեսցես ՚ի
մեզ, ոչ ոք կարող է տեսանել ըզ-
կեանս։

Ընտուած՝ զպլծուլթեամբդ քո
աղաչեմ զքեզ, մի կացուցաներ զիս
ընդ ուլսն ՚ի ձախակ քումմէ՝ որք
զայրացուցին զքեզ, և. մի ասիցես

Թէ ոչ գիտեմ զքեզ, այլ տուր
ինձ յայտագս գԹուլԹեան քո միշ-
անչեննաւուր ողբումն և ցաղումն.
նուաստացո զսիրտ իմ և սրբեա ըզ-
սա, զի լեցի տաճար Հնարհաց քոց:
Զի Թէպէտ եղաւուր եմ և ամբա-
րիշտ, սակայն հանապազ զդրունս
քո բախեմ, զի Թէ դանդաղիտ
եմ և պղերգ, սակայն զճանապար-
հըս քո կամիմ գնալ: Տէր իմ և փըր-
կիչ, քնդէր զիս լքանես. գԹա
չիս, վասն զի դու միայն ես ա-
ռանց մեղաց. հան զիս ’ի տագնց
անօրէնուԹեան իմոյ, զի մի ընկ-
ղմայց յատելութեան: Փրկեա զիս ’ի
բերանոյ Թշնամեացն իմոյ, զի ահա
էրբեք զաւուծ մոնչէ՝ կամելով
կլանել զիս. զարԹո զողորմԹիւն
քո, և եկեսցէ կենցուցանել զիս.
միայնակեաց զիայնակուն քո,
և քոյ.բայեա զողորմԹիւն նորա.
երկիցէ և զարհուրելոյն չերեսաց

.քոց , .քանզի տկար է և ոչ ունի զօ-
րութիւն կալ առաջի .քո : Եւ ար-
ժանաւորեա զիս ընդ վրկեալսն
խաչիւս և արեամբ .քով գոհանալ
և փառաւորել զ.քեզ ընդ Հօր և
ընդ սուրբ Հոգւոյն , այժմ՝ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Նորին գարձեալ ազօթք զղջման :

Տէր Աստուած զօրութեանց՝
աղաչեմ զ.քեզ , որ մեծդ ես և ա-
հաւոր , ահեղ և սքանչելի , անեղ
և անանցանելի , անբաւ և անբռ-
նադակելի և ամենեւին անքննե-
լի և անհմանալի և անհաս , ՚ի վեր
.քան զամենայն եւ յամենեցունց
օրհնեալ գոլեալ և փառաւորեալ,
անչիշաչար գթած և մարդասէր :
Քանզի դու միայն ես հայր ամե-
նակալ և արարիչ ամենայն լինելու-

Թեանց, զորս ի չէիցէ գոյացու-
ցեր, և ունիս ի հաստատուԹեան.
և դու տէր՝ որ տէր ես ամենայնի,
և ամենայն արարած քոյով հրա-
մանաւդ կատարելոյն: Դու ես ա-
վետեցուն օգնական և պահապան.
դու բժշկես զվիրաւորեալսն ի
բանսարկուէն, և առողջացուցա-
նես զհիւանդացեալս մեղաց. ըն-
դունիս զաստուածանողսն և զապաշ-
խարողս, և քաւես և սրբես զյան-
ցանսն մեղուցելոց: Վասն որոյ ես
որ կարի լի եմ մեղաց, առ քեզ ան-
կանիմ յարուժամ. ապաչեմ և մաղ-
Թեմ և խնդրեմ ի քէն զԹողու-
Թիւն. դու նայեաց յիս փրկիչ՝ մար-
դասիրուԹեամբ քով, և ընկալեալ զը-
ԹուԹեամբ քով զպերեալս ի չար
Թշնամւոյն: Խոնարհեա տէր՝ ի
մաղԹանս իմ, և բժշկեա զհոգւոյ
իմոյ զվտարուածն յաներեւոյԹ նե-
ռից սատանայի:

Տես տէր՝ զտառապանս իմ ծա-
ռայիս, և շնորհեա զիմաստու-
անձիս. յանցանաց իմոց զսր մեղայ։
Լսես տէր՝ ձայնի աղաչից և ցա-
ւոցն սրտատանջից, զի կարօտ
եմ շնորհի քո և ողորմութեանդ։
Թող տէր՝ զյանցանս իմ բազմաժո-
ղեր և զմեղս իմ զանհամարս մինչ-
չեւ հասեալ իցէ օր դատաստանի
քո. փարատեա յինէն զանդղջու-
խաւարն՝ որ տարածեալ կայ՝ի սրտիս
և զեղջ հաստատեա. յորդորեա
զիս յարտասուս և՝ի զեղջ ապաշ-
խարութեան հանապազ։ Շնորհեա
ինձ փրկիչ՝ զիմաստուն արտասուաց
մարգարէին, որով զմահիւձս թա-
նայր, զի և ես զվէր հոգւոյս ի-
մոյ լուացից հեծեծանօք և պաղա-
տանօք և ողբապին արտասուօք։
Գիտեմ տէր՝ զի յանցանք իմ ան-
թիւ են առաջի քո՝ մարդասէր,
այլ և անբաւ են ողորմութիւնք քո

՚ի վերայ ապաշխարողաց. ընդ որս
և ինձ ողորմեա, ինձ որ առաւել
եմ անօրինեալ քան զամենայնմարդս
և չեմ արժանի առ քեզ ՚ի վեր
հայել բարեբար՝ ՚ի բազմութենէ
պատահեալ յանցանացն զոր գոր-
ծեցի. այլ դու տէր՝ հայեաց ՚ի
վարանումն տարակուսանաց իմոց
յերկիւղէ գեհենին, և մի անզեղջ
և անապաշաւ հաներ զիս յաշխար-
հէս լի յանցանօք. այլ ՚ի վայրս
տարժանելի վաստակոց և ՚ի չան
կատարեալ ապաշխարութեան առ
պճղուի իմ յինէն, և խառնեա ՚ի
թիւ ճշմարիտ ապաշխարողացն ար-
դարացելոցն՝ որ ՚ի փառս քո վայե-
լեն: Ոչ վասն իմ ինչ վարուց եմ
արժանի ողորմութեան քո՝ մարդա-
տէր, այլ վասն գթութեան քո տէր
ընդհեա ինձ թողութիւն յանցա-
նաց իմոց, և օգնեա ՚ի մարտի
թշնամւոյն ծուլացելոյ ծառայիս

քո՝ բարեբար. քանզի բազում ան-
գամ խոստացայ զյանցանս իմ խոս-
տովանել և ապաշխարել, և անօրէն
թշնամին ժամէ՛ ի ժամ ձգելով կո-
րոյս զկարողութեան ժամանակն ա-
պաշխարելոյ։

Այլ արդ եթէ ոչ դու տէր՝
օգնեացես և շնորհիւ քո զօրացու-
ցես, չէք ինձ՛ ի գործոց իմոց փըր-
կութիւն. զի թէպէտ և բանամ
զբերան իմ յաղօթել, և զձեռս իմ
առ քեզ՛ ի վեր համբառնամ յաղա-
չանս, անդրէն զսիրտ իմ սատանայ
պատրուակէ, և զմիտս մերժէ յաս-
տուածային յերկեղէ, զանազան և
զսղնոր խորհրդովք զբաղեցուցանէ
և ընդունայն հանէ յաղօթիցն։
Վասն որոյ զփրկիչդ իմ աղաչեմ,
փրկեա զիս՛ ի պատերազմէս յայսմա-
նէ. քանզի կարի նեղեալ եմ՛ ի նենգ-
գութէ թշնամւոյն՝ որ երբեմն՛ ի
հաւատոյ յորդորէ յօժարութիւն սըր-

տիւ խնդութեամբ, և երթեւեն ի
մեզ ընկենու ոչ յիշելով զբոց գե-
հենոյն՝ զոր ոչ պատի, և ոչ լալով
լուսոյ զվերոյ յանցանաց իմոց
փոխութիւնս : Որ չարախոցս եմ
վերաւորեալ յանթիւ մեղացս բազ-
մութենէ, և ոչ բաւեմ ապրել
ծուլացեալ անձամբս. այլ յոյսը-
մութիւն քո յուսալով համարձա-
կիմ առ քեզ աղօթել բարեբարիդ
և մարդասիրիդ Աստուծոյ : Ընկալ
զաղաչանս իմ ցաւագինս և զպա-
տառանս իմ աղերսաբերս, և շնոր-
հեա ինձ զղջումն արտասուաց ա-
պաշխարութեան, որով զմեղս իմ
քաւեցից, և զարարիչդ իմ հաշ-
տեցուցից մաղթանօք : Ահա տէր՝
սիրտ իմ դելու յանթիւ մեղացս
վարանեալ, և որովայն իմ հեծէ առ
քեզ աղաղակել. և անձն իմ հեծէ և
աչք իմ բաղձալ արտասուաց յի-
շելով զմեղսացս իմոց զբազմութիւն :

Զի լի եմ անթիւ յանցանօք և անհամար գործով անօրէնութեք, և առ քեւիչդ իմ խոստովանիմ ողբալով. քանզի Աստուած ես դու թութեանց և տէր ողորմութեանց, գիտա յամենամեղս որ ի քեզ եմ ապաւինեալ, բազմապութ : Զի կարեվէր եմ մեղօք, և տագնապիմ ախտիւ յանցանօք, և խնդրեմ ի քէն բժշկել՝ որ բժիշկ ես հոգւոց և քեւիչ յանցանաց : Եւ արդ բժշկեա տէր, զի լեզու իմ վիրաւորի դատարկաբանութեամբ և ի զրախօս բամբասանաց :

Լուսաւորեա տէր՝ զաչս իմ յուծոլ ի չարաչար նայելոյ և յանդէպ տեսանելոյ : Սրբեա տէր՝ զմիտս իմ ի խաւարային խորհրդոց սատանայի և յամենայն չար գործոց թշնամւոյն, և լցո զնորհօք և ողորմութեամբ քո : Լուա տէր՝ զախտ հոգւոյ իմոյ զոր ժանդահոտ

մեղաց նեխութեամբ զաղրացուցի,
և շնորհեա ինձ խորհել միշտ զսիր-
ոյդ քո՝ բազձալ յարաժամ: Հօդդ
մարդասիրի և բարերարի կարօ-
տիմ հանապազ, ընկալ զիս գթու-
թեամբ որպէս զորդին անառակ.
լո՛ զքաղց իմ և զծարաւ յաւա-
տաբաշխ շնորհէդ՝ բարերար: Եւ
խնդրեմ առ քեզ մերձենալ, և միշտ
շնորհաց քոց վայելիքիմ յարաժամ,
և զոլորմութիւնքո բերկրանօք ժառեմ
հայցել մաղթանօք: Եւ դու տէր՝
ընկալ զիշատապնեալդ տառապանս,
և նեղութեա քոյով մեծաւ նեղուեցէք
յանցաւոր ծառայիս՝ բարերար:
Զի թէ առանց նեղելոյ զյանցանս
իմ գաւառես, ապա երանեալ էիր-
ցայն յորոյ ոչ, զի հուր դեհենին
է ժառանգութիւն հանապազ.
քանզի ոչ միապին ձանձրանայ
մեղայ՝ ընդ որս ոչ գնացի, և՛ զի
շնորհաց տուրըդ հոգւոյդ մերկացայ:

Ընդ անկեալ առ քեզ պաղատիմ, զթա ի ժառանգութիւն թախանձանաց մաղթողիս, և մի մերժեր զիս յողորմութենէ քումմէ՝ ողորմած ես։ Զի զքեզ լանդրեցի և զքեզ աղաչեմ, լից զփափաք իմ որում միշտ հոգի իմ կարօտի՝ մեղաց թողութեան։ Զի ոչ թէ իբրեւ զբարեգործ ոք հայցեմ ի քէն համարձակ, այլ իբրեւ ըզմեծամեղ յանցաւոր ոք՝ աղերսիւ ժառեմ յարաժամ։ Ոչ զոգի իմ մաքուր ունելով ինչ մերձենամ առ քեզ՝ մարդասէր, այլ ի մաքրութենէդ քումմէ զժահահոտութիւն վիրաց մեղաց իմոց մաքրել աղաչեմ. զի դու միայն ես հայր իմ և տէր բարերար, արարիչ իմ և վերակիչ իմ և կեցուցիչ իմ։

Ընդ ո՞ երթայց՝ մարդասէր, կամ յումմէ լանդրեցից օգնութիւն և վիրաց իմոց բժշկութիւն.

այլ քեզ մաղթեմ ողորմածիդ Աստուծոյ և բազմապատիկ իմոյ արարչիդ։ Մի բարկութեամբ խրատեր և մի սրտմտութեամբ. քո յանդիմաներ՝ բարեբար. մի ընդ պատժեալն պատժեր զիս, և մի ընդ դատապարտեալն դատապարտեր զիս՝ գթած. մի անողորմ պահանջանօք պահանջեր, և մի սոսկալի գեհենիդ դատաստիւք՝ մարդասէր։ Մի յաւիտենական ամօթովն ամաչեցուցաներ զիս, և մի՛ ի մեծի աւուրն սրբոյն պակասել՝ զիս պատուհասեր անողորմ և աննեղելի։ Այլ ապրեցո զիս տէր՝ ի հրահասան հալոցայն և ի հրաբուրբոք գեհենոյն, յանլոյծ կապանացն և յանշէջ խաւարէն, յանաչառ դատաստանացն և յաննեղելի տանջանացն յաւուր։

Այո՛ տէր՝ յայտնեա առ իս զգթութիւնս քո, զի սովոր ես

ցուցանել զողորմութիւն քո առ
կարօտեալս, ներեալս և վճռապը-
նեալս մեղաց. և այժմ առ ես ցոյց
զբարերարութիւնդ քո, որ չարա-
չարս եմ վիրաւորեալ առաւելքան
զՍոդոմայն. և միշտ երկիւղս դո-
ղամ հանապազ՝ եթէ կենդանւոյն
հրակիզեսցես իբրև զնոսա հրաւեր-
ացն բարկութիւք: Վասն որոյ աղա-
չեմ զքթութիւնս քո՝ մարդասէր,
ընդհեա ինձ նման նկինուէացւոցն՝
զողորմութիւն քո յողորմութիւն
դարձուցանել, և կանգնել՝ի յան-
ցանաց կործանմանէ. զի ահա ծով
մեղաց յանդունդս ընկղմէ զիս
վասն անօրէնութեան իմոյ առա-
ւել քան զքրհեղէնն: Ալ հրա-
մայեա ինձ տէր՝ զողորմութիւնս
քո տապան ամրութեան իբրեւ
զՆոյի ապրել ապաշխարութեամբ
՝ի հրեղէն ծովէն անդնդոց: Քան-
զի դու այն բարերար տէրն ես,

որ վան մարդասիրութեան քո՝ ի ծառայական կերպ իջեր՝ թագա-
ւորդ, աղատեա և զիս՝ ի չար ծա-
ռայութենէ մեղաց իմոց և յանո-
րէնութենանց։

Որ վան իմ թուք՝ ի դէմս և
ապտակ՝ ի ծնօտս և փուշ՝ ի գլու-
խըս ընկալար՝ մարդասէր, հան ըզ-
փուշ յանցանաց իմոց՝ որ չարաչար
վիրաւորիմ հանապազ։ Որ վան
իմ փայտի խաչի և խոցման գեղար-
դեանն և ձեռաց կապանաց եւ
բևեռացն համբերեցեր՝ բարերար,
լոյծ և զիս՝ ի դառն կապանաց սա-
տանայի, և բժշկեա զվտղումն ա-
նեղութեամբ գեղարդեան թշնամ-
ւոյն։ Եւ արդ՝ որ այսր ամենայնի
համբերեցեր ողորմած տէր՝ վան
իմ, և այժմ աղաչեմ վան մեղաց
թողութիւն։ Թէպէտ վան ան-
բաւ ծուլութեանս իմոյ չեմ ար-
ժանի ողորմութեան քո, սակայն

վան ժուսեթեան իմոյ լսեր տէր՝ իբրեւ այսոյն Թախանձանաց առ անիրաւ դատաւորին : Եւ առ իս կատարեա զբան քո տէր իմ՝ թէ ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս : Եւ պիտեմ՝ եթէ արդարքըն իբրեւ զպարտս ընդունին ՚ի քէն զարդարութեան պարգեւան. բայց ինձ ողորմութիւն չնորհեա իբրեւ մեծամեղի և բիւրապատիկ մահապարտի :

Որ առ ամենեսեան ես գթած, լսեր և իմ ողբալոյս առ.քեզ՝ բարեբարի , եւ ունկն դիր գթութեբ պատասանայ ձայնիս՝ ողորմած . զարձո զիս յուսկիղ ձանապարհն իբրեւ ըզհայհոյիչն և զհալածիչն, և արդարացո որպէս զմաքսաւորն . ողորմեա ինձ որպէս զանառնացեալն . ընկալ զիս որպէս զանառակ որդին , և մխանգամ՝ զարձո յիս զչնորհն աստանին սրբութեբ զոր զանապան

մեղօք հալածելի: Եւ մի ընդու-
նայն առներ զաղաչանս ծառայիս
քո՝ բարերար, այլ բաց զդուռն
աղօթից իմոց առ քեզ՝ մարդասէր.
և մի թափուցաներ զդուռն ողոր-
մութեան քո յամենամեղ ծառա-
յէս՝ ողորմած: Զի դու տէր՝ ա-
սացեր, թէ չիք ինչ զոր խնդրի-
ցէք յԱստուծոյ՝ և ոչ առնուցուք:
Վասն որոյ ամենամեղս ժառեմ հայ-
ցելով՝ ի քէն թողութիւն, զոր ան-
սուտ խոստացար ինձ փրկիչ: Ոչ
թէ վասն հաճութեան ինչ գոր-
ծոյ կամ արդարութեան իմոյ աղա-
չեմ զքեզ՝ մարդասէր, այլ վասն
ողորմութեան քո, զի քաղցր ես և
բարերար և մարդասէր: Ահա ես
կրկին զպարտական և զմեծամեղ
կամ առաջի քո ամօթով, և դու
կրկին զհայր գթած մի արգելուր
զհայցուածս իմ զոր խնդրեմ՝ ի քէն
զթողութիւն: Ահա ձեռք իմ համ

քարձեալ են առ քեզ, և սիրտ իմ
զարմացեալ է ի խնդրել՝ տէր բա-
րեսէր, քաց զսկանչս իմ լսել եր-
կիւղիւ զձայն պատգամաց քոց.
և բացցին աչք սրտի իմոյ դողու-
թեամբ հայել առ քեզ՝ի բարձու-
նըս առ գթածդ և բազումողորմդ
և ներողդ առ մեղուցեալս. վի-
դու տէր քաղցր ես և երկայնամիտ,
վասն մեղաւորաց կոչեցար ողոր-
մած, ի դառնալ անօրինին ոչ յի-
շես զամենայն անօրէնութիւնն զոր
արար: Արդ՝ խնդրեմ՝ ի քէն ողոր-
մեա ինձ, քանզի դու միայն ես
քաւիչ՝ որ զանմիւս յանցանս յան-
ցելոյն քաւեցեր՝ բարերար. զմե-
ռեալն մեղօք կենդանացուցեր.
զմոլորեալն ի չար խնամոյն դար-
ձուցեր. զվաւաշրեալն ի ճշմար-
տութենէ ըստաւուրեցեր, և քաղ-
ցամոլիս դարձին ներուցեր միշտ
ցայժմ: Զի քո եմ և ի քո պատ-

կեր հաստատեցեր զիս. ձեռօք ստեղծեր և հնչուկ կենդանացուցեր և ամենայն իշխանութեամբ փառաւորեցեր զիս. և եւտուր լինձ պատուիրան, և ոչ պահելովն անկայ ի փառացն: Եւ դարձեալ ի դալստեան քո նորոգեցեր զիս՝ ողորմած. լուացեր և սրբեցեր զիս աւազանին սրբութեամբ, և դարձեալ վերստին վկրաւորեցայ և բըժշկեցեր ապաշխարութեամբ:

Նա արդ՝ որ զայս ամենայն բարութիւնս շնորհեցեր լինձ ողորմութիւն, քաւեա այժմ ի մեզայ եւ պահեա յայսմ հետէ սրբութեամբ տէր. վրկեա ի թշնամւոյն և ի ձեռաց դժոխոց, ի միջոց լալոյն և յանդադար ողբալոյն՝ յորում ոչ ոք լսէ և ներէ ի դառն աղեսից տանջանացն: Բայց դու միայն ես մարդասէր, քաղցր և երկայնամիտ, բարերար և բազմամողորմ, ըն-

կալ զաղաչանս իմ։ Քեզ մեղայ և քեզ խոստովանիմ և առ քեզ պաղատիմ. զվերս հոգւոյ իմոյ ցաւագին հառաչմամբ ողբամ, և զանօրէնութիւնս իմ առաջի քո ։ Աղաչեմ հաշտեաց տէր՝ ընդ աղաչանս իմ ողորմութեամբ քով. ներեա և մարդասիրեա ՚ի վերայ մեղուցելոյս և ընկալ գթութեամբ քո զաղաչանս իմ։

Ընկալ տէր՝ զզղջումն խոստովանութեան իմոյ, զհառաչումն ապաշխարութեան, և զնզեա զանթիւ անօրէնութիւնս մանկութեան իմոյ. զի տկարացայ յանցեայ իւրեւ զմարդ., մեղայ և անկայ ՚ի խորս չարեաց ։ Գթա, քաւեա և յաւրս իւրեւ զաստուած և թեթեւացո. կանդնեա յաներեւոյթ գլորմանէս, և ընկալ զսուղ ապաշխարութիւն ապաշխարութեան իմոյ՝ մարդասէր. և թեթեւացո զձան-

րութիւն մեղաց իմոց զոր մեղայ քեզ՝ բարերար: Զի եմ դարձ ձեռաց, մի անտես առներ զիս ողորմած, որ առ քեզ զաչս ի վեր եմ համբարձեալ՝ի մաղթել զձեռս մերոց տացս տարածեալ յաղաչանս, և ծունր ինձեալ պաղատանօք զմեղս իմ խոստովանիմ առ քեզ և աղաչեմ ողբալով. Հայր՝ մեղայ յերկինս և առաջի քո, քաւեա զանօրէնութիւնս իմ՝ ողորմած: Եւ մի այլ եւս թոզուր զիս ի պատուիրանս քո մեղանչել՝ բարերար. այլ շնորհեա ինձ առ քեզ պաղատել ապաշխարութեամբ՝ պաղատանօք և չանիւ աղօթից, անդադար հառաչմամբ և գորովագութ ողորմ ողբալով առ քեզ, հանապազ պատառել, աղաչել և խնդրել մեղաց թողութիւն, զի կարող ես յամենայնի մարդասիրութեամբ քո:

Պահեա զիս գթութեամբ քով.

զօրացո զիս շնորհօք քո. օգնեա փրկեա և բժշկեա զվէրս մեղաց. նորոգեա զիս և հաստատեա և ապրեցո ՚ի յաւր Յիշատակին. ներեա քաւեա և արդարացո և լցո հոգւովդ քով սրբով: Եւ շնորհեա ինձ պահել հանապատ զվարս ուղիղս և հաւատս ճշմարիտս, խոնարհութիւն և հեզութիւն, հնազանդութիւն, պատուխոնարհութիւն և սէր կատարեալ. արդութիւն սրտի, ճշմարտութիւն լեզուի, ցնծութիւն աչաց, պարկեշտութիւնմարմնոյ, ինդութիւն պահոց, յօժարութիւն ողջոյ, յարդարութիւն ողորմութեան, զգեստ ևարուստս ապաշխարութե՛ն, համբերութի՛ւ ժուժկալութիւն, և առաւել գոհութի՛ւ ամենայն նեղութեանց: Զի այսու ամենայնիւ քաւեալ զիս և արքեալ արժանի սրա զիս մարմնոյ և արեան քո սրբոյ և ապրեցուցեալ երկ

նից՝ մարդասէր։ Յամենայնի գո-
հացայց զքէն հանապազ, երկիր-
պագից միանդամայն երրորդու-
թեանդ յարաժամ. օրհնեցից գո-
վեցից և փառաւորեցից գոհու-
թեամբ անդադար զՀայրդ ողոր-
մած և զՈրդիդ բարերար և զՀոգի
սուրբ կենդանարար, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք նորին դարձեալ։

Փառք քեզ Աստուած, փառք
քեզ արարիչ յաւիտենից Աստ-
ուած, փառք քեզ. որ շնորհեցեր
հանդիստ տկարութեանս մերում։
որ զարթուցեր զարտարածս զքեզ
փառաւորել։ Որ՝ի յերկինից խո-
նարհեցար մարմնանալ վասն մեր,
և՝ի սուրբ Աստուածածնէն Աստ-
ուած յայտնեցար։ Որ՝ի մէջ գիշե-

ըի վան մեր յանցացան ծնար ՚ի
Գուսէն և ՚ի տուրբ այրին բազմե-
ցար, զանարժան ծառայս քո որ
յաղքատաց եմ ծնեալ՝ սրբեացես
՚ի մեղաց: Որ ՚ի մէջ գիշերի գա-
լով ՚ի տաճարն արձակեցեր զծե-
րունին, զանարժան զքո ծառայս
արձակեա ՚ի մեղաց կապանաց և
՚ի բանտից: Որ ՚ի մէջ գիշերի ձա-
նապարհ հորդեցեր Յեփսաոս ե-
լանել, զանարժան քո ծառայս յե-
լանելն յաշխարհէս առաջնորդես-
ցես ՚ի կեանս: Որ ՚ի մէջ գիշերի
գնայիր ՚ի վերայ ծովուն իբր ՚ի վե-
րայ ցամաքի, անարժան քո ծա-
ռայիս ձեռնտու լեր տեր իմ՝ որ-
պէս Պետրոսի: Որ ՚ի մէջ գիշերի
լուացեր զտաս աշակերտացն՝ պատ-
ուական մարմին և զարիւնդ քո
բաշխեալ ՚ի նոսա, զանարժան զքո
ծառայիս լուացես զմեղս, և ըն-
կալեալ հաղորդս մարդասիրապէս

ընդ մեռանելս բաղմել ի սեղան
խորհրդոյ ։ Որ ի մէջ գիշերի վասն
մեր յաղօթս կայր առ Հայր յա-
ռաջ քան զչարչարանս , զանարժան
քո ծառայիս ընկալցիս զաղօթս ի
ժամ գիշերիս ։ Որ ի մէջ գիշերի
բժշկել կամեցար ի պետրոսէ հա-
տեալ զսունկն Մաղքոսի , զանար-
ժան զքո ծառայս բժշկեա՝ զվի-
րաւորեալս յանօրէն Թշնամւոյն ։
Որ ի մէջ գիշերի կալով առաջի
կայսեաիայ՝ դատապարտեցար եւ
ապատակեցար , զանարժան զքո ծա-
ռայս յահապինս քո դատաստանին
մի դատապարտեր ։ Որ ի մէջ գի-
շերի վասն մեր հայեցար ի պետ-
րոս՝ յիշեցուցանելով նմա զյանցա-
նեալս նմա , անարժան քո ծառայիս
շնորհեա զղջումն եւ արտասուս ի
լուացումն մեղաց իմոց ։ Որ ի մէջ
գիշերի կամաւոր խաչեն եւ մահու
ընդ մեռեալս համարեցար եւ ի գինւոյ

որոց պահեցար, անարժան քո ծառայիս ըմանակս հրեշտակաց շնորհեցեր պահապան: Որ ի մէջ գիշերի յարեար ի մեռելոց կամաւ Հօր և սուրբ Հոգւոյն, զանարժան զքո ծառայս որ մեղաս եմ մեռեալ՝ կենդանացուսցես, տէր իմ: Որ ի մէջ գիշերի վասն մեր գալոյ ես միւսանգամ նորոգել զարարածս, զանարժան զքո ծառայս յանուանէ կոչեսցես անապականի նորոգմամբ և նորահրաշ փառօք: Որ ի մէջ գիշերի վասն քո մարդասիրութեանդ զիմաստուն կուսանան ընկալեալ յաւուրս պատարագին, անարժան քո ծառայիս քանց զդուռն դրախտին՝ զառաքեալսն լուսոյ, զի դու. ես, ես, ես և տէր զօրութեանց:

Փրկեա զիս Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ՝ ի բարկութենէն որ գալոցն է։ Որպէս փրկեցեր զԱդամ ի գժոխոցն. որպէս փրկեցեր զՆոյ ի ջրհեղեղէն. որպէս փրկեցեր զԱբրահամ ի հալածչացն. որպէս փրկեցեր զՂովտ ի Սոդոմայեցւոցն. որպէս փրկեցեր զԻսահակ յանհաւատից. որպէս փրկեցեր զՅակովբ ի ձեռաց Եսաւայ. որպէս փրկեցեր զՅովսէփ ի գբին. որպէս փրկեցեր զՄովսէս և զժողովուրդն ի փարաւոնէ. որպէս փրկեցեր զԴաւիթ ի գողիաթայ. որպէս փրկեցեր զեղիա յեզաբելայ. որպէս փրկեցեր զեղիսէէ ի նախատանացն. որպէս փրկեցեր զՅովնան ի փորոյ կիտին. որպէս փրկեցեր զեզեկիա ի հիւանդութենէն. որպէս փրկեցեր զերեմիա

՚ի գբոյ տալմին. որպէս փրկեցեր զՇուշան՚ի ծերոցն. որպէս փրկեցեր զԴանիէլ՚ի բերանոյ առիւծուցն. որպէս փրկեցեր զերիս մանկունան՚ի հնոցին. որպէս փրկեցեր սուրբ զառաքեալն Պօղոս՚ի բազում վշտացն. որպէս փրկեցեր զԹեկղի՚ի հրոյն և՚ի գաղանացն: Որպէս փրկեցեր զնոսա՝ փրկեա և զիս տէր. ողորմեա ինձ Աստուած խաղաղութեան և լոյս աշխարհի՝ փրկիչ սրարածոց:

Վթա տէր՝ և ողորմեա ինձ. կանխեա առ իս և ողորմեա. լուր ձայնի աղօթից իմոց յամենայն ժամ: Ծագեա զլոյս գիտութեան քո՚ի յիմարեալ միտս իմ և՚ի մահկանացու մարմինս իմ: Բարձ յինէն զամօթ նախատանաց թշնամւոյն: Տուր զօգնականութիւն խաչի քո, և կանգնեա յիս զնշան յաղթութեան բազկի քո, զի գոհաս

ցին զբէն սուրբք.քո, և փառա-
աորեցի անուն մեծութեան քո։
Ճապեա յիս զողորմութիւն քո՝ ի
յաղէ սուրբ ընարհայքդ. և բարձ
յինէն զդատապարտութիւն անի-
ծից պարտեաց իմոց՝ ի ձեռն քաղց-
րութեան միրհութեան քո։ Խոնար-
հեցո աչեր՝ զունկն քո և լուր ա-
ղօթից իմոց։ Ողորմեա ինձ տէր՝
զի նեղեալ եմ ես. մխիթարեա զիս
՝ի զօրութիւն անուանդ քո. բե-
ժշկեա զիս ողորմութեամբ քս, զի
դողայ սիրտ իմ և ոսկերք իմ՝ ի
բազմութենէ յանցանաց իմոց։ Ջի
ոչ է իմ փրկիչ, եթէ ոչ դու տէր՝
որ ամենեցուն գաղտնիք յայտնի
են քեզ, չիք ինչ առաջի զօրու-
թեանդ քո՝ ի ծածուկ։

Տէր ամենակալ՝ ունկն դիր
խնդրուածոց իմոց, և լեր իմ ա-
ջեղու. զի պահեսցես՝ ի վշտաց
հեռանք իմ, և տկարացս զօրու-

թիւն իմ, և նուաղեաց լոյս աչաց իմոց. ջեռաւ փոր իմ, և սկիզբք իմ յամաքեցաւ 'ի բազում հոգոց մեզաց իմոց: Մի տար զիս տէր՝ նախատինս դրացեաց իմոց, և ա- տելիք իմ մի այպանեացեն զիս: Մի թողուր զիս տէր՝ վասն ողոր- մութեան քո, և մի մոռանար զիս, զի քեզ ապաստ անձն իմ. զի դու ես յոյս ժառանգութեան իմոց: Ցետս դարձցին հալածիչք իմ ընդ- դունայն, և ատելիք իմ 'ի տարա- պարտուց: Լուսաւորեա զիս տէր՝ և դարձո զերեսս քո յիս: Մերկա- ցո յինէն զխաւարն մոլորութեան, և հաստատեա զիս 'ի կենդանու- թիւն բանի քո: Ռեկ զհպարտու- թիւն թշնամւոյն՝ տէր ամենակալ. խորտակեա զյամառութիւն նորա զի մի կարասցէ փակել զբեր- լուսոյ քո՝ եւ անել լինիմ 'ի ճանապար- հս սրդտութեան:

Խոստմանն քաղցրութիւնք քո տէր, ցօղեա յիս զկանուխն և զանապանն: Հալեա զսառն անհնազանդութեան մտաց իմոց, և բարձ զմէգ թերահաւատութեան ի խորհրդոց իմոց: Ցածո լինէն զուսկս մոլեկանս հարուածոց ցանկութեան, և ցամաքեցո լինէն զաղբիւրն սուտութեան: Հեռի առ քո լինէն զձեռն առեղծութեան, որ անբոյս առնէ զսերմն արդարութեան: Ընդհեա զարեւ քաղցրութեան հոգւոյդ սրբոյ՝ զքաւիչդ իմ և զարարիչդ, և ցօղով շնորհացդ քոց լուա լինէն զամենայն թոյնս վնասակարս: Մշակեա յիս տէր, մշակ բարեբոյր՝ զսերմ արդարութեան քո, և պահեա՛ ինեն զուարթենալ թշնամւոյն, զի մի սերմանեաց ցէ յիս զսերմն չար: Ընդ յարկաւարս զիս՝ ապաւէն իմ և փրկիչ իմ, ի հակառակութենէ թշնամւոյն.

Ողորմեա զնշոյլ ճառագայթիդ ճշմարտութեան քո յիս, և առաջնորդեա ինձ մինչեւ ի քաղաքն սրբոյ: Արժանաւորեա զիս Ատուած իմ՝ հաւատարել ընդ սուրբսն քո. վառաւորել լանուն քո, որ աղբիւրդ ես կենաց և փրկութեան: Բան քո կենդանի լի է ամենայն երանութեամբ. սուր ինձ և լոյս զիս, զի կատարեալ եմ. օգնեա ինձ, զի տկարացեալ եմ: Արա զմեզ արժանի սրբութեամբ ճաշակել ի հոգեւոր օրինացդ, զի եղիցի մեզ պարիսպ յամենայն նեղութենէ թշնամւոյն: Մի՛ տար պերել զտկար վիտս մեր պղտոր խարդախութեամբք իւրովք: Արա մեզ տէր յոյս մեր՝ ի քաղցրութենէ զօրութեան ճշմարտութեան քո, զի ապրեսցուք ի սաստկապոյն ալեաց փորձութեանց աշխարհիս: Տնկեա զմեզ տէր տէր՝

'ի վերայ անախալ հաւատոյ քոյ 'ի մէջ ըս-ոյ գնացից պատուխտանաց քոց : Յաչալեա մեզ տէր՝ 'ի բարի խորհուրդս 'ի տուէ և 'ի գիշերի, զի առանց զբաղման կացցուք 'ի պատրաստութիւն լսոյ քո՝ բարեբար : Եւ բացցես մեզ զդուռն կենդանութեան լսոյ քո արժանի լինել մեզ սիրոյդ քումմ։

Ընդունիմք տէր՝ զբաղցր և ըզգիտաց տէրութիւնդ քո . տուր մեզ 'ի սիրոյդ քումմէ , և յաւել 'ի մեզ 'ի ընտրհայ քոց , զի արժանի եղիցուք լինել պաշտօնեայք կամաց քոց : Բուրեացեն շրթունք մեր պատէս խոսնկ զաղօթս մեր յամենայն ժամ առաջի մեծութեանդ քո : Հաշտեա ընդ մեզ տէր՝ զի բարի ես . և թոդաւորեցո 'ի մեզ գյաղթութիւնս քո , և տուր մեզ զնահատակութիւն քաջութեան խաչիդ քո : Յորպարեա

զմեզ տէր՝ ի սէր քաղցրութեան բանի քո, և հոգեա զձանապարհս առաջի ոտից մերոց: Կարողս արա զմեզ տէր՝ առ կոչումիդ երկնաւոր կատարել ուխտ: Բաց մեզ տէր՝ զդուռն հարանեաց քոց, և զարդարեա ի զարդ սրբութեան հոգեւոր պատմուճանիդ՝ և վայելուչ պայծառութեան կենդանի գեղոյդ պատուիրանաց քոց:

Օ քեզ աղաչեմք տէր Աստուած մեր՝ յոյս փրկութեան մերոյ, զքէն գոհանամք բերանովք մերովք՝ տալ փառս և խոստովանութիւն և երկրպագութիւն Աստուածութեանդ քում: Առաւօտս մեծ աւետեանն առաւօտուց և լուսատուս ամենայն լուսաւորաց՝ ծագեա ի մեզ զլոյս ճշմարտութեան քո. ի քաց արա ի մէնջ զմէգն և զխաւարն սատանայական գիշերոյ, զի մի կուրացուսցէ զտեսիլս խորհր-

դոյ մերոյ. կանխեա առ մեզ ըզ
լոյս քո պիտուԹեան, զի գնասցուք
ի ճանապարհս քո ուղիղս: Յոյս
մեր և փրկիչ՝ քոյ մեզ զգուշան
լուսոյ քո, և արժանի արա փառա-
ւորել զքեզ ի ձայն ցնծուԹեան:

Սոյնն ալօԹք իմ առաջի քո՝
տէր, մի դարձուցաներ ի միջ
զերեսս քո վասն մեզաց մերոց,
փրկիչ հոգւոց մերոց և դարձու-
ցիչ մաքրուԹեանց մերոց: Ընկալ
զմեզ տէր բարեբար, և խնեա զիսոչ
ջարին առաջի ոտից մերոց, և բարձ
զպատկառուԹիւն նորա ի գնա-
ցից մերոց: Թագաւոր մեր և Ա-
ստուած՝ Ծոլ մեզ զմեզս մեր և ե-
գիտացիս, զի դու ես քաւիչ մեր:
Ելից զմեզ Փրկիչ՝ սրբուԹեամբ
հոգւոյդ սրբոյ բարեբարի, զի դա
է հաշտեցուցիչ մեր ընդ կամս քո,
և փառաւորեսցի անուն քո սուրբ:
Ցաւ մեզ տէր՝ սկսա նոր և հոգի

նորոգ, և լից սիրով քով սրբով։ Բայց տէր՝ Հոգւոյն քաղցր անձրեւաց քոց, և յորդեացես ընդ ակօս անկանջաց մերոց, զի պտուղս ցին բոյսք սերման քո սրբոյ ի մեզ, որ արժանի արարեր զանարժանս լինել մեր կարդալ զանուն քո սուրբ։

Ցանգեա տէր՝ և ամրացո զաճեռնայն խրամատուն լինել հնամեայն, զի մի ճանաչել արասցէ ընդպատուղ կենդանութեան մուտք մերոց, և զիւղիսիք յօրհնութենէդ քումմէ։ Զի չէք որ նման քեզ տէր՝ ի սուրբս, և բարերար և պարգեւատու կարօտելոց և ի բաւարար զրկելոց։ Արծարծեա ի նուաղեալ յանձինս մեր զլոյս աստուածութեանդ քո, և օդն չարութեան մի չնչեսցէ ի լոյս հաւատոց մերոց, այլ ամաչեցեալ դարձցի յետս։ Մի կարօտ առնեք

զմեզ ՚ի քո ընդհացդ՝ Աստուած մեր, զի չկաք ոք որ մխիթարէ զմեզ, և ոչ ոք է որ օգնէ, բայց զքեզ քո տուրբ՝ որ բացիչդ ես փակելոց, և արձակիչդ ես կապելոց, անդորրիչ նեղելոց, տուիչ կարօտելոց, մխիթարիչ սգաւորաց, բժիշկ ախտացելոց, գտիչ կորուսելոց, քաւիչ յանցուցեալոց և թողիչ մեղաց: Դու ես շտեմարան բարութեճ ՚ի յերկինս և ՚ի յերկրի:

Աղաչեմ զքաղցրութիւնդ քո տէր՝ մի արկեր ՚ի մէնջ զողորմութիւն քո վասն բազում յանցանաց մերոց, այլ բաց մեզ տէր զի մտցուք, և տուր մեզ՝ զի առցուք: Վասն քո տուրբ անուանդ մի յամօթ առներ զմեզ, և մի բարկանար մեզ տէր, և մի յիշեր զանօրէնութիւնս մեր և զչարիսղոր գործեցաք: Կամեաց տէր, զի կեցցուք, և ողորմեաց, զի ապ-

րեացուք : Ներեա մեզ տէր՝ զի ե-
կեացուք ՚ի գիտուԹիւն ճշմար-
տուԹեան , և մի պահանջեր զմեզ
ըստ մերում չարուԹեանս . այլ
տուր ձեռն օգնականուԹեան , զի
մի ունհար լցցին Թշնամիք մեր ՚ի
վրիպել զմեզ ՚ի փրկուԹենէ քումմէ : Կանգնեա տէր՝ զգլորումն մեր
և մի տար զմեզ ՚ի նախատինս դը-
րացեաց մերոց : Զի Թէպէտ և
մեղաք, սակայն դու բարերար փրը-
կիչ Աստուած՝ մի անտես առներ ,
այլ գԹա ՚ի մեզ և առաջնորդեա
մեզ ՚ի նաւահանգիստ խաղաղու-
Թեան քո , և հաստատեա ՚ի մեզ
՚ի վերայ հինուԹեան ՚ի կարգս ար-
դարուԹեան : Խափանեա տէր՝
զԹշուառացուցիչս մեր , և հալա-
ծիչք մեր դարձցին յետս իւրեանց,
և մեք հասցուք ՚ի քաղցրուԹիւն
օԹեվանաց պատուիրանացդ՝ որ յա-
ւիտեան ժամ գոհանալ գքէն , և

փառս տալ անուանդ քումմարդոյ։

Տէր փրկիչ և Աստուած քաղցումդարմ, ողորմեա տէր՝ և մի թողուր զիս վասն անուանդ քումմարդոյ։ Տէր գիտութեան և Աստուած ամենայն իմաստութեան, տուր մեզ տէր՝ զքո գիտութիւնդ և զքո կատարեալ իմաստութիւնդ զի գաստատայուք ՚ի ճշմարիտ մտքութեանդ, այնմ՝ որ եհան զմեզ ՚ի դրախտէն վայելուչութեան, և մերժեաց զմեզ ՚ի գիտութենէ սիրոյ քո կենդանութեան։ Հայեցի տէր՝ առն ողորմութեան քո ՚ի ցաւսդին վիշտս մեր առ ՚ի բժշկել զմեզ յանհնարին տրտմութենէս, որ խառնեալ ունի բազում խառնուածութիւնս։

Հաշտեա տէր՝ ընդ մեզ վասն մեծապէս անուանդ քո, և ողորմեա մեզ տկարութեանս։ Խաղաղութիւն ՚ի մէնջ տէր՝ զիշխանակալ

խորհուրդս և զձայնս՝ որ հեռի
են ի քաղցրութենէդ քոյ մէ ։
Տէր դիմաց՝ մի թողուր զմեզ ի
սպառ, զի քո եմք ստեղծուածք ։
և մի բարկանար մեզ, զի դու զը-
մաճ ես և մարդասէր ։ Յիշեա
տէր՝ զուխտն որ ընդ սիրելին քո,
և բարձ ի մէնջ զվտաւարն ափշու-
թեան Թանձրամած ստուերին կա-
րասեան, որ ընկղմէն զմիտս զդաս-
տուածեան մերոյ, և վարատէն ի
քո խնամոյդ ։ Տուր մեզ տէր՝ ըզ-
լոյս քո կենդանարար զսուրբ և ըզ-
խաղաղարար ի պահպանութիւն
և ի արքունիսն մտաց մերոց ։
Վասն բարեխօսութեան հրեշտա-
կաց քոց ընկալ զաղաչանս մեր ։ և
արժանաւորեա դասիլ ընդ նոսին՝
օրհնել և փառաւորել զքեզ ան-
դադար ձայնիւս ։ Յիշեա և զիմ
նուաստութիւնս, և նայեա ի
խղճուածս իմ ։ և լուր ձայնի պա-

զատանայց մերոյ, որպէս ուսուցեր՝ եթէ յաղօթս կացէք և մի՛ ձանձրանայք: Եւ դարձեալ՝ թէ յաղօթս կայջիք, զի մի՛ մտջիք ՚ի փորձութիւն: Դարձեալ հրամայեցեր՝ եթէ չիք ինչ զոր խընդրիցէք Աստուծոյ, եթէ ոչ տացէ ձեզ:

Ընդ այժմ մեք տեր՝ ոչ վասն հաճութեան գործոյ մերոյ կամ յարդարութիւնս մեր ապաստան լեալ աղաչեմք զքեզ, այլ վասն ողորմութեան և մարդասիրութեանդ, զի քաղցր ես և բարերար, և մեք իբրեւ զպարտականս և զմեծամեղս կամք առաջի քո: Դու իբրեւ զհայր դթած, իբրեւ զտէր քաղցր՝ լու՛ր աղօթից մերոց, զի զարթիցեն զգայութիւնք մեր լինել համարձակ: Բայց զանկնդս մեր լսել զձայն պատգամաց քոց, և բացցին աչք սրտից մերոց հայել

առ քեզ ՚ի բարձունս : Լսեր աղօ-
թից մերոց և ընկալ զխնդրուածս
մեր և արա զկամս մեր . լսեր ձայ-
նի աղօթից իմոց . խնայեա ՚ի ժո-
ղովուրդս քո ՚ի ժամանակի նեղու-
թեան , և փութա առնել զթող-
թիւն քո : Մի բարկութեամբ քով
խրատեր զմեզ , և մի սրտմտու-
թեամբ քո ակն յանդիման առ-
ներ զմեզ . զի ժողովուրդ քոյ եմք ,
և ձեռակերտք ձեռաց քոց , և ըս-
տեղծուած մատանց քոց : Ի քո
պատկեր հաստատեցեր զմեզ , և
հոգի առ ՚ի քէն փչեցեր ՚ի մեզ .
մի յաւելուստեան բարկանար մեզ , և
մի ՚ի բացէ առնիր ՚ի ծառայից քոց :
Մինչ մոլորեալք էաք՝ դարձուցեր
զմեզ , ջարչարեալք՝ և փրկեցեր ,
ցրուեալք՝ և ժողովեցեր , խաւա-
րեալք՝ և լուսաւորեցեր , արգե-
լեալք՝ և հաներ յանդորր , կապ-
եալք՝ և արձակեցեր ՚ի կապանաց .

անյոյսք էաք, և կոչեցեր զմեզ ՚ի յոյս քո. մեզաւոր էաք, և կամեցար զի արդարացուսցէ. ոչ խնդրեցաք՝ և գեկոյր առ մեզ, և առեալ քեամբ քո փրկեցեր զմեզ, և ՚ի ձեռն քո ծանեաք մեք զմեզ. ոչ ձանձրացուսքաք մեք զքեզ խնդրեսածովք, և իջեր ՚ի դժոխան. մեք հանապատ բարկացուցանեմք զքեզ, և դու եկեր վասն մեր յաւնարգանս. անչափ էին անօրէնութիւնք մեր առաջի քո, և փրկեցեր զմեզ ջարչարանօք քովք: Եւ այժմ աղաչեմք զքեզ՝ տէր և Աստուած մեր, երկիւղածանեմք և զոհանամք զքէն, և փառաւորեմք զողորմութիւն քո: Ի ձեռն սիրելի որդւոյ քո լուր աղօթից մերոց, և ընկալ զխնդրուածս մեր. տես զնախատինս մեր, նայեա ՚ի տառապանս մեր, և զմեղսն սիրոյ քո ՚ի ժողովուրդ քո՝ որ մաոնե-

ցաւ յաւար և յափշտակութիւն ։

Հայեա և՛ի տուրբ տաճարս քո՝ որ աւերեցաւ, և՛ի սեղան քո՝ որ կործանեցաւ, և՛ի քահանայս քո՝ որ կաւորեցան, և յուխտս քո՝ որ ցրուեցան, և՛ի կուսակարանս քո՝ որ ինքեցան՝ ի ցրուումն և՛ի յաւարաւմն ։ Յաճախեաց ամօթ մեր, ցրուեցաւ ժողովուրդ քո, հեղաւ իբրեւ զջուր ուխտ քո տուրբ ։ Խնդ նայեա՛ ի մեզ տէր՝ զի մատնեցաք՝ ի նախատինս և՛ ի չարչարանս և յամօթ ։ Առ ի՛ւ աղաղակեսցուք, զի լուիցէ աղօթից մերոց, առ ի՛ւ երթիցուք, զի ահա ծառայ քոյ եմք ։ Խրատեցեր զմեզ բարկութեամբ, որպա առ մեզ զողորմութիւն քո ։ Կեղեցան կեանք մեր, մի յապաղեր՝ զի մի վհատիցիմք ։ Մի երկայնամիտ լինիր՝ ի նեղութիւն նա մեր և՛ ի տառապանս, որպէս աղաչեաց զքեզ մարգարէն քո՝ ար

նեղեալն էր իբրեւ զմեզ և ասէր. մի՛ խրատեր զմեզ երկայնամտու-
թեամբ: Լուր աղօթից մերոց, որ-
պէս լսար Մովսէսի սիրելւոյ քո. և մի՛ առցեն վրէժս թշնամիք մեր
իբրեւ զփարաւոն, որ նեղեաց զըմ-
ժողովուրդ քո: Ընկալ զխնդրուա-
ծըս մեր, որպէս ընկալար զխնդրը-
ուածս Յեսուայ որդւոյ Նաւեայ,
և աստակեցար Ամաղէկ և բարձաւ
յիշատակ նորա:

Դու ես Աստուած առաջնոցն,
և տէր և Թագաւոր վերջնոցս:
Լսեար Մովսէսի, և ընկղմեցեր զը-
փարաւոն. լսեար Ահարոնի, և ար-
գելեր մահ բարկութեան: Դար-
ձուցեր զցասումն բարկութեան
քո՝ի ձեռն նախանձախնդրին քո
Փենեհէսի. օգնեցեր Յեսուայ, և
յամօթ եղեն թշնամիք նորա: Լը-
սեար Սամփսոնի՝ի ժամանակի նե-
ղութեան, և խնդրեցեր զվրէժս

յայլազգեացն՝ որք բարկացուցին զքեզ։ Առեր և զվրէժն Դաւթի ՚ի Սաուղայ՝ որ հալածէր զնա, և հաներ նմա իրաւունս Աքիտոփելի մայ՝ որ խառնվեցոյցն զնա։ Քաւեաց զժողովուրդն քո Սամուէլ առաջի քո, և ցուցեր զմեծութիւն քո, փոխանակ զի անարգեցին զթագաւորութիւն քո։ Արարեր իրաւունս ելիայի հալածականի, և սատակեցեր յաղագս նորա զմարգարէսն Բահաղու։ Պահեցաւ Մկբիէ բաղում ողորմութեամբ քո, և անկաւ կործանեցաւ սատակեցաւ հալածիչն իւր ՚ի պատերազմի։ Ցուցեր զքաջանչելիս քո ՚ի հալածիչն ելիսէի ՚ի ժամանակի իբրեւ մտին ՚ի շիրմին՝ տեսին զմեծութիւն քո։ Լսաւ եղեկիայի ՚ի ժամանակի իբրեւ արգելեալ պաշարեալ կայր ՚ի նեղութեան, և ցուցեր զօրութիւն քո ՚ի Սենեքարիմ և

'ի զօրս նորա : Լսեալ Եսայեայ և օգնեցեր Յովսաթեայ , և խընդրեցեր զվէժս նեզբայ նոցա : Լսեալ Յովհանու 'ի խորոց անդնդոց ծովուն 'ի փորոյ ձկանն և ալեացն որ պաշարեցին զնա : Լսեալ Դանիէլի 'ի ժամանակի իբրեւ ընկեցին զնա 'ի գուբն , և առիւծուցն : Օգնեցեր Անանիայի և ընկերոյց նորա 'ի հնոցի հրոյն , և եկեր քո զգեստ բոլբոքեալ զբարեհաճս նոցա : Լսեալ Մուրթքեի և Եսթերայ 'ի նեղութեան իւրեանց , փրկեցեր զժողովուրդ քո , և յաղթող եղեւ Համան հալածիչն : Հաներ զԵրեմիա 'ի գբոյ տղմոյն , և եղեւ ընդ նա 'ի հնարհս և յողորմութենէն ա-

ռաջի տէրոյն Բաբելացւոց :

Խնայեա տէր 'ի ժողովուրդս քո՝ որ չարչարեցաւ . խնայեա տէր և լաւ տղօթից իմոց , զի տաճար սըր-

բուծեան աւարեցաւ, և տեղին
քաւութեան պատարագայ կոր-
ծանեցաւ: Քահանայք մեր կատա-
րեցան, և ձորձ ՚ի դլուխ եղեն
կսկանք մեր: Խնայեա ՚ի մեզ՝
տէր մեր, խնայեա յաղքատս և ՚ի
տնանկս և ՚ի տառապեալս, զի չինք
տեղի հանգստեան, ուր դիցեն
զդլուխ խրեանց: Ճանապարհք
մեր թախտ եղեն, և շաւիղք մեր
անհետք, աչք մեր խաւարեցան,
և սիրտք մեր մաշեցան: Լուր տղո-
թից մերոց և ընկալ զխնդրուածս
մեր: Եւ թէ մեք անօրինեցաք և
դառնացուցաք զքեզ, դու տէր
ըստ մեծի ողորմութեդ խնայեա ՚ի
մեզ: Զի՞նչ մեր օգուտ յայս և ոչ տուն
տպաւինի և հանգստեան տեղի
քան զքեզ արտաքոյ, զի քոյ են
երկինք և քոյ է երկիր, քոյ է ծով
և քոյ է դիշեր, զարեգակն և զլու-
սինն դու հաստատեցեր: Զքեզ

փառաւորեն ծովք ալեօք իւրեանց, և եղեր նոցա սահման և ոչ ելա-նեն ընդ հրամանս քո : Կապեալ կայ ծով աւազով և կատարէ զկը-րամանս քո : Քեզ հայեցեալ սպա-սեն ամենայն բնութիւնք, և ձե-ռըն քո բաւական է ամենայն ա-րարածոց քոց . և չիք ինչ՝ որ կա-րէ հակառակ կալ կամաց քոց : Քո են լուսաւորք երկնից, և հուրք և մրրիկ զանուն քո փառաւորեն : Քեզ հայեցեալ սպասեն գազանք անասնոյ, թռչունք երկնից եւ ձկունք ծովուն . Արի օգնել մեզ մեծաւոր զօրութեամբ քո , զի ծա-նիցեն ամենայն ազգք երկրի , զի չիք իբրեւ զքեզ, և չիք այլ աստ-ուած բայց ՚ի քէն : Ասաց փարա-ւոն՝ ոմն Աստուած . և ընկղմե-ցեր վնաս իբրեւ ըզպատերազմող՚ի ծովն ահագին: Համարեցաւ զքեզ Սենեքարիմ իբրեւ զդիան հեթա-

նոսաց, և արարեր զնա առակ նը-
շաւակի, զի ցուցեր նմա զմեծու-
թիւն քո։ Օգնեցեր Մատաթիայի
որ եղեւ քինանախանձու օրինաց
քոց։ Լսեար Յուդայի և Ջմաւոնի
և եղբարց նորա, և օգնեցեր նոցա
սքանչելեօք ի մարտս պատերազ-
մաց՝ զոր արարեր ի ձեռն նոցա։

Օ՛տարիցեն գթութիւնք քո՝
տէր. թող զմեսացուածս ժողովըր-
դեան քո՝ որ մատնեցաւ յաւար.
արա նորոգութիւն տաճարի քո յա-
ւուրս մեր. քարձրացո զպլուխս
մեր՝ որ կորացան յաւուրս մեր ի
մեղս մեր. ընկալ զպատարագս ժո-
ղովրդեան քո, և քաղցրացին քեզ
աղօթքս մեր։ Բացցին դրունք փա-
կեալք, և կանգնեացին դրունք կո-
ծանեալք։ Ժողովեցի ժողովուրդք
ցրուեալք, և ուրախ եղիցուք ի
նորոգութիւն տաճարի քո յաւու-
րըս մեր։ Գոչեցէք առաջի քո ա-

ըրեն արդարոցն, և եղիցի քեզ ՚ի հաճութիւն իբրեւ զբուրվառս ննիկոց ։ Խնայեա տէր՚ի ժողովուրդս քո և ՚ի տուրբ ուխտ քո՝ որ անկաւ ՚ի ձեռս անօրինաց, և ոտն հարին ՚ի վերայ բեհեմանս մերոյ ։ Սակայ իսկ եւ՝ թագաւոր մեր, ցուցանել զիմաստութիւն քո ՚ի մեզ. և սակայ իսկ են ծառայք ընդրել հանապազ յողորմութեանց քոց ։ Ի քաղցրութիւն մարդասիրութեան ընդ ապաւինեալ աղաչեմք զքեզ, զի և ՚ի չարաց ոչ սրտիլս զքո բերարութիւն քո ։ Ծագեա զարեգական ՚ի վերայ չարաց և բարեաց, և աճեա անձրեւ ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց ։ Քանզի հանապազ պատ պիտեմք, եթէ սակայ իսկ ես ընել ներելոյ. օդնեցեր հալածականաց, զօրացուցեր զսկարս, բարձրացուցեր զխոնարհս, ապրեցուցեր զչարչարեալս, վրկեցեր զյա-

փշտակեալս. լուսաւորեցեր զխաւարեալս, լցուցեր զքաղցեալս, մեծացուցեր զաղքատս, կանգնեցեր զտնանկս: Զայս ամենայն արարեր յամենայն դարս ծառայից քոց՝ որք յուսացան ի քեզ: Դու ես որ ցուցեր մեզ՝ թէ ես եմ առաջին և ես եմ յետոյ: Դու ես Աստուած առաջնոյն և թագաւոր վերջնոցս. քոյ է աշխարհ, և քոյ է աշխարհն երկինք և ամենայն որ ինչ եղեւն և որ լինելոյն է առ յետոյ: Առ ի՛ւր երթիցուք, զի լուիցէ մեզ. ո՛ւմ հայեսցուք, զի եկեսցէ օգնական ինեւթիւն. ո՛ւմ ակն կալցուք, զի փրկեսցէ զմեզ. առ ի՛ւր աղաղակեսցուք, զի ընկալցի զաղօթս մեր: Քոյ եմք, և դու ես Աստուած մեր, և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղաչեմ զքեզ՝ Քրիստոս փըր-
կիչ աշխարհի, նայեա յիս և ողոր-
մեա ինձ. փրկեա զիս ՚ի բազմու-
թենէ անօրէնութեանց իմոց, քան-
զի անարգեցի զամենայն զբարիս
զոր արարեր յիս ՚ի մանկութենէ
իմմէ։ Զիս զոհամար և զանմիտ՝
արարեր անօթ ի գիտութեամբ և
իմաստութեամբ։ Յաճախեա յիս
զչնորհս քո. լո զքաղց իմ, և ըզ-
ծարաւ իմ զովացո, և լուսաւորեա
զխաւարեալ միտս իմ, և ժողովեա
՚ի մըտաւթենէ զխորհուրդս իմ։
Եւ այժմ երկիր պագանեմ և աղա-
չեմ, անկանիմ և հայցեմ խոստո-
վանելով քու՛մ բարերարութեանդ.
դադարեցո յիս զհոսանս չնորհի քո
և պահեա ինձ զնա ՚ի գանձի քումմ,
զի դարձեալ տացես ինձ զնա յա-
ւուր յայնմիկ։ Մի բարկանար ինձ

մարդասէր, զի ոչ հանդուրժեմ
սպառնալեաց քո։ Ցաղագս այսո-
րիկ աղաչեմ ժառելով, զի առաւել
քան զչափ յամախեաց չիս. վասն զի
լեզու իմ տկարացաւ՝ ոչ կարելով
խօսել զընտրհեդ քումմէ։ Հիացան
և միտք իմ՝ ոչ բերելով զբազմու-
թիւն ալեաց նորա։ Կերպարան և
ձառագայթ օրհնելոյ՝ հօր, դադա-
րեցո ասա՝ ի չիս՝ ի հոսանաց նորա,
զի խբիւ զհուր բոցակիզեսցէ զե-
րիկամունս և զսիրտ իմ. արդ դար-
ձեալ պարգեւեա ինձ զնա, և կե-
ցո զիս յարբքայութեան քումմ։ Մի
տիշեր զանօրէնութիւնս իմ. յան-
դգնիմ հայցեմ, առ ինձ զխընդ-
րուածս իմ. ծածկեա զանօրէնու-
թիւնս իմ յամենայն գիտութենէդ
քումմէ. ընկալ զաղաւաւս. մեր-
ձեցի առ քեզ ողբումն իմ. տիշեա
զաղաւաւս իմ զոր արտասուեցի
առաջի սրբոց վկայից քոց, զի գը-

Թասցիս յիս յաւուր յայնմիկ, և ծանկեսցես ընդ հովանեաւ թե-
ւոց ընտրհի քո. զանգի թէ արաս-
ցես ինձ ըստ անօրէնութեան իմոյ,
եղուկ ես թշուառականս՝ զինչ ինձ
լինիցի. Իակ ես լալով և արտաս-
ուօք պաղատիմ քումմարդասի-
րութեանդ, փրկեա զիս ի բազ-
մութենէ անօրէնութեանց իմոց,
և պարգեւեա ինձ զարքայութիւնդ
քո. յիս ի մեզաւորս ցոյց զանճառ
քո մարդասիրութիւնդ. արա զիս
հաղորդ աւազակին, այնմ՝ որ մի-
ով բանիւ ժառանգորդ եղեւ դր-
ախտին. զոր կատարելոց է խոս-
տացեալն, անդր զիս մուծցես.
փառք հօր Աստուծոյն մերում, և
Որդւոյ փրկչին մերոյ, և Հոգւոյն
սրբոյ նորոգողին մերում յանապատ
և յանեղծանելի յաւիտեան.

Աղօթք նորին գործեալ։

Տէր Աստուած զօրութեանց՝ աղաչեմ զքո բարերարութիւնդ, ժառեմ և հայցեմ ի քէն, տուր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին՝ ապրել ինձ ի հրեղէն ծովէն և յանդնդային հրահոսանացն, յանշէջ արգելանէն և յանհնարին վտանգից։ Զի դու ես տէր Աստուած՝ որ զքանդ աստուածային ծածկեցեր և ի ծառայական կերպս իջեր վասն մեր, և զնեղն ի քիմառեր, և ապրսակ ի ծնօտս ընկալեր։ Եւ այժմ աղաչեմ զքեզ ազատեա զիս ի դառն ծառայութենէ աստանային. զի յորժամ զձեռս իմ ի վեր ունելով աղօթեմ, անօրէնն աստանայ խաբէ և ունայն հանէ զիս յաղօթից իմոց։ Լեր ինձ Աստուած՝ բերդ ամուր և աշտարակ հզօր, և կորզեա զիս ի բերանոյ

աւիւծոյն՝ որ հանապազ կամի կը-
լանել ղնա . ղնդ ընդ պիտանին ՚ի
բարձունս փառաւորեցից ղՀայր
և ղՈրդի և ղսուրբ Հոգիդ , այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն :

. Աղօթք ղօրաւոր՝ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ

ԲԱՆ ՁԹ .

Ցառուած և տէր . կեանք և
արարիչ . ողորմած . գթած . լոյս .
երկայնամիտ . անսահակալ . մարդա-
սէր . ամենապուճ . պարգեւատու .
փրկիչ . օրհնեալ . գովեալ . բարե-
բանեալ : Դարման ամրութեան .
պատսպարան վստահութեան . ա-
ռանց նենգութեան բարի . առանց
խաբարի Հաստատչի . քաւիչ մե-

ղաց. ողջացուցիչ վերաց. անհա-
սանելեաց հնարք. անմատչելեաց
հպատար. անյուսութեան ելք. ա-
նուն քո խոստովանեալ՝ Աստուծոյ
Որդի, և հօր քո ընդ քեզ հզօրի և
ահաւորի, և հոգւոյդ ամենակալի՝
և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք
և պաշտօն գոհաբանութեան յա-
ւիտեանս. ամէն։





Յարիցն Աստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա ։



Աղօթք

ի վերայ իւրաքանչիւր

Աւուրց շաբաթոյ

եւ նախ

կիրակի Աւուր

սաղմոս ապաշխարութեան

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։
Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչեւ յե՞րբ։

Դարձ տեր և փրկեա զանձն իմ. կեցո զիս տեր ըստ ողորմութեան քումմ:

Ո՛չ ոք է որ՝ի մահու յիշէ զքեզ, կամ՝ի դժոզս խոստովանի առնի առ քեզ:

Վաստակեցայ ես՝ի հեծութեան իմմ. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ՝ի սրտմտութենէ աչն իմ. և մաշեցայ ես՝ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, զի լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր զինդրուածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին:

Այր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. Թող լինձ վեղս իմ և ողորմեա։

Տէր՝ որ գթացար ի կինն գանանացի, գթա և յիս ի մեղաւորս և ողորմեա։

Տէր՝ որ դարձուցեր զմաքսաւորն ի գիտութիւն ճշմարտութեան, դարձո և զիս զմոլորեալս և ողորմեա։

Աստուած բազումողորմ՝ որ նայեաց յարտարածս քո, հայր ամենակալ և ողորմեա։

Արեգակն արդարութեան՝ ծագեա ի հոգիս մեր զլոյս ճշմարտութեան և ողորմեա։

Տուր մեզ տէր զնաղաղութիւն, և փրկեա ի նեղչաց մերոց՝ հոգիդ ճշմարտութեան և ողորմեա։

Ի նեղութեան իմում օգնեա ինձ տէր՝ որպէս երբեմն Յովնանու և ողորմեա ։

Ի յանցանաց իմոց մաքրեա զիս տէր՝ որպէս երբեմն զմաքսաւորն և ողորմեա ։

Ի նենգաւոր շրթանց փրկեա զիս տէր՝ և յարենէ սպրեցո և ողորմեա ։

Ո՛ղջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո Քրիստոս, Թող ինձ զմեղս իմ որպէս երբեմն զպառնկին, որ մխայնդ ես բաղմագութ։ Անկանիմ առաջի քո Քրիստոս, որ հոլիւդ ես բանաւոր հօտի, լանդրեա և զիս զմոլորեալս, որ մխայնդ ես բաղմագութ ։

Զմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս, որ բժիշկդ ես հոգւոց և տէր կենաց, բժշկեա և զիմ վհիւանդութիւնս, որ մխայնդ ես բաղմագութ։

Ա՛ռանդիմ՝ի բաղմութենէ մե-

ղաց իմոց. Աստուած խաղաղու-
թեան օգնեա ինձ:
Ակնկոծիմ հոգմով անօրէնութեան
իմոյ. Թագաւոր խաղաղութեան
օգնեա ինձ:
Ի խորս մեղաց ծովու տարաբե-
րեալ ծփիմ. նաւապետ բարի՛ փրկ-
կեա զիս:
Թիւնս իմ. Ողորմեա ինձ Աս-
տուած:
Ի լսել զձայն փողոյն յահագին ա-
ւուրն՝ յորժամ հարկանէ հրեշտա-
կապետն և կոչէ՛ ի դատաստան,
ողորմեա ինձ Աստուած:
Ի նստիլ քո յաւուրն դատաւոր ա-
հեղ՝ յորժամ առնես հրաժարմու-
թեամբ զքննութի՛ որդւոց մարդ-
կան, ողորմեա ինձ Աստուած:
Որ առ՛ի՛քեն երկրորդ Ադամ
վան առաջնոյն յանցանաց բնու-
թեամբ մերոյ՛ պահելով զմահա-
բեր պտղոյն լուծեալ զպատրանս,

առ նա միշտ բարեխօսեա կեցու-
ցանել զմեզ ։

փառ հօր և որդւոյ ։

Արդ աղաչեա մայր Աստուծոյ ըզ-
ծնեալն ի քէն վասն մեր , զի ընդ-
նմին պահեսցուք սուրբ յարութեամբ
նորա նորոգեացսաք . առ նա միշտ
բարեխօսեա կեցուցանել զմեզ ։

Ամէն և հրէշտ և յաւիտեան ։

Իմիւսանգամ գալստեան Աստուած-
որդւոյն սուրբ խաչն երեւի և լու-
սաւորէ , զի նա է յոյս հաւատա-
ցելոց ։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

ԲԱՆ ԾԷ ։

Ա . Քրիստոս աստուած՝ ա-
նուն ահաւոր . մեծութեան տե-
սակ. անքննին բարձրութեան պատ-

կեր. անսահման զօրութիւն. կեր-
պարան վրկութեան լուսոյ. պաշտ-
պան կենաց. դուռն արքայութե-
վերնումն հանդստեան. ձանապարհ
հանդարտութեան. ապաւինութի
նորոգ և անախտական երանութե.
ամենակալ ինքնիշխանութիւն բո-
լոր էականութեան. օրհնութեան
կոչումն. աւետեաց ձայն. բերկ-
րութեան բարբառ. անմահու-
թեան ղեղ. որդի անճառ Աստու-
ծոյ միոյ: Որ ինձ անհնարին է,
քեզ դիւրին է. որ ինձ անհաս
է, քեզ ահմանեալ է. որ ինձ ա-
նանցն է, քեզ հպատուր է. որ ել
կելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ
երանութեան մերձաւոր է. որ ինձ
անկարելին է, քեզ կատարեալ է.
որ ինձ անկշռելին է, քումդ ան-
ճառութեան չափեալ է. որ ինձ
յուսահատութեանն է, քեզ լա-
փոխանակ է. որ ինձ անբժշկա-

կանն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանուկք են, քեզ թեթեւապոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան պրեպեալ է. որ ինձ կորսւսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անձառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է, որ ինձ անթիւն է, օրհնեալդ քումդ ձեռնին բռնադակեալ է. որ ինձ ատելին է, քեզ հեշտալի է. որ ինձ վախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էականութեան զօրութիւն՝ ընդ ոչ գոյն համարեալ է:

Բ. Այլ դու ողորմած Աստուած բոլորից՝ աւր Յիսուս Քրիստոս, և այսմ զօրես առ ելից հնար՝ եթէ գթասիրս վանանուան փառացմանդ Հօր քոյ օրհնելոյ, վանն

կամաց գԹուԹՁ ոգւոյդ քո սրբոյ. տես ՚ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնուԹիւն, և ՚ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազուԹիւն. նայեա ՚ի բնուԹեանս մեծապատառ խաւուԹիւն, և պարզ գեւեա բժշկուԹիւն վիրացս, և հնարաւորուԹիւն կոխտեանս, զերծուիս բազմամանեայ մահուս և շաւիղ կենաց ապականելոյս. նորոգուԹիւն եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս: ԵԹէ ես զանձնմանն ինձ կամ ցուցի, ոչՀապ առաւել դու զնաւորականդ քո զնաւանի բարերարուԹիւնդ. և ԹէՀ ՚ի վշոյ պատուղ ընծայեցաւ քաղցրուԹեան, ոչՀապ առաւել ՚ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահուԹեան. ԵԹէ ես իմոյ առելեաց ապրմանուԹիւն մաղԹեցի, դու քոյոյս զինչդ ոչ կրկին մատուցես հզօր՝ յանուանդ առաւուԹենէ:

գ. Ընդ՝ տես ՚ի քոյդ մեծութիւն՝ բարձրեալ, նայեցեալ ՚ի յիմս փոքրկութիւն. ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես. և որպէս զվիմին գթել՝ ոչ պրեցեր, և զսաւազոյս փոքրութեան՝ մի համարեցեր. և իբրեւ զդաւթին ընդ մեզն ասել՝ խակին անոյսցեր զպատիժ պարտուցն, և առ իմ՝ ձայնիս հեծութիւն՝ զնոյն գործեացես երկայնմտութիւն. որ տաս ամենեցուն առատապէս անաչառութեամբ՝ որպէս յաղթող բարի բազմիմաստ. և ոչ նախատես զյետնեալ ստրուկսն՝ որպէս ողորմած և ամենալսող. տեղ. սաստիկ վերատին, և մի կորուսաներ զբուժեալս արեամբ քո, և զբուծեալս տեառնէ քո՝ զքեզ Թագաւոր: Զի քո է փրկութիւն, և ՚ի քէն է քաւութիւն, և քեզ վա-

յել է փառք յամենայնի յաւիտեան . ամէն :

Աղօթք առ Հայր երկնաւոր , ցաւհաննոյ գառնեցեալ :

Յաւիտենից Աստուած և արարիչ բոլորից , որ ամենակարող զօրութեամբ քով ՚ի սկզբանէ արարեր զերկինս և զերկիր . յայսմ աւուր գոյացուցեր զլոյս հրամանաւքով , և որոշեցեր զլոյսն ՚ի խաւարէն :

Ահա խաւարեալ ազգի ազգի անօրէնութեամբ , աղաչեմ զքեզ տէր իմ Աստուած իմ՝ բարերար և բազումողորմ , ծագեա առ հա զողորմութեան զլոյս քո . և մերժեա ինձ զխաւարային խորհուրդս չարին , որով անկեալ կործա-

նեցայ յանդունդս կորստեան, և
կամ՝ ի տարակուսի։

Որ ամենայնի կարող ես և. հզօր՝
լոյս անստուեր, աղբիւր անսպառ
բարեաց, կենդանութեան պար-
գեւատու, ցոլացո յիս զփայլուձն
արքայական ընտրհաց Հոգւոյդ քո
սրբոյ. և մաքրեա զսիրտ իմ և լըց-
հոգի՝ ի մխութենէ մեղաց իմոց և
յամենայն աղտեղութենէ, որով
չկացեալ ոչ կարեմ հայիլ՝ ի լոյս
աստուածային պատուիրանացդ քոց
և գնալ՝ ի ճանապարհս արդարու-
թեան։

Ամենահայեաց ակն և աննիւր-
հելի պահապան նորոյս իսրայէլի,
որ նստիս՝ ի քրովբէս և հայիս յան-
դունդս, նայեաց աչօք քոցդ արդա-
թեան յատկիկ ծառայս քո, որ
խորասուզեալ յանդունդս մեղաց
չունիմ կար և զօրութիւն ելանել
ինքնին, և չիք իմ ձեռնտու և օգ-

նական ազատել զնա յանհնարին տարակուսանացս. այլ դու անար-
դամեծար ոչեր՝ լեր ինձ այցե-
լու և պաշտպան, և զերծ զնա
՚ի խորոց աստի չարեացս ամբաւից
աննահանջելի հրամանաւ քով, զի
չէք ինչ որ արգելուլ կարիցէ զա-
մենակարող զօրութիւն քո։

Ա՚ղաչեմ զքեզ ողորմած՝ առա-
քեա առ իս զՀոգի աստուածու-
թեան քո, որ ջրջելով ՚ի վերայ
ջուրց կենդանագործէր զարարածս
քո, զի ծննդաբեր արասցէ զամ
լութիւն մտաց իմոց ՚ի հաճոյական
բանից մտքիանս յընդունելութի
համայ բարձրելոյդ, զի ես ինձէն
առանց նպաստից նորին՝ զոր ինչ
արժան է հայցել՝ ոչ գիտեմ։

Օ՚ի նա որ քննէ զամենայն և
զխորս Աստուծոյ, գիտէ նա և
զպէտս մեր և զկարիս առաւել
քան՚զոր խնդրեմք և իմանամք. և

դիտացեալ ՚ի տկարութիւնս մեր ուսուցանէ մեզ զնոսին հայցել հաւատով, և գտանել առ ՚ի քէն հանդերձ թողութեամբ մեղաց մերոց ։

Ա՛ի ընկենուր զիս յերեսաց քոց՝ բարեբանեալ, որ ոչ կացի յուխտին իմում՝ զոր ուխտեցի քեզ յաւուրն փրկութեան, և ոչ զգուշացայ կալ ՚ի ճանապարհս օրինացքոց. այլ իշխանին մոլորութեան անսացեալ խրատուս՝ զառաջեցայ յերկնապնաց պղծութենէդ ՚ի փշալեղջ մայատս մեղաց և մահու. այլ դու խնամակալ՝ որ ոչ ձանձրանաս ՚ի բարերարելոյ, և ոչ յապիս յոյսդ յուսահատութենէ, հոգեսալ պետութեան քո հաստատեա զիս ՚ի պատուիրանս քո անդրդուելի՝ ուղղել վերստին զգնացս ատից ի մոց առ աստուածդ կենաց ։

Ա՛րդ՝ դու կարօղ և մարդասէր,

որ յառաջ քան զլինելութիւն
երկնի և երկրի պատրաստեցեր զար-
քայութիւնդ ՚ի ժառանգութիւն
արդոյ քոց, արբեա և զիս յամե-
նայն անօրէնութենէ իմմէ, և ար-
ժանաւորեա զինդ նոսին յարքայու-
թեան քումմ յերկինս, գոհութիւք
փառաւորել զամենաղօր տէրու-
թիւնդ յաւիտեանս յաւիտենից.
ամէն.



Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ։



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԱՐՈՒԹԵԱՆ

Երանի ումմ թողութիւն եղեւ մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն որում ոչ համարիւ տէր զմեղս նորա, և ոչ պոյ նենգութիւն ի բերանոյ նորա։

Լռեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրհանապազ ի տուէ և ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ,

զարձայ ՚ի թշուառութիւն՝ զի հա-
րան յիս փուշք։
Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէ-
նութիւնս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն։
Ասացի թէ պատմեցից ինձէն զմե-
ղսս իմ, և դու թողեր զամենայն
ամբարշտութիւնս մեղաց իմոց։
Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ
քեզ ամենայն սուրբք, ՚ի ժամ
ընդունելի։
Բայց ջիայն ՚ի ջուրցն հեղեղաց
բազմաց, որք առ նոսա հնչ ոչ մեր-
ձեսցին։
Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութենէ
յայսմանէ, որ շուրջ եղեն զիս։
Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցա-
նէ՝ որք պաշարեցին զիս։
Իմաստուն արարից զքեզ և խելա-
մուտ ՚ի ճանապարհ՝ յոր և գնասցես, և հաստատեցից ՚ի վերայ քո
զաչս իմ։
Մի լինիք որպէս զձիս և զջորիս՝ զի

ոչ գոյ ՚ի նոսա իմաստութիւն . ՚ի
սանձս և ՚ի դանդանաւանդս ձիոյ
լեսցես վիզակս նոցա՝ որք առ քեզ
լինչ ոչ մերձենային ։
Բազում տանջանք են մեղաւորաց,
բայց որ յուսան ՚ի տէր՝ ողորմու-
թիւն տեառն շուրջ եղիցի վնոքօք։
Ուրախ եղերուք և ցնծացեք ար-
դարք ՚ի տէր , պարծեցարուք ամե-
նեքեան՝ որ ուղիղ էք սրտիւք ։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

ա՛խ Ո՛րով կենցաղոյս հանա-
պաղ զիս ալեկոծէ ։
Մրրիկեալ ալիք թշնամին ինձ յա-
րուցանէ ։
Նաւապետ բարի՝ լեր անձին իմոյ
ապաւէն ։
Աներձ եմ յընկղմիլ՝ օգնեա ինձ
նաւապետ բարի . քանզի ծանրա-

ցան ՚ի վերայ իմ բեռինք մեղաց։
Աստուած՝ յօգնել ինձ փութա,
քանզի խոցք չարեաց ընկղմեն զիս
յանդունդս. այլ դու նաւապետ՝
ետր և ինձ ձեռընտաս։
Փրկեա ՚ի վտանգէ զնաւաբեկս ՚ի
յալեաց ծովէ. քանզի կորնչիմ ՚ի
մեղաց անօրէնութեան իմոյ։
Ընդունեմ զքեզ տէր՝ պարգեւ-
եա ինձ ապաշխարութեամբ լուա-
նալ զմեղս իմ, և ողորմեա։
Զարտասուս իմ և զհառաչանս սըր-
տի իմոյ մարդասիրութեամբդ քո
ընկալ տէր, և ողորմեա։
Մերձեցայն խնդրուածք իմ առա-
ջի քո տէր. բարերարութեամբդ
քո խնայեա յիս, և ողորմեա։
Ընդունեմ զքեզ հայր երկնաւոր
մի դարձուցաներ զերեսս քո յինէն
զի նեղեալ եմ ես, վաղվաղակի
լուր ինձ տէր։
Ողորմեալ անձն իմ անօրէնութէ,

մի կորուսաներ զիս տէր ըստ առաջ-
նէնութեան իմոյ , որ խնդրողդ ես
մոլորեալ ոչխարիս ։
Ճանրացեալ մեղօք ընկղմի անձն
իմ. ընկալ զիս որպէս երբեմն ըզ-
Պետրոս , որ ծփիմն ալէկոծեալ
յանցանաց ։
Մեղայ տէր՝ բազումողորմ
Աստուած , մեղայ՝ ողորմեա ։
Մեղայ տէր՝ և անկանիմ առաջի քո,
մեղայ՝ ողորմեա ։
Մեղայ տէր՝ խոստովանիմ զյանցա-
նըս իմ. մեղայ՝ ողորմեա ։
Թմբնա իմ. մեղայ քեզ տէր ,
քաւեա զիս ։
Մեղաք անօրինեցաք ամենեքեան ,
ոչ պահեցաք զպատուիրանս քո .
մեղայ քեզ տէր , քաւեա զիս ։
Դարձիր տէր՝ի բարկութենէ քումմէ . անցո՝ի մինչ զյանցումն քո .
մեղայ քեզ տէր , քաւեա զիս ։
Ով զքանն անեղական զէակն ե-

ից գոյութեանց անճառաբար ծը-
նար մարմին եղեալ ՚ի փրկութիւն
եղականացս . առ նա միշտ բարե-
խօսեա վասն անձանց մերոց :

Փառ հօր և որդւոյ :

Որ զպատուն ՚ի քէն կենաց ընծա-
յեցեր մեռեալն Ադամայ . զորոյ
պահօք քառասնօրեայ քառեաց զը-
պտղոյն ճաշակումն , և յանվախ-
ճան վնասն վերացեաց ՚ի կեանս ,
առ նա միշտ բարեխօսեա :

Ամէն և հղօ և յաւիտեան :

Ի միւսանգամ քո պալատեանն յե-
րեւիլ տուրք նշանակ՝ արժանի ա-
րա զծառայս քո վերատեսն նորոգ-
մանն . զի զու միայն ես Թագաւոր
փառաց օրհնեալ յաւիտեան :

Թագաւորք Ապաշխարութեան :

Ի ուր մեղ Աստուած վրկիչ
մեր . Ով կեցո զմեզ , որ յաման-
նայիկ

կարօղ եա ։

Էր մեղ Աստուած փրկիչ մեր. յայս ամենայն ծագաց երկրի, և որ ՚ի ծով հեռի ։

Ո՛ պատրաստե զերկինս զօրութիւք իւրով, և պճեպեալ է զօրութիւն. և կեցո զմեզ, որ յամենայնի կարօղ եա ։

Էր աղաչանաց մերոց ոչ մարդասէր, և գԹա ՚ի մեզ ։

Ա՛ի զիս անտես առներ. այլ օգնեա ինձ մարդասէր ։

Մի ընկենուր զիս ոչ յերեսաց քոց, և զՀոգի քո սուրբ մի հաներ յինէն։

Ա՛յլ տուր ինձ զցնծութիւն փրկութեան. և հոգեւոր պետութիւնք քո հաստատեա զիս, այլ օգնեա ինձ մարդասէր ։

Մի անտես առներ զիս՝ ոչ Աստուած փրկիչ իմ. այլ չնորհեա ինձ Թողութիւն բաղմապատկեալ մարդասէր, և կեցո ։

Երկինք և երկիր գոհանան ըզ-
քէն տէր. արարածք ամենայն քեզ
երկիր պագանեն. և հրեշտակք ի
բարձունս աղաղակեն և ասեն, ո-
ղորմեա՝ դու ստեղծեր, մի կորու-
սանես:

Երկինք երկնից, ջուրք որ ի վերոյ
քան զերկինս՝ օրհնեցէք զանուն
տեառն:

Զի նա ասաց և եղեն, հրամայեաց
և հաստատեցան. և հրեշտակք ի
բարձունս աղաղակեն և ասեն, ո-
ղորմեա՝ դու ստեղծեր, մի կորու-
սանես:

Երկինք և երկիր հանապազ զքեզ
գովեն՝ Թագաւոր փառաց. ա-
րուածք և քերովբէք ի հանապհ ու-
նելով զդէմս իւրեանց, և միաձայն
բարբառովն աղաղակեն և ասեն՝
սուրբ, սուրբ, սուրբ, տէր զո-
րութեանց:

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ ՁԱ։

Ա։ Ընդ Աստուածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զալելոյս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մարդուբերանոց՝ ընկալ բարեգութ։ Ոչք են բարիք բարեգործեալք՝ ի բարերարէդ՝ անկիրթք չարեաց, հատուցեալք յամէնիշխանն հրամանաց է՛ իդ։ զօրութիւնք հզօրք՝ ակնարկութեան բարձրելոյդ։ սուրբք, մարդուբք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք։

Բ։ Ոչք և պատկառոյս անկից Թզենւոյն եռամեանն դատարկու-

թեամբ, որ զբնաւ յաւիտեանս պարտնակէ ժամանակին՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրոյ թեամբն յերկարա-ձգելոյ՝ յայդի աշխարհիս արմատա-ցելոյ, սին սաղարթիւն պաճու-ճելոյ՝ զրկեալ ի պտղոյ, որ է ճըշ-գրիտ պատկեր ճշմարտ մարդ-կութեան։ Այլ բարեխօսք՝ հան-դերձեալք՝ այլ և խնամակալք, որ դեղերին հանապազ առ մեզ՝ ընդ մերոյմ կրից կարեկցելով, բարե-մասնութեանն մեր ապաւեն. և յա-ւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն զայս բան առելով, զպարծս ձեռաց քոց մի անտես առներ։ Քանզի արդա-րեւ մեր են այս ազաչանք ի բա-րերարէդ Աստուծոյ վասն մեր կար-դալ առնոյս. զի նորա բանիւ են առեղծեալ, և մեք ձեռօք ներդո-ծեալ։ Ոչք և գալոյ են ընդ միած-

նիդ՝ վկայք ասկալի դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատաստանք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին առնելի՝ յայտնէջք իրաւամբք զմատակարարութիւնն՝ որ առ մեզ, որ և անտանօր կարեկցեն պղեալ հառաչմամբ զիշատանուէրն նուագ ձայնի, ողորմեա՝ դու ստեղծեր, մի կորուսաներ։

Գ. Արդ՝ ընդ գոհաբանութեն ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից՝ և՛ի մեր հեծութիւնս հոտառեցիս, բնաւից աղաչիչ. որ յաղթես գիշխութեամբդ քո վերնոցն և ստորայնոցս. քանզի քո է բարերարել առ մեզ և առնալն։ Արդ՝ վասն բարեգործութեան անախտականացն, հրաշատեսիլ հրաւիրեալիցն, անչափահասմաքրոցն, անմեղիցն, բացանիւթիցն, հոգեղինացն, և անուանե-

լեացն . ամենաճեղուն առաւելու-
թեամբ ի բարձրն ընտրականու-
թիւն գերադիայլ յաճախ գիտու-
թեամբ անցուրտ ջերմուԹեամբ
ջեռուցանողք՝ ինքնաբուն տապո-
վըն աստուածախրուԹեան լատ ին-
քեանց զմերս սառնասեր սրտիցս
անբորբոք չինջուին , այրիլ անադօտ
ի մեծախորհուրդ սրբում սեղա-
նիս՝ որ ի խորանիս , առանց նիր-
հելոյ և դանդաղանաց սպասել հը-
րամանաց երանականաց կեցուցիչ
կամաց ամենասաեղծիդ , քրովբէ-
օրէն առաքինուԹէ Աստուած
միացեալք անբաժանելի : Որք երկ-
նաւոր պետուԹիւնք են մեծք , և
զինուորուԹիք անբիծք ահաւորք
երկնաւորիդ Աստուծոյ՝ ալատաղ-
նեայ պաշտօնեայք , ի յամպոյդ
լուսոյ՝ ցոլք նշուղից :

Դ . Որով և ինձ մեղաւորիս
հողեղինիս մարդասիրեացես ողոր

մել՝ Յիսուս ազաչանօք իմոյն հրե-
րեշտակի, դարձուցանելով զիս
տէր՝ ի բարիդ քո հետս լուսոյ.
զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպա-
նութեան, զոր հաւատացեր նմին
տեսչութեան, զընկալեալն ի քէն
ի կենցաղ սատեացս՝ ուրախութիւք
արեալ յիս բերկրեալ, անմեղադ-
րելի առ ի քէն օրհնեալ՝ հանդարտից
դիմաց զուարճութեամբ՝ քեզ ար-
քայ բարձրութեան փառաց ան-
հասից՝ ի խրախճանս կենդանա-
կան բերկրեցելոցն պարուց մա-
տուցեալ ընծայեցուսցէ՝ գովեալ
ողորմած: Եւ քեզ անքննին ընդ
հօր անհասի՝ Թուակցութեամբ
Հոգւոյդ անճառի՝ վայել է փառք
պատիւ և երկրպագութիւն, յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք ՚առ ամենասուրբ Երրորդութիւնն Յովհաննու դաւանիցոյ ասացեալ։

Բարեբար և ամենակալ՝ յոյս ապաւինի ամենայն ստրակուսեցոյ՝ տէր իմ և Աստուած իմ, արարիչ երկուց յանէից և նախախնամող բոլորից. որ յայսմ աւուր հրամանաքով բաժանեցեր զպատմութիւն Լուկայ, զքաղցանն ամբառնձեր ՚ի վեր յամպս առեալ ՚ի վերոյ երկրի ՚ի բռնել զաջիւրս և խաղաղացնել զպետս, և զպատուականս թոռներ յերկիր ստորին անտահման իմաստութեամբ. և արկեր անջրպետ ՚ի մէջ նոցա լոյծ և հոտանուտ ըստ հաստատութիւնն օդոյ. ի վախճարձ տուրեւառութեամբ Լուկայ մշտնջենապէս հաղորդել կարասցեն ընդ միմեանս վերինքն և ստորինք յօգուտ համօրէն ստեղծուածոց, և ՚ի պետս տղի մարդկան՝

զոր հանդերձեալ էիր արարչապա-
ծել ի վայելումն երանութիս ինա-
ոայ աստուածութեանդ. քո :

Ընդ՝ ես որ կամ իբրեւ զքեզ
աստրին աղաչելով ի ձահիճս զա-
նազան մեղաց գարշութեամբ, և
տգեղանալ բազմօրինակ անօրէ-
նութեամբ, առ քեզ պատշաճիմ
արարիչ իմ և յոյս, բարերարութ
կամօքդ վեր առեալ զիիս իմ ի
աստղ՝ մարգարտածեա արդէս զը-
ջուան անգոյ յամենայն աղտեղու-
թեանդ քոյովդ արբուցեամբ. և
զդառնութիւն նեխութեան իմոյ
ի քաց արա յինէն քոյովդ քաղցրու-
թեամբ լինել հաճոյ աստուածու-
թեան քո կամաց՝ ի գալեաս վա-
ոայ անբաւ շնորհաց քոց :

Ալ հայիր ի բազմութիւն անօ-
րէնութեան իմոյ՝ որ անարժան եմ
գթոյ, և մի գարշիր յինէն վասն
զազրութեան յանցանաց իմոց՝ յո-

րում կամ չաղախեալ. այլ մատիր առ ինն անձառելի գթութեամբդ, և ողորմեա ինձ ըստ բազում ողորմութեան քում, զի քաղցր ես առ ամենեսին՝ որք կարդան առ քեզ, և ապաւինին ի քո մարդասիրութիւնդ:

Դու տէր՝ զանձրև գթութեան կամաց քոց և զառատաձեղ ողորմութեան քո զյօղ անձրեւեա ի սիրտս իմ, որ ի սաստիկ ցանկութենէ չարեաց և ի տապոյ անօրէնութեան երաշտացեալ՝ չունի ինչ բերս պտղոց բարութեան. և ոչ ոդեալ պարարտացո շնորհօք մարդասիրութեան քո՝ բերել զարդիւնս անեղծանելիս ի պաշտոյ մշանջենաւոր և անեզրական կենացդ:

Ա՛ուր ինձ բարերար, քաւեա անյիշաչար, և արա զծառայս քո արժանի վերին օգթեւանացդ ընդ սիրելիս անուան քո սրբոյ, և ընդ

կամարարս հաճոյից աստուածո-
թեանդ քո՝ որ յերկինս և որ յերկ-
րի. զի ընդ նոսին փառաւորեցից
անլռելի օրհնաբանութեամբ զք
հայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ,
այժմ և միշտ և յաւիտեան յա-
ւիտենից. ամէն:



Դա է որդի իմ սիրելի ըստ որում չ առ։ Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։



ԵՐԵՔԵԱՆԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր մի արամարհեսցէ զքո
յանդիմանելն զիս, և մի բարկու-
թեամբ քով խրատել զիս։
Ո՛վ ներեսք քո հայեան յիս, և յիս
հաւատացեալ ձեռն քո։
Ոչ պոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ,
յերեսաց բարկութեան քոյ։
Ոչ է խաղաղութիւն ոսկերաց ի-
մոյ՝ յերեսաց մեղաց իմոց։
Պատճառութիւնք իմ բարձրացան

.քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանրոյ
նըը ծանրացան ՚ի վերայ իմ:
Նեհեցան և փտեցան վէրք իմ՝
յերեսաց անզգամութեան իմոյ:
Տառապեցայ և խոնարհ եղէ մինչ
չեւ յոյժ. ցօրհանասատ տրտում
գնացի, զի անձն իմ լի եղեւ չար-
չարանօք, և ոչ գոյ բժշկութիւն
մարմնոյ իմոյ:
Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչ
չեւ յոյժ. մռնչէի առ հեծութեան
սրտի իմոյ:
Տէր առաջի քո է ամենայն ցանկու-
թիւն իմ, և հեծութիւն իմ ՚ի քէն
ոչ ծածկեցաւ:
Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող
զիս զօրութիւն իմ. լոյս աչաց ի-
մոց, և այս ոչ եղեւ ընդ իս:
Բարեկամք իմ և մերձաւորք իմ ա-
ռաջի իմ մերձեցան և կացին. և
մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:
Բռնադատեին զիս և խնդրեին

զանձն իմ՝ որք խորհէին չար ի վե-
րայ իմ, խորհեցան զանօրէնու-
թիւն և զնենգութիւն զօրհանա-
պազ խորհեցան։

Ա՛յլ ես որպէս խուլ մի ոչ լսէ, որ-
պէս համր որ ոչ բանայ զբերան
իւր։

Եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ, և ոչ
գոն խօսք ի բերան նորա։

Ես ի քեզ սէր յուսացայ, և դու
լուիցես ինձ տէր Աստուած իմ։
Ասացի թէ մի ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ։ ի սասանիլ ոտից իմոց
ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։
Ես ի տանջանս պատրաստ եմ, և
ցաւք իմ առաջի իմ են յամենայն
ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից,
և հոգայցայց վասն մեղաց իմոց։
Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են
և զօրացեալք են քան զիս. և բա-
զումք եին՝ որք ատէին զիս ի տա-

բանալուց։

Ո՛չ հատուցին ինձ չար փոխա-
նակ բնդ բարւոյ, չարախօսէին վի-
նէն, վի ես երթայի սիրել արա-
րութեան։

Ա՛ղ Թողուր վիս տէր Աստուած իմ.
և մի՛ ի բացեայ առնիր յինէն. հա-
յեաց յօգնել ինձ տէր փրկութե իմոյ։

ՇԱՐԱԿԱՆ ԱՂԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Բյ. Դարձո զդատաւորն քո ի մէնջ յաղաղակել հոգեվնասս. բանսեղծութ տէր՝ խնայեա և մի՛ կորուսաներ։

Կանչեցա զանկեալս ի վերմանէ՝ զվիրաւորեալս ի թշնամւոյն. որ բժիշկդ ես հիւանդաց, բժշկեա զիմ վհիւանդութիւնս։

Խոյանգանաց իմոց թաղծեալ անձն

լմ՝ գոչեմ որպէս զմաքսաւորն, Աստուած՝ քաւեա զիս զմեղաւորս։

Ընդերեւութից քննող գաղտնեաց՝ բժշկեա զհոգւոյ իմոյ ըզհիւանդութիւն և կեցո, միայն մարդասէր։

Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան՝ ողորմեա անձին իմոյ բազմամեղի և կեցո, միայն մարդասէր։

Ամենաբաւական ողորմութեան ընդունի՝ պարգեւեա ինձ յահապին աւուրն զթութիւն և կեցո, միայն մարդասէր։

Ընդունելի են քո գթութիւնդ բազմամեղ անձին իմոյ, ողորմեա Աստուած քաւիչ իմ։

Զի քեզ անյիշաչար տէր՝ մեղայ հանդերձ խոստմամբ, ողորմեա Աստուած քաւիչ իմ։

Ի քո՝ ի միւսանգամ գալստեանն՝ յուժամ գաս դատել զերկիր, ողորմեա Աստուած քաւիչ իմ։

Ա՛ելաք մինչեւ յերկինս, եւ զարդար զգաստութիւն քո շարժեցաք ի մեզ, տէր՝ ըստ մեծի քումդ ողորմութեանդ ողորմեա մեզ։

Իջաք մինչ ի դժոխս՝ ընկղմեալք յանօրէնութեան մերում. տէր՝ յիշեա զիւնս արեան որդւոյ քո, և ողորմեա։

Հալածեա ի մէնջ տէր՝ նշանաւ խաչի քո զընդդիմամարտս և զանեծքեւոյթ գալան, և մի տար յաղթականութիւն ղքո ժառանգութիւնս

Տաճար լուսոյ անաւուերին և առաքաստ անճառ բանին. որ ինամանուոյ մերն եւայլ բարձեր զանէծսն արտանալի. հայցեա յորդւոյդ քո մխածնի հօր հաշտութեանն մէնարդի, բառնալ ի մէնջ պատուհասն և տալ զգաստ խաղաղութիւն։

Փառք հօր և որդւոյ։

Առաւաձաձին անհարանոցեալ

յերկրէ երկնից հարան ընծայեալ. յորժամ բազմիս լուսոյ նման .քո Մխածնիդ յաջակողմեան, յայնժամ մաղթեա ընդ մեր զնոյն փրկել ըզմեզ յահեղ բոցոյն. համադասիլ ընդ արդարոց երթել .քեզ վաուս ընդ երկնայնոցն:

Այժմ և հրշտ և յաւիտեան:

Երեւեալ աղիւսանման ակն պատուական՝ ի ձեւ խաչին, հերձանելսլ զծոմն կարմիր, առաջնորդելսլ ժողովրդեանն սեամբ ամպոյ լոյս անմեկնելի, որ ձեւացոյց մեզ սուրբ մուտնել ընդ դուռն անեղ աշխէն դրախտին տեառն:

Թագաւորք Ապաշխարութեան:

Երկայնամիտ ես տէր առ ամենեսեան. և գթած տէր՝ ի վերայ

մեր՝ որպէս և յաւազակին՝ փրկիչ, և կեցո։

Երկայնամիտ բազումողորմ և ճըշմարիտ՝ նայեա առ իս և ողորմեա ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան։

Եւ գիտա տեր՝ ի վերայ մեր որպէս և յաւազակին՝ փրկիչ և կեցո։

Տէր՝ որ գիտացար յաւազակն խաչակից լինել քեզ, և մաքրեցեր զաղտեղութիւն յանցանաց նորա յաղթերկ կողի քո. գիտա և յիս՝ ի մեղաւորս, որ ծարաւիս եմ առ քեզ, և փափաքիմ՝ ի գաւլիա քո՝ որպէս զմի՝ ի յեղկերտաւոյ՝ ի յաղթերա Ջուրց։

Ա՛ստուածա ընդ իս լինիմին, հանապազ զիս կամի կատարանել. այլ դու տէր իմ՝ այդ արա մոլորեալ ոչխարիս և կեցո։

Մարտեան ընդ իս՝ ի տարապար-
տուց, և փոխանակ սիրոյ իմոյ մատ-
նէին զիս, այլ ես յաղօթս կայի ։
Հատուցին ինձ չար փոխանակ
բարւոյ, ատելութիւն փոխանակ
սիրոյ իմոյ. այլ դու տէր իմ՝ այց
արա մնըրեալ ոչխարիս և կեցո ։
Որ հովիւդ ես հօտից բանաւոր
կենդանեաց, տուր ինձ յոյս կենաց
ապաշխարութեան. և դարձո զմն-
ըրեալս՝ ի հօտ քո փրկատոս և
կեցո ։

Աղէկ և ապաչեմ զքեզ, Թա-
զութիւն չնորհեա մեզաց իմոց.
քաւիչ իմ լեր քո գթութեամբդ՝
որ միայնդ ես փրկիչ և կեցո ։ Մե-
ղայ տէր մեղայ, և զանօրէնութիւնս
իմ ես ինձէն գիտեմ ։
Աղաչեմ և խնդրեմ՝ ի քէն՝ Թող
ինձ տէր Թող ինձ, և մի կորու-
սաներ զիս ըստ անօրէնութեան
իմոյ. քաւիչ իմ լեր քո գթութեդ՝

որ միայնդ ես փրկիչ և կեցո։ Մեղայ քեզ տէր, մեղայ քեզ տէր, մեղայ, և քան զաւազ ծովու բազում են յանցանք իմ. պատրանք աշխարհիս խաբեցին զիս, և եղէ անպտուղ ի կենաց յուսոյդ, այլ դու անխափակալ և անյիշաչար փըրկիչ՝ խնայեա ի մեղուցեալ ծառայս և կեցո։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ Դ.

Ա. Ով քանզի համբարձեալ զընթացս բանիս՝ ի փոքունց աստէն երկրայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ ի մեծատունիցն տեսակս, առցուց զծոնեալն հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան։ Որ զի թէ մերձաւորապոյնք էին Աս

տուծոյ՝ իբրեւ՝ ընակուածանօք հայրապետութեանն, և կամ մաքրապինք՝ որպէս զմարգարէն, կամ անբծապինք՝ իբրեւ զառաքեալն կամ ընտրեալպինք՝ որպէս մարտիրոսան, եթէ ոչ դու մարդասիրեացես աննուաղ բարիդ և անփոփոխ լնամանակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է լինէ վրկութիւնն առ՝ի նոցանէ։

Բ. Օ՝ի եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակընչելին լինէ վարդապետէ, ՚ի տապոյ անտի պատահկեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հատարակաց անհնարութեան։ Իսկ եթէ առ Մովսէս, և նա պատճեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց առնն վրկութեան, որ ՚ի հայթայթանաց կրկուան ՚ի պահպանութեանն աւուր ժողո-

վէր ։ Իակ եթէ առ Ահարոն , և նա
ինքնին իակ կարօտացաւ մաղթողի ։
Իակ եթէ առ Դաւիթ , ՚ի մէջ բա-
րեացն առաւելութեան՝ ստգտեալ
է և նա ։ Իակ եթէ առ Նոյ և Յոբ
և Դանիէլ , զոյս եղեկիել մարգա-
րէ մեկնեաց՝ յանուանէ իակ յիշա-
տակեալ զնոսա , և զայն ընդ նոսին
իբր ՚ի դիմաց Աստուծոյ ապրեալ ,
կենդանի եմ ես՝ ասէ տէր , թէ
ոչ ապրեցուսցեն զուստերս և ըղ-
դստերս իւրեանց ՚ի բարկութենէն
որ հասանիցէ , բայց եթէ ինքեանք
միայն ապրեսցին ։ Իակ եթէ առ
Պետրոս ւէճն հաւատոյ , ՚ի քում-
խնամոյ խուն մի խիթացեալ՝ և
նա ընդ կրիւք լինն գրաւեցաւ ։ Թո-
ղութեամբ ըզպղմոյն գութարութի՝
խոնարհեալ առ կարիս կուրիս ,
թէ և յաւէտ երջանիկք էին ։
Ընդ որս և Յակոբոս ոմն մարգա-
րէի ՚ի մէջ աստուածառաքն սպա-

սաւորութեան մարդկօրէնն գայ-
թակղութիւն՝ ճնայ յոլովից ան-
թարպմանելի, թէ և՝ ի դէմս իմն
մեկնութեան ձեւակերպեցի։

Գ. Ւ՚ր քանզի չափեալ սահմա-
նեցաւ ըօրութիւն փրկութեան
մարդկան, և ցաւցան նոքա ողոր-
մեալք բարերարիդ՝ և. ըօրացեալք
ամենակալիդ. կոչեցեալք պաշտ-
պանողիդ՝ և քաւեցեալք հնարա-
ւորիդ. ընտրեալք ազատեցուց-
չիդ՝ և բժշկեալք անախտականիդ.
կենագործեալք անապականիդ՝ և
լուսաւորեալք նորոգողիդ, այսու-
հետեւ դիտացեալ զսակն ոըքա-
նութեանց հոգածին բնութեանս
ոըք մխիթար են օրինակաւն նմա-
նաբար հարազատապէս վկայուե
յուսահատելոց, ահա առ քեզ դի-
մեցից՝ ոըդի Աստուծոյ կենդանւոյ
Քրիստոս օրհնեալ յամենայնի։ Մա-
նաւանդ զաւակն ազգակից այ-

սըմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերածրելոյդ բան վերատին ար-
դարացուցանէ. բարի է, ըստ ի-
մաստնոյ ումեքն երջանկի, անկա-
նել ի ձեռս տեառն, և մի՛ ի ձե-
ռս մարդկան. զի որպէս մեծու-
թիւն նորա, և ողորմութիւն նո-
ցին: Եւ այս բան՝ թէ և պատ-
ճին իմն գծագրեր, որ վերեքմա-
նեան հարուածն աստուածեան ա-
ռաջի եղեալ՝ ընտրեաց ինքնին կա-
մաւորաբար զպատահինիք մահուն
աստուածն՝ իբր զկենդանի զրիս-
տոսի հաւատոյն յաճախութեամբ
քան զերկուան եւս այլ փոքրկու-
նըս՝ որք տանջէնն և ոչ ողորմին.
ասկայն և իմն օրինակութիւն քա-
նիս պատկերի ճարակեցելոյ հնարս
կենաց կորուսեալս անձին՝ ոչ է
այլայլեալ յարմարութենէ. զի ոչ
եթէ զփրկեալն նուաստացու-
նեմ՝ ի մահենի այլ ողբերգու-

թեան, առանց որոյ ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին անուն պըղատակեմ, և զինորհ նորին առ ամենեսին բարեհաճակեմ. և զբնաւին բարձունն ի թուիչս վարուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութեանն դեղոյ։

Դ. Ընդ դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութի, դու երանութի, դու լուսաւորութիւն. արա ինձ անդորր ի մեղացս աշխատութեանց, զի և քեզ լիցի հանպիտ ի մշտադասաս հեծութեանց՝ ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ իւիք, քան թէ փրկութիւն մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու գառնեցւոյ ասացեալ։

Ա՛րարչապարծ Աստուած և ամենահնամ, որ յայամ աւուր գԼթուԹեամբ կամաց քոց ժողովեցեր զԶուրս որ ՚ի վերայ երկրի՝ ՚ի խորս ծովու, և զատուցեր զյամանքն ՚ի ջուրց. և զարդարեցեր զայն զանազան բանջարօք և ծաղկատեղ վայելչուԹեամբ, և ազգի ազգի պտղաբեր ծառովք։ Իակ արդ երկիրս անձնաւոր՝ փոխանակ բարեբոյս սերմանց առաքինագործ արգասեաց՝ բուսուցի փուշս մեղաց խոցոտիչս հոգւոյ իմոյ. և փոխանակ բերոյն քաղցրուԹեան՝ պտուղս անօրէնուԹեան դառինս եւ մահաբերս ինձ գոյացուցի։

Այլ դու անխափակալ տէր՝ հայեաց քաղցրուԹեամբ առ իս յաբարածս քո, և մի անտես առներ

զգործս ձեռաց քոց. խնեա յինէն զխուչս չարեաց և զարդասիս անօրէնութեան՝ զոր ես ինձէն ատելաբերեցի. և սերմանեա վերստին ՚ի միտս և ՚ի կամս իմ զբարին և զգատակարն հոգւոյ իմոյ՝ յօժարիլ և ընտրել զայն, և առնել կամաւ կար սիրով։

Ընդունելութիւնք իմ բարձրացան քան զպղուխս իմ, և տղմաշաղախ ջուրք մեղաց ծածկեցին զանձն իմ. և ահա առ քեզ առ բանգութ տէրդ իմ պաղատիմ, երեսեցո զիս խնդրել երկիր ցամաք, և նորոգեա զհիւտ իմ բերել պտուղս բարիս գկանուխն և զանանգան ըստ հաճոյից քոց՝ մարդասէր

Երկիրս բանաւոր՝ զոր զարդարեցեր բնաբոյս առաքինութեամբ, ցամաքեցայ ՚ի հրատապ հրապուրանաց իշխանին օդոյս այսորիկ՝ որպէս դալարի ՚ի սաստիկ տօթոյ, և

Թօթափեցան ծաղիկք հոգւոյս,
պօսպոյան ոսոք առաքինութեան,
և խամրացան բոլորովք բարեաց։
Եւ ահա կորացեալ անձամբ
առ քեզ աղաղակեմ պարզեւիչդ
կենաց, ցօղեա յիս զցօղ խնամոց
մարդասիրութեան քո, զի չորա-
ցաւ որպէս խեցի զօրութիւն իմ,
և որպէս խուռ տանեաց ցամաքե-
ցայ, և նորոգեա ինձ նորոգու-
թեամբ չնարհաց քոյ ըստ առաջ
նումն պայծառութեան։

Ընդարեր ինձ այդի վայելուչ
ցանկով օրինաց պատսպարեալ առ
ի բերել ողկոյզս քաղցրութեան ի
հաճոյս տնկապարծողիդ իմոյ Աս-
տուծոյ. իսկ ես ապստամբ կամօք
արհամարհեալ զօրէնս քո, խոպա-
նացայ չարաչար գնացիւք, և պըտ-
ղաբերեցի խաղող դառնութեան
բազմօրինակ անօրէնութեան։

Եւ արդ մարդասէր՝ խնայեա

յիս գԹուԹեամբ, և դարման տար այդ-ոյս այամիկ զոր տնկեաց աՂ քո. ամրացս զնս վերստին օ-րինօքդ կենաց, և ՚ի բաց արա յինէն զքստՂման ըսրեաց՝ որք ատեՂ նին ՚ի կամս իմ: Արդ զի վաստա-կեալ յարդիւնս առաքինուԹեան՝ արժանի եղէց ընդունել զօրհնուԹ առ՚ինքն և վայելել յանճառ բարե-րզԹ ընդ սուրբս քո յերկինս, և գոհուԹեամբ փառաւորել զամե-նազօր տէրուԹիւն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Զոր առեալ Ադդուդ ՚ի վերափոխեալ գասեաց յանդաստուս ՚ի կեանս։



ՉՈՐԵՔՇԱՒԹԻ ՍՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քումմ. ըստ բազում գթութեան քումմ ջնջեա զանօրէնութիւնս իմ։

Աւելի լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղացս իմոց սուրբ ա րա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս ի բանս քո և յաղթող ի դատել գաս։
Ընդունելութեամբ յղացար, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։
Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս ի մաստուքդ քով յայտնեցեր ինձ։
Ցողեա յիս մշտակաւ ևսուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։
Լսել արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։
Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։
Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց. և զհոգի քո սուրբ մի հա-

ներ յինէն ։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս ։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։ Փրկեա զիս յարենէ Աստուած՝ Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութենէ քումմէ ։ Տէր եթէ զբերթունս իմ բանայ, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո ։ Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանիցէք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար ։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ ։ Բարի արա տէր կամօք քովք սիոնի, և շինեսցին պարիսպքն երուսաղեմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ

ուխտից պատարագս հանցեն ՚ի
սեղան քո ընծաթակս ։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Էկ. Յամենայն ժամ ալաչանք
իմ այս են, ՚ի մեղաց իմոց սուրբ
արա զիս տէր ։
Յանցանաց իմոց զարհուրի սիրտ
իմ. աղաչեմ զքեզ՝ թող լինիմ տէր ։
Արտասուաց իմոց մի լռեր տէր.
վի պանդուխտ եմ ես՝ յանցաւոր
երկրի ։
Թ. Լինիմ իմ. Ողորմեա լինիմ Ա-
տուածիմ՝ ողորմեա լինիմ. վի ան-
պատասխանի եմ յամենայնի, թող
լինիմ տէր ։
Տառապեալք. Ճանապարհք քո
ուղիղ են, ես միայն մոլորեցայ.
դարձո զիս՝ և ողորմեա լինիմ Ա-
տուածիմ ։

Թեան քո. ատաստանք քո արդար են, ես միայն եմ մեղուցեալ. քաւեա զիս՝ և ողորմեա ինձ Աստուած:

Զոյս իմ ես դու տէր՝ քաւիչ յանցանաց իմոց. մի անտես առներ զբխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ Աստուած:

Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին. հայր՝ մեղայ յերկինս և առաջի քո. ողորմեա ինձ Աստուած:

Փրկեա զիս Աստուած 'ի բազում մեղաց իմոց. արա արժանի քոյին սուրբ ալքայութեանդ. ողորմեա ինձ Աստուած:

Ահեղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ. ողորմեա ինձ Աստուած:

Բաց տէր զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամ առ քեզ. զի

քեզ միայնոյ մեղայ . ողորմեա ինձ Աստուած :

Հեղ յիս պղծութիւնդ քո բազում ողորմ և մարդասէր , քանզի քեզ միայնոյ մեղայ . ողորմեա ինձ Աստուած :

Թիւնա իմ. Մեղայ քեզ տէր՝ մեղայ , ողորմեա :

Մեղայ անօրինեցայ՝ և մատնեցայ ի ձեռս անօրէն թշնամւոյն . արդ անկեալ սլաչեմ՝ թող ինձ տէր : Քան զամենեսեան առաւել մեղայ տէր իմ դթած . քան զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէն թշնամւոյն . արդ անկեալ աղաչեմ՝ թող ինձ տէր :

Նկեսցէ տէր ի վերայ մեր ողորմութիւն քո , և քան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր ի մեղաց :

Ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո և լոյս երեսաց քոց առաջնորդ

գեսցէ՞ մեզ ի յարդարութիւն ։
Որ ողորմածդ ես՝ գթած և երկայ-
նամիտ ուէր , լինիլ զաղաչանս մեր
բարեխօսութեամբ սուրբ Աստ-
ուածածնին ։

Տէր՝ զլուր միւսանգամ քո գա-
լստեանդ լուայ և երկեայ . զի ու-
սայ ի սրբոց պատուիրանացն , ե-
թէ գաս դու ի դատել զերկիր ։
Տէր՝ յիշեցի զչար զգործս իմ և զար-
հուրեցայ , զի ծանեայ ճշմարտու-
թեամբ զահաւոր և զանաչառ ըզ-
քո դատաստանն ։

Տէր՝ յիշեցի և զպուղթ արարչական
սիրոյ քոյ առ քո արարածս . և ի
քո գթութիւնդ ապաւինեալ ա-
ղաչեմ , ողորմեա ինձ յաւուր յայն-
միկ Քրիստոս արդար դատաւոր ։

Աղաչանօք Աստուածածնին ա-
նապական քումմ ծնողին՝ զիմանալի
աչս սրտից մերոց բացցես ողոր-
մութիւն հայիլ ի լոյս քո Քրիստոս ։

ՓԱՌՔ ՀՈՐ ԵՒ ՈՐԴՈՅ։

Մարիամ կոյս անարատ զանապատ
կան վեհապէտ աղաչեա, զի հաշտեա
ցի ընդ այրի եղեալ հոգիս, և մի
աւուրեցի դարձեալ սիրով ընդ
հեռացեալս ՚ի նմանէ։

ԱՅԺՄ ԵՒ ԱՐՂՊ ԵՒ ՅԱՒԻՊԵԱՆԱ։

Ցորժամ յարեւելից փայլիս, ան
ձառ լուսով լուսաւորես զհաւա
տացեալն, և դատապարտես զազ
գըն Հրեից անհաւատից, ովսաւրբ
քառաթեւ, և զիս լուսաւորեա
զնաւարեալս մեղօք, և դատակար
գեա ՚ի դաս մատենագրի յանձառ
երկնից արքայութեանդ. զի անդա
դար օրհնաբանիս, և քո են փառք
յաւիտեանս. ամէն։

ԹԱԳԱՒՈՐՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ։

Տէր իմ՝ բազում են անօրէ
նութիք անձին իմոյ, ոչ յիշեցի զա

հեղ զդատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ, շնորհեա ինձ ապաշխարութիւն տէր, և ողորմեա։ Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. և որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ։ Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ. ոչ յիշեցի զահեղ զդատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ, շնորհեա ինձ ապաշխարութիւն տէր, և ողորմեա։

Պաղատանս մատուցանեմք քեզ հայր երկնաւոր, մի՛ անտես առներ զաղաչանս մեր, այլ անցո զցասումն քո ի մէնջ, և յիշեա զի պատկեր եմք բարերարութեանդ։

Տէր իմ՝ գթութիւնք քո բազում են յոյժ, առ իս արա զբարերարութիւնս քո. որպէս և մանաւորին՝ և ինձ ողորմեա։ Գթութիւնք քո բազում են տէր, և

ըստ իրաւանց քոց կեցո զիս։
Բազումք են որք հալածեն և նեղեն զիս. ՚ի վկայութենէ քոյ ես ոչ խոտորեցայ. առ իս արա ըղբարեգործութիւնս քո, որպէս և մնքասաւորին և ինձ ողորմեա։
Անոխակալ և անյիշաչար տեր՝ որ գթալով ՚ի մեղաւորս, շնորհեցեր ապաշխարութի՛ւն. արդ գթա և յիս տէր ՚ի մեղուցեալ և յանօրինեալ քո ծառայս. և փոխարկեա զդողծողս չարեաց ՚ի զղջումն ապաշխարութեան և կեցո։
Ի տաճարի քում սրբութեան փառաւորելով զքեզ. դու ասնիա իշխանութիւն՝ ողորմեա մեզ։
Այլեւս ըստ բազում ողորմութեան քում մոխց ՚ի տուն քո, և երկրպագից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո։
Տէր՝ առաջնորդեա ինձ յարդարութեան քում վասն թշնամեաց իմոց

և ուղիղ արա առաջի իմ զճանա-
պարհս քո. զու ունիս իշխանու-
թիւն՝ ողորմեա մեզ։
Ի տաճարի քումմ սրբութեան հա-
նապազ զքեզ գովեմք թագաւոր
փառաց, որ ունիս իշխանութիւն
կենաց և փրկութեան՝ ողորմեա
մեզ։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Տէրութեան։

ԲԱՆ Զ.

Ա. Եւ արդ՝ ի վերայ այսքա-
նեաց յուսահատութեանց և ա-
հարկու սրտաբեկութեանց. պա-
կուցանողական սաստկութեանց,
աստուածային բարկութեց տապ-
նասեալ ոգւով թախծութեան հա-
պառ, աղաչեմ զքեզ սուրբ աստ-
ուածածին։ Հրեշտակ՝ ի մարդկա-

նէ . մարմնատեսիլ քերովբէ . երկնաւոր արքայուհի . անխառն իբրև զօդ . մաքուր որպէս լոյս . անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան . գերազանց քան զբնակութիւն անկոխելին արքունեաց . երանաւոր խոստմանն տեղի . եդեմ հնչական . ծառ կենացն անմահից բուսեղէն պտղի պարունակեալ . ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ , հանգլստեամբ Հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ . բնակութեամբ Որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ : Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ . որդի քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ : Ընդ անապական մաքրութեանդ՝ և անբիծ բարի . ընդ անարատ արքունեանդ՝ և խնամակալ բարեխօս . ընկալ զմաղթանս այսր աղերսանաց՝ քումդ դաւանողիս , և մատոյց ընծայեա ընդ

ամին խառնեալ զբանն իմ նախանի՝
մեծիդ ներբողի՝ ի քոյդ պաղատանս։ Հիւսեա միացո զմեղուցեալս պատն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և ինկատուրեալ հայցուածոց՝ տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի ի քէն միշտ օգնեալ և բարեդործեալ, և ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն։

Բ. ()Ժանդակեա Թեւոցդ ազօթիւք՝ խոստովանեալ մայրդ կենդանեաց՝ և ելից իմ յերկրէս հովտէ, առանց լկանաց հեռեւիլ ի կեանս օթևանացդ պատրաստութեան, զի թևթեւացի կատարածն իմ ինձ՝ ծանրացեալս անօրէնութեամբ։ Արասցես ոճն ինձ բերկրութեան՝ զորն իմ տագնապի ողջայուսիչ երկանցն Եւայի. բաբեխաւսեա խնդրեա աղաչեա, զի

ըստ անձառելի մաքրութեանդ և. ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն: Արտասուօք օգնեա վանդեցելոյս՝ գովեալդ'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն՝ ծնողդ Աստուծոյ. ընդ իմում թշուառիս հոգւոյ՝ խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս՝ տաճար երկնային. փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և. ողորմութիւն, աղաչին Աստուծոյ և մայր. բարձրացի պատիւ քո ինեւ., և ցուցցի փրկութիւն իմ քեւ:

Գ. Լ;թէ զիս գոցես՝ տիրամայր. թէ ինձ ողորմեացիս՝ արբուհի. թէ զկորուսեալս չահեցիս՝ անարատ. թէ զհարթուցեալս յանձանձեացես երջանիկ. թէ զամաչեցեալս յաւրէն մատուցես՝ բարեշնորհ. թէ յուսահատելոյս ինձ միջնորդեացես միշտ աւրը կոյս. թէ զմերժեալս

ընտանեցուսցես՝ մեծարեալդ Աստուծոյ. թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից. թէ ըզծփեալս հաստատեսցես՝ հանգիստ. թէ՝ ի խռովութեանցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար. թէ վերիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ դողեալ. թէ վասն իմ մոցես՝ ի հանդէս՝ մահու նահանջիչ. եթէ ըզդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն. թէ զաժանմանն իմ խորոց քակտեսցես՝ հաչտութիւն. թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոստնիչ. թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս. թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն. թէ ըզխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց. թէ՝ ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելոյ թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կատակ նուիրեալ. օրհնեալդ միայն՝ ի ջըր-

թուն անբիծս լեզուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զերկ, մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի տրարչին երկնի և բնաւին երկրի։ Զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովքն և հանգոյն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ էութեամբ, և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացեալ, ամենայն՝ և յամենայնում, մի յերրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեան. ամէն։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու դառնեցւոյ ասացեալ։

Աստուէ ամբաւատէր լուսաւորացն երկնից, և ճարտարապետ

ամենիմաստ տանս աչխարհի, որ յայսմ աւուր կարպեցեր զլուսաւորուն ի հաստատութեան երկնից՝ զարեգականն և զլուսին և զաստեղսացն պարս՝ ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս։

Արդ աղաչեմ զքեզ Աստուած կենարար, համձայական պարգեւօք հոգեձիր շնորհացդ քոց շարժեալ ըզմիտս և զկամս իմ սիրել զքեզ յամենայն սրտէ, և ուղեա զընթացս անձին իմոյ անհեղքեալ զօրութեամբ քով՝ գնալ անխոտոր ի ճանապարհս հրամանաց քոց։ Կապեալ կամ անպերճ շղթայիւք յանցանաց իմոց ազատեա զիս ամենակար։ Անկեալ դանդաչեմ ի հաղբս կորստեան գտչանի որսողին, հան զիս բարեգութ։ Ի բանտ անելանելի խաւարին գործոց կաշկանդեալ տանջիմ, ծագեա առ իս զլոյս շնորհիդ և զերծո զիս ինաւանակալ՝ յաղաւոս-

Թիւն կենաց անվախճանից։

Դու ես յոյս իմ և ապաւինու-
Թիւն, դու իմ փրկու-Թիւն. քեզ
ակնկալեալ ապաս ամենամեղ ան-
ձըն իմ։ Քեզ փափագի հոգի իմ՝
մարդասէր, որպէս փափագի եղ-
ջերու յաղբերս ջուրց։ Ծարաւի
եմ ողորմու-Թեան քոյ, արբու զիս,
տանջեալ՝ի սուկ՝ յեղջերուց խաղից
կերակրիմ, զհայդ երկնաւոր չամ
բեա ինձ։ Մրուր դառնու-Թեան
մեզայ և մահու արբեալ տագնա-
պիմ չարաչար, զբաժակդ կենաց
մատուսակեա ինձ։ Մերկացեալ
զողամ յանապորուն աւազակաց
իշխանին մահու, զգեաստւոք լնա-
մոց քոց ծածկեա զիս։ Վիրաւո-
րեալ եմ՝ի Թիւնաւոր նետից ա-
ներեւոյթ Թշնամւոյն, բժշկեա
զհարուածս իմ։

Ո՛չ արա զիս զատախտաւորս ծա-
ռայ՝ որ կարդամ առ քեզ, [illegible]ար-

ժանաւոր երկնային հարանարանին
և անմահական սեղանոյն ընդ այ-
նոսիկ որք սիրեցին գ.քեզ ՚ի բոլոր
սրտէ , և պահեցին զպատուիրանս
.քո . զի ընդ նոսին փառաւորեցիջ
զամենագութ մարդասիրութիւն
.քո յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է։



ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ԱԻՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր լու՛ր աղօթից իմոց՝ ապա-
ղակ իմ առ քե՛զ եկեսցէ, և մի՛
դադարձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղու՛թեան իմոյ խոնարհ
հեցո առ իս զակնկն քո։ յորում
աւուր կարդամ առ քե՛զ՝ վաղվա-
ղակի լու՛ր լինիս։
Սպառեցան որպէս ծուխ աւուրք
իմ, և ոսկերք իմ որպէս խոտ չո-
րացան։
Հարայ ես որպէս խոտ և ցամաքե-

ցաւս սիրտս իմ, մոռացայ ուտել
զհաց իմ՝ի ձայնէ հեծութենէ իմոյ։
Կպեցաւ ոսկր իմ՝ի մարմին իմ, նըմ-
մանեցայ ես հաւալսան անապատի։
Նըմ ես որպէս բու յաւերակի,
սքնեցայ և եղէ ես որպէս ճնճղ-
ղուկ միայն՝ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօր-
հանապազ. և գոլիչք իմ ինեւ եր-
դնուին։
Օ՛մոխիր որպէս զհաց կերի, և
զըմպելին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտու-
թեան քո, զի դու բարձրացուցեր
և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին,
և ես որպէս խոտ յամաքեցայ։
Դու տէր յաւիտեան կաս, և յի-
շատակ քոյ յազգէ մինչեւ յազգ։
Դու յարուցեալ գթասցիս՝ի վե-
րայ սիոնի. ժամանակ գթալոյ նո-
ցա հասեալ է ժամ։

Գ՟Ի. Երթս զիս յորոգայթէ որսողին, և յամենայն վտանգից ապրեցո և ողորմեա։

Յաներեւոյթ թշնամւոյն և՛ի գաղանի նետից բանսարկուին պահեա, և ողորմեա։

Փրկեա զիս՝ և յանցանաց մեղաց իմոց, և նորոգեա զիս հոգւով գիտութեան, և ողորմեա։

Զով մեղաց իմոց զիս ալէկոծէ, որ ես նաւապետ բարի, շնորհեա ինձ նաւահանգիստ՝ հայր ամենակալ։

Խորք պատրանաց զիս կորուսանեն, այլ դու նաւապետ բարի, շնորհեա ինձ նաւահանգիստ՝ հայր ամենակալ։

Որ միայն իշխանդ ես թողուլ մեղս. և ես ապաշխեմ գքեզ տէր, թող ինձ զմեղս իմ հայր ամենակալ։

Ներձեալէ որ գալոյ քո տէր. լուր ձայնի աղօթից իմոց՝ որ կարդաման առ քեզ, և ողորմեաս։ Բանից իմոց ունկն դիր տէր, և ’ի միտ առ զաղաչանս իմ զառաւօտուս՝ որ կարդաման առ քեզ, և ողորմեա։ Որ ընկղմեալս եմ ’ի խորս չարեաց, աւրը զհոգիդ քո առաքեա առ իս՝ որ կարդաման առ քեզ, և ողորմեաս։

Ողորմեա ինձ Աստուած, զի քեզ միայնոյ մեղայ։

Առաւել լուա զիս ’ի տղմոյ յանցանացն՝ աղբիւր բժշկութեան, և ողորմեա։

Ցարենէ փրկեա զիս, որ հոգւոյ և մարմնոյ ունիս իշխանութիւն, և ողորմեա։

Վ. Խրատուրեալ յանցանօք անձն իմ. առ քեզ տէր հասի արձի զաչս իմ. Թող ինձ զմեղս իմ միայն բարեգութ, և ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութե քումէ

կործանեաց զնա չարագործ թշնա-
մին, և կամի իսպառ զնա որսալ.
հայր բարեգութ բժշկեա զվերա-
ւորեալս, և ողորմեա ինձ Աստուած
ըստ մեծի ողորմութեան քումմ:
Անդունդք մեղաց պաշարեցին զնա,
զի բազումք են քան զաւազ ծովու.
առ քեզ տէր պաղատիմ, փրկեա
՚ի վտանգէս, և ողորմեա ինձ Ա-
ստուած՝ ըստ մեծի ողորմութեան
քումմ:
Ո՛նանապական զհոգեւոր զգան-
ձըն յատականացու կենցաղս ծա-
խեցի. այլ առ քեզ միայն պաղա-
տիմ բարերար փրկիչ, խնայեա ՚ի
մեղուցեալ ծառայս:
Զանկ հոգւոյ իմոյ քակտեցի և
եղէ անբարուական արթ. այլ առ
քեզ միայն պաղատիմ բարերար
փրկիչ, խնայեա ՚ի մեղուցեալ ծա-
ռայս:
Ոտաքանց եղէ ես որպէս զարմա-

լեռնէ, ոտղակորոյս օրպէս ձիթենի. այլ անյիշաչար և անոխակալ փրկիչ լինայեա՝ ի մեղուցեալ ծառայս։

Ընտանեբոյն տաղաւար քարձուղէն բարձուղին, որ ծնար զաստուած մարմնով զանմարմնաբար ծնունդն Հօր, բարեխօսեա վասն մեր աստուածածնին Մարիամ։

Փառք Հօր և որդւոյ։

Որ վաւերար՝ ի յարփւոյն և ոչ կիզար զար լսա մարենւոյն, այլ եռուք զհայն կենաց կերակուր բանաւորաց, բարեխօսեա առ Քրիստոս՝ ընդել զիւր մեղաց մերոց։

Ա յժմ և ոդջ և յաւիտեան։

Ջկենդանապիր անարատ ծնողն քո արիանեմք առաջի անոխակալ տէրտերութեանդ քո. յորժամ դաս վարձք Հօր դառել զիշնամին խաչի քոյ, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի. ազաչեմք զքեզ տէր, պահպանեա

զմեղ ընդ հուպանեաւ խաչի քո սրբոյ։

Թագաւորք Ապաշխարութեան։

Ապաշխարութեան արտասուս
աւազան լինի, և լուանայ զբազ-
մութիւն մեղաց. սովաւ չնորհեա
յառաջ քան զվախճան զքաւու-
թիւն և զմեծ քո ողորմութիւն։
Ցարուսի է անձն իմ առ քեզ Ա-
ստուած հզօր և կենդանի. երբ եկից
երեւեցայց երեսացդ Աստուծոյ։
Եղեն ինձ արտասուք իմ կերակուր
՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ա-
սէին ցիս զօրհանապազ, Թէ ո՞ր է
Աստուած քո. սովաւ չնորհեա յա-
ռաջ քան զվախճան զքաւութիւն
և զմեծ քո ողորմութիւն։
Ցորժամ գաս փառօք Հօր յահա-
գին աւուրն ՚ի դատել զերկիր. և

դողան սարսափմամբ երկրած ինքս ամենայն ի յահէ քումմէ. ի նըս տիլ քո յատենի դատաւոր ահեղ, և յանկնարկել քո յարարած, յիշեա և զիս զաղմամելս. որ ընկղմեալս եմ յանցանօք բանսարկուին խաբմամբ. և հայցեմ զաւազակին, ոեր՝ և զիս յիշեա, որ միայնդ ես փրկիչ: Զիս որ ի նաւի աշխարհի ալեկոծեն մեղք իմ, նաւահանգիստ ապաշխարութեան շնորհեա ինձ բազումս զորմ, և կեցո:

Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղայ ես ի խորըս անդնդոց՝ ուր ոչ գոյ ինձ հանգիստ. նաւահանգիստ ապաշխարութեան շնորհեա ինձ բազումս զորմ, և կեցո:

Նաւապետ բարեգութ առ քեզ ապաւինիմ. տուր ինձ ձեռն որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփման ալեկոծեալ յանցա-

նօք մեղաց, և կեցո։

Դու ես Քրիստոս աղբիւր կեանց, բղխումն ողորմութեան. չընդունիս փրկիչ անձանց մերոց զանգուածումն մեղաց մերոց։

Ի քէն է տէր աղբիւր կենաց, և լուսով երեսացդ տեսանեմք զլոյս։ Ձապեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ. զարդարութիւնս քո՝ որք ուղիղք են սրտիւք. չնորհեա փրկիչ անձանց մերոց զթողութիւն մեղաց մերոց։

Որ աղբիւրդ ես ծարաւեաց, եւ հանդիսաս աշխատելոց. ճանապարհ մոլորելոց, և հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. փափաքողացս առքեզ Քրիստոս՝ լեր նաեւ հանդիսաս. և արբո մեզ ծարաւեացս զջուժակ քո քաղցրութեան յանապատ յաղբերէդ։

ԲԱՆ ՁԲՅ

Ա. Տէր Աստուած բարերար՝ բաղմապարգեւ Թագաւոր, կեն նաց պատուարան, լուսոյ կերպարան, լայնատարած հանդաստարան. որ յալագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. դուծեցեր զանպատուումն, և հանդերձեցեր զհրաշալիան, մինչ չեւ կատարեցեր զառեցեան ընդ ամենալիր աստուածութեանդ։

Բ. Ընդ՝ վան առաքելոյն սրբոյ յերկնատեղծ քո ձեռացդ ձեռնադրելոյ, և հոգեւոր սրբով օծելոյ. զորոյ զպոլեան արժանաւորութեան ըստ իմում կարի՝ առ ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեացիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութեան։ Ցաւիլ ինձ ե-

ղնչի նոքօք՝ և հանդերձեսցեն յե-
րանութիւնն փափաքելի. ձայն բա-
րի հաճութեան նոցին՝ ի յողջոյն
ինձ կենաց քաղցր լսելի: Զան
կալցէ ի յանեղծութիւն վրկու-
թեան տնեցեալ յուսոյն ընդ ա-
ռաջնորդսն կենաց, սկզբնաշնոր-
հիչն պատուոյ, փառաւորեալն
դասուց, գեղոյն բանականաց,
աւետարանչացն բարձանց, իշխա-
նացն պանծալեաց, լուսապայծառ
թագիւ պճնելոյն, ի զարդ ան-
կապուտ զօրութեան շնորհին պայ-
ծառացելոց, իւղովն զուարթու-
թեամբ տիրական լուսոյն կատարելոց:

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հր-
բանանի բարձրեալդ Աստուծոյ
Քրիստոսի՝ և մարտիրոսացն ընտ-
րելոց նահատակութեամբ, որք մա-
հացու և վշտաչարչարն մարմնով,
վտանգաւոր և ամենակիրն անդա-
մօք, երկրաւորական և հողեղեն

կուսածն բնութեամբ՝ մարտուցեալ
ընդ տարր գոյից ամենայն նիւթից
պահեցան բարձրացան և կենդա-
նացան հոգեպէս. արիաբար ել
եալք ի յերկրէ, ըստ մարգարէին
վկայ.ք ճշմարիտք ամենատիրձն մա-
հու. իմանալեացն անտեսին և
ծածկելոց՝ աներկբայ բարեացն՝ յոյ
սով տեսանելոցն առատն նկատիչ.ք.
աշակերտք առաքելոցն և չարչա-
րակից.ք նոցին. որ հաւատարեալ
գործով.ք ընդ նոսին, կատարեալ
լսմամբ անպակասելեաւ՝ պարեն ի
խրախճանս անկէտն երանութեան.
որոց հաճոյական և ընդունական
մաղթանօք, արիւնընծայ վաստա-
կանուէր քրիստոնէութիւն ազերսից
յարդմամբ՝ ընկալ զիս նորոգ լսո
նոցին մասին անեղծ փրկութեամբ
ի քեզ արձանացեալ:

Դ. Ընդ խաղաղեալսն հուրբ և
առաքեալք՝ արեամբ նահատելոցն, և

ձգնաւորացն սրբոց հարցն միանձանց՝ և քեզ հետեւելոցն որդի Աստուծոյ, անպարտեալ քաջութեամբ և անպատուիր զգաստութեամբ, ընդ դժնեայ պատուհասս մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ. սակայն վանեցին զանմարմինն քեզնից՝ և միշտամարտ հանդիսիս յաստղակից կենցաղոյս առանց զգուանաց ծանրաբեռնութեան՝ ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութեան զվերջին հոսացն թռուցեալ՝ ի նաւահանգիստն կենաց հասին. և նոքա սիրոյդ վերնամ վիճակին՝ առանց յետնացն մտածութեան, զի թագն յաղթութեան համարձակ կապէս պայծառ ճոխութեամբ պճնեալ իսկապէս՝ ի գլուխս կապեցին. վասն նորին արժանաւորմաղթանաց և նուիրական հայր-

աւծոց՝ և զիս զմեղաւորս ՚ի պատ-
ժականաց ընկալ ընդ նոսին ։

ե. Եւ ահա խառնեալ զանմա-
քուս բան՝ ընդ նախապրեալ եր-
ջանկացն փառատրական աղերսար-
կութիւն , որ վասն իմ գոչեն քեզ
՚ի հաճութիւն , և ես ընդ նոսին՝
երբ դառնութի՞ եղեալ ընդ քաղ-
ցու , կամ տառապ ընդ ոլորիւ-
թեան , տպեղութիւն ընդ վայել-
չութեան , և տիրմ ընդ գեղեցիկու-
թեան մարգարտի , կամ հող ընդ
յատակութեան ոսկւոյ , և կամ քա-
րինս անարդս ընդ պայծառութեան
արծաթոյ , բացատութեան ընդ
ճշմարտութեան . կամ աւազ լինչ
ատամնատուս ընդ կակղութեան
ղանդուածոյ հայկ . արդ լուր՝ հը-
զօր հնարաւոր գոլեալ , զնոցայն
վասն իմ և զիս ընդ նոսին ՚ի նո-
ցին գոլեաս , ՚ի փրկութիւն իմ և
՚ի փառս քո՝ ամենագութ , բարե-

բար, օրհնեալ, երկայնամիտ, կա-
ւղղ, անքննին, անճառ, անեղծ և
անաւեղծ: Քո են պարգեւք, քո
են շնորհք. դու սկիզբն և պատ-
ճառ բարեաց ամենայնի: Ոչ ես
դադարողութիւն, այլ ազատիչ. ոչ
ես կարուսիչ, այլ դարձիչ. ոչ ես մահա-
ցուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տա-
պարիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատ-
նիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ըն-
կեցմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլո-
րիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ,
այլ օրհնիչ. ոչ ես վհատաւու, այլ
շնորհիչ. ոչ ես թշուառացուցիչ,
այլ վախճարիչ: Ոչ եղծանես, այլ
պրես. ոչ սասանես, այլ հաստա-
տես. ոչ ոտն հարկանես, այլ սիւ-
ներս. ոչ պատճառս յօդես մահու,
այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես
'ի կամս չարժեալ սատակման, այլ
'ի փրկութիւն ողորմութեան: Ոչ
մոռանաս զայցելութիւն. ոչ լքա-

նես զբարի . ոչ արդելուս զգիտու-
թիւն . ոչ բերես վհիւր կորստեան,
այլ կուսակ աղաւաւթեան : Ոչ թըշ-
նամանիս յառաւաւթեանց . ոչ
բամբասիս ՚ի չնորհայ . ոչ հայհո-
յիս ՚ի պարգեւայ . ոչ նախատիս
՚ի ձրի ձրից . ոչ անգոանիս յերկայն
մտաւթեանց . ոչ եպերիս ՚ի նեղու-
թեանց . ոչ բանսարկիս ՚ի բարու-
թեանց . ոչ անպատուես ՚ի քաղց-
րաւթեանց . ոչ քամահիս ՚ի հեզու-
թեանց . ոչ առաքին այսոցիկ տըր-
տնջմունք , այլ անլռելի գոհաբա-
նաւթիւնք : Բարձ զմեղս իմ հզօր .
լոյծ զանէծս իմ օրհնեալ . քաւեա
զպարտիս իմ ողորմած . չնչեա ըզ-
յանցանս իմ դիտած . մատո մատն
այցելութեան , և անդատին իսկ
կատարեցայց . զի՞նչ քեզ տէր՝ քան
զոսկին դիւրագոյն , և կամ զի՞նչ
ինձ պարտաւորիս կարեւորագոյն :
Այլ կենդանագրեա բարեխնամ՝

քոյինաատեղծ պատկերիս՝ փչում
կրկին ի շունչ նորոգման լուսաւո-
րութեան մաքրական հնարի՝ զա-
մենամեղս ոգի պաշտպանեալ:

2. Ո՛ի ածեր ողորմած՝ ինձ օր
առաւժամ՚ի հանուռօսս երբի՝ ան-
թիշակ ապաձեռնութեամբ ընդ
անկատար ուղին հետեւել. մի մա-
տուցաներ բաժակ դառնութեան
՚ի ժամ ծարաւս. մի վակեր դը-
թած՝ իմ հանդէպ՝ դյաջողուած
հոգեւոր օգուս, և մի երբ յան-
կարծապէպ հինից ասպատակ՝ գի-
շեր մահուն ինձ պատահեցէ. մի
տալ ոօթոյն յանպատրաստ պա-
հուն՝ զարմաս հատեալ ցամաքե-
ցուցէ, և մի լուանական դիպ-
ւածք հասեալ գաղտնեօք վնասես-
ցեն. մի պահեցի ինձ սատն մե-
ղացս, և մի հոսանք ուղևից կեն-
ցաղոյս զիս ողողեացեն: Ա՛մ հան-
գիստն մահ բերիցէ, և մի նըն-

ջուանն ՚ի սատանայական յոռաճկեցեալ. մի քուն ինձ կորուստ լինի, և մի նիրհումն սպականութիւն գործեսցէ. մի վախճանն անյարմար՝ ՚ի վերայ իմ արշաւեսցէ, և մի չքնաջայս վերարձակութիւն ըմբռնեալ ՚ի խառնարհ լքցի։

Դու ես տէր, դու պճած, դու բարերար, դու երկայնամիտ, դու ամենակարող. աւ ամենայն բան անհասութեան անճառ զօրաւոր, քաւել, փրկել, կենդանարծել, լուսաւորել, վերստին հաստատել, ՚ի ժանեաց կերչաց գաղանաց և կամ յատամանց վիշապաց ՚ի կեանս կոչել, ՚ի խորոց անդնդոց ՚ի լոյս բերկրութեան ածել, և ՚ի հեղձմանէ ծփանաց մեղաց, ընդ արդարս երջանկաց փառաւք բազմեցուցանել։ Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով ապասէ, կարօտ սեպ քումդ չնորհաց. եթէ եր-

կնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղաք, և եթէ ամբարձեալն արդարութեամբ, եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տիկին, և եթէ աղախին. և՛ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորից: Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք սուրբ Հոյրն Երկնաւոր, Յովհաննու գառնեցւոյ ասացեալ:

Ով արարչական դիմով կենդանի նաճնես զարարածս քո, և խնամես քաղցրութեամբ՝ Աստուած իմ և տէր. որ յայսմ աւուր ամենազօր հրամանաւ քով հաներ՛ի ջուրց զեռունս չնչոց կենդանեաց և զկէտս մեծամեծս և զթռչունս թեւաւորս, և աստուածային օրհնութեամբ

քավ օրհնեցեր զնոսա աճել և բազ-
մանալ ՚ի վերայ երկրի :

Ընդ՝ աղաչեմ զանխափոխել տերութիւն բարերարութեան քո, օրհնեա և զիս զառն ղծուածս ամենակալ ձեռին քո ծննդաբեր լինել զործոց առաքինութեան : Եւ ըզսերմն հոգեւոր կենաց՝ զոր անդաստին բնաւորեալ ես ՚ի խորս մտաց իմոց, զօրացո զիս ածելոյ ի կենսաբեր խորհրդով ՚ի ձեռն Հարց և ոգւոյ սրբութեան քո, զոր տուս ամենայնի և ոչ նախատես, զի դու նայն ես՝ և ամք քո ոչ պակասին . բանաս զձեռն քո , և լցուցանես զպէտս և զկարիս ամենեցուն յանապատ զանձուց քոց : Մի թողուր զիս տէր իմ՝ ամուլ և անբեր գործոց բարութեան . մի անտես առներ զառաւատեալս ՚ի քոց լինամոց զանս բարեմտութեան յանցանաց իմոց : Խոնարհեցո զունկն

քո՝ և լաւ լինիմ, զի ալքատութեան
՚ի բարեաց. ստուգապանեցի կեն-
դանի պատուիրանաց քոց, և յօժա-
րեցայ հաճել զկամս անձին իմոյ:
Յարդարեցեր զիս տաճար կեն-
դանի արարչութեան քում, և ես
զանձն իմ պատրաստեցի բնակա-
րան առեալից քոց դիւաց: Պատ-
մուճան լուսապեսպ զգեստեցեր
լինիմ ՚ի հոգեւոր ծննդեան, և ես
արկի զանձամբ հանդերձ խաւա-
րի մեղաց և մահու: Եղուր լինիմ
սիրտ մարմնեղէն խոկալ յօրէնս քո
յամենայն ժամ, և ես աման խոր-
հրդոց անօրէնութեան յօրինեցի:
Կարգեցեր յիս լսել ՚ի լաւ պատ-
ուիրանաց քոց, և ես բացի առ
հրամայեալս բանսարկուին: Կազմե-
ցեր յիս լեզու գործի օրհնութեան
և ես չարուչար վարեալ՝ արարի զկեն
անիրաւութեան: Սերմանեցեր ՚ի
մէնս իմ սերմն բարի առաքինու-

թեան, և ես փուչ դժնդակ մո-
լութեան բուսուցի ընդ այն։ Ըզ-
բարիան զոր պարգեւեցեր ինձ շա-
հիլ նոքօք զկեանս, անմուռ թեամբ
խոով վարեալ ՚ի անուտիս՝ ստացայ
ինձ մահ և կորուստ։ Տիրական իշ-
խանութեամբ և փառօք պատուե-
ցեր զիս, և ես կամաւ մատնեցի
զանձն իմ ՚ի ծառայութիւն մեղաց։

Եւ այժմ առ քեզ ապաւինեալ
աղաչեմ բարեգութ՝ քաւեա ըզ-
յանցանս իմ, և նորոգեա զիս շը-
նորհօք ողորմութեան քո։ Ծարա-
ւի եմ առ քեզ Աստուած իմ, որբեւ
ինձ զջուրդ կենդանարար։ Ան-
գահար եղէ ցանկութեամբ չա-
րեաց, արկ զիս ՚ի բովս հալոցաց,
և արբեա հրով սիրոյ քոյ։ Բաղձանք
երկրաւորեայս տարապիր արար զիս
առ ՚ի քէն, կարկառեա առ իս զա-
ջըդ ամենալօր, և մատոյ զիս առ
քեզ։ Փոխանակ մշանջենաւոր և

անանց փառաց, զդիւրթղճական և զապականացուն սիրեցի. մի թո-
ղուր զիս ի կամս իմ:

Տեղացին ի վերայ իմ թռունա-
ւոր նետք աներեւոյթ թշնամ-
ւոյն, լեր ինձ վահան ամրութեան և տեղի ապաւինի ապրեցուցանել զիս: Խորհուրդք չարեաց հարին զհոգիս ի հարուածս անողջանալիս, մաւիր առ իս գթութեամբ, և բժշկեա ամենահնար: Թշնամիք զանձն իմ պաշարեցին և ի լարս խաբէութեան իւրեանց արկեալին, զարթո զղջութիւն քո՝ և եկ ի կեցուցանել զիս: Մերկացուցին զիս անապարհունք, և վէրս ի վերայ վիրաց յաւելին. զի ոչ զգեցայ ըզ-
զրահն արդարութեան, և ոչ եդի ի գլուխս իմ զսաղաւարտն յուսոյն փրկութեան. ոչ առի զվահանն հաւատոյ, և ոչ զսուր բանին Ա-
ստուծոյ. այլ գու հզօր և ամենա-

կար՝ առ ղէն և զասպար քո, և ա-
րի յօգնել ինձ. խորտակեա զզօ-
րութիւն հպարտացեալ բռնաւո-
րին, և առա դու ցանձն իմ՝ թէ
փրկութիւն քո ես եմ: Տրտմեալ է
անձն իմ մինչեւ ի մահ, մխիթա-
րեա զծառայ քո: Ապերախտ զը-
տայ առ երախտաւորդ, և բարեա-
ցուցի զանբարեկանալն բնութիւնդ,
այլ դու անյիշաչար՝ մի հատուցա-
ներ ինձ ըստ անօրէնութեան ի-
մում, այլ ողորմութիւն քո քաւեա զիս:

Ո՛ր քեզ աղաղակեմ ի խորոց
անդնդոց՝ յոր ընկղմեալ եմ; որ-
պէս Յովնան ի փորոյ կիտին. հան
զիս ի վհէս խաւարի՝ վերաբերեալ
ի լոյս կենացդ յաւիտենից: Խնդրա-
ւորեալ եմ յանդունդս մեղաց
կորեան, մատո զաջդ ամենազօր
և փրկեա զիս:

Տանջիմ հանապազ ի խղճէ մը-
տաց, զի դառնացուցի զքաղցրա-

գութ տէրդ իմ. և յոյդ վարուք
նական խորհրդոց աններելի տան
Ջանացն՝ արժանաւորեալ ինձ,
և իբրեւ լեռնացեալ ամենի աչեօք
հոգմակածեն զանձն իմ. բարերար
և անհատակալ՝ հզօր այցելու՝ օգնեա
ինձ, և հանդարտեցս զմրրկեալ ա-
լիս խռովութեան մտացս ցօղով
գթութեան քո։

Նաղմութիւն անօրէնութեան
իմոյ որպէս հեղեղք պղտորեալք
գարնանատպայր գետոց՝ ողողեցին
զմեղուցեալս. այլ դու մարդասէր՝
ընչեա զհոլմն քաղցրութեան կա-
մաց քոց, և յամաքեցո զհոսանս
չարեաց իմոց. և ողորմութեամբ
քով քաւեա զանօրէնութիւնս իմ,
և Թուականիդ արա սիրելեաց ան-
ուանդ քում մտքոյ. զի ընդ նոսին
փառաւորեցից զանհատակալ մար-
դասիրութիւն քո, այժմ և միշտ
և յաւիտենից յաւիտեան. ամէն։

Յիշեա զիս տէր յորժամ գաս արքայու-
թեամբ քոյ։



ՈՒՐԲԱԹ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԱՐՈՒԹԵԱՆ

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում։
Ականջք քո՛ի լսել ձայն աղաչից իմոց։
Թէ զանօրէնութիւնս իմ քննես՝ տէր տէր. ո՞ կարէ կալ առաջի քո, զի՛ քէն է քաւութիւն։
Վասն անուան քո համբերի տէր. համբերեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ՛ի տէր։

Ի պահէ առաւօտու մինչեւ յերե-
կոյ, Ի պահէ առաւօտու յուսա-
ցաւ խրոյել Ի տէր։
Ի տեառնէ է ողորմութիւն քա-
զուա՛. Ի նմանէ է փրկութիւն, և
նա փրկեաց զիսրայէլ յամենայն
նեղութեանց նորա։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Գն՛. Վ՚Հրիստոս Աստուած Ա-
տուծոյ՝ ողորմեա։
Անօրէնութեամբ Ի մեզս երկնեաց
զիս մայր իմ. ալաչեմ փրկիչ՝ ողո-
մեա։
Վիրաւորեալ մեղօք անկանիմ առ-
քեզ Փրկիչ. Մի անտես առներ՝
ողորմեա։
Աղքատութեան հատաչանօք Ի տա-
ճարին եաո զքաւութիւն. նովին

ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա
ինձ Աստուած։
Ա֊ազգին աղաղակեր ՚ի խաչին՝ յի֊
շեա զիս տէր. նովին ձայնիւն և
ես գոչեմ, ողորմեա ինձ Աստուած։
Անառակ որդին աղերսանօք աղա֊
չեր զքեզ, հայր՝ մեղայ յերկինս և
առաջի քո. նովին ձայնիւն և ես
գոչեմ, ողորմեա ինձ Աստուած։
Ընդհեա մեզ տէր՝ ընդ աղ֊
քատաց օրինակին Ղազարու ժուժ֊
կալութիւն, զի կամաւոր ապ֊քա֊
տութեամբ՝ արքայութեանդ երկ֊
նից ընդ նմին լեցուք արժանի. լսեր
մեզ՝ և ողորմեա քրիստոս Աստուած
Որ փոխանակ հացին կարօտութե֊
ղհացն անմահութեան նմա ընդ֊
հեցեր. և ընդ մեծատանն անդ֊
թութեան՝ ՚ի գոն Աբրահամու
զնա ընկալար. լսեր մեզ՝ և ողոր֊
մեա քրիստոս Աստուած։
Լուսաւորեա զաչս սրտից առանձ

մեզ ողորմութեամբ ի քէն տէր՝ զողորմութիւն, զի մի ընդ մեծա-
տանն հայցեսցուք ի բոց հնոցին՝ ծագիւ մատին ջուր ի զովացու-
ցուր մեզ՝ և ողորմեա քրիստոս Աս-
տուած ։

Ընկերքն Աստուած զհայրն ամենակալ բարեբանեցէք ընդ ըզ-
սարթուն երկնից ։

Զառ ի հօրէ ծնեալ զՈրդին միա-
ծին՝ բարեբանեցէք հրեշտակային
ձայնիւ ։

Եւ զնորոգող սուրբ զհոգին ձայ-
նիւ ցնծութեամբ բարեբանեցէք
անլռելի ձայնիւ ։

Ընկերքն Աստուած և թագա-
ւոր երկնաւոր՝ բարեբանեալ ի զա-
րաց անմահից երկնաւորաց, զքեզ
օրհնեմք հայր անակնկալն ։

Խոնարհեցար ի բարձանց վասն մե-
րոյ փրկութեան՝ արձակիչ կապե-
լոց՝ և բժիշկ հոգւոց և մերոց, զքեզ

գովեմք Աստուած միածին։
Որ հակիցդ ես ընդ հօր և փառա-
կից միածնիդ, բաշխող պարգե-
ւաց և տուող ողորմութեան, ըզ-
քեզ բարեբանեմք սուրբ Հոգիդ
ճշմարիտ։

Որ զլոյս առաւաձային քո բա-
նի ծագեցեր յաշխարհամած խա-
ւարն անդիտութեան, լուսաւո-
րեա և զմեզ հօր լմաստութիւն։
Որ զհամօրէն գառաստանին օրի-
նակ նշանակեցեր առ մեծաւորն
և Ղազարոս, ներհակաբար տալով
զոր աստ ընկալան։
Վասն որոյ աղաչեսցուք զքեզ տէր
փրկել զմեզ ի հրոյ մեղաց և տան-
ջանաց, հանգչել ի գոգ նահապե-
տին արդարոյ։
Որով և մեք ընդ հրեշտակացն գա-
ւաց անբաժանելի սուրբ Երրոր-
դութեանն համաձայնեալ երգեմք
զփառս ի բարձունս։

Ուրախացիր բարձրելոյն հավա
նացեալ ջրոսիթեամբ, և բնակա
րան սուրբ հոգւոյն, որով ծնար
զքանն Աստուած. բարեխօսեա
վասն մեր աստուածածնին Մարիամ:

Փառք հօր և որդւոյ:

Աղերսեր կենաց բղխեալ ՚ի ձեռանէ՝
սուրբ Աստուածածնին, որով ար
բեցար երկիր ծարաւուտ հոգւոյն
իմաստիւք. տալ մեզ մաղթեա աղ
բիւրս արտասուաց, մաքրել զմեզ
՚ի մեղաց մերոց:

Այժմ և հղիս և յաւիտեան:

Քեզ ցնծան ստորայինքս ամենայն
՚ի միաբանութեամբ գոչեսեանն. և
յաւէժ զսաղմանան գոյք անձ
մարմնոյն առ էից:

Թագաւորք Ապաշխարութեան:

Ի տաճարի սրբութեան քում
լուր առեր ձայնիւ խնդրոյ. և աղա-

ջանք իմ ժամանեսցեն ի յականջս
քո տէր ։
Լուար ինձ ի տամարէ սրբոյ իւր
ի ձայնի աղօթից իմոց . և աղա-
չակ իմ առաջի նորա մտցէ յական-
ջըս նորա , և աղաչանք իմ ժամա-
նեսցեն ի յականջս քո տէր ։
Որ լուար առաւ ես տիեզերայդ Քրիս-
տոս Աստուած , լուսաւորեա զիմ
զխաւարային խորհուրդս , և կեցո ։
Օրհնեալ ես տէր , և փառաւորեալ
ե քո անքնաւ մարդասիրութիւնդ .
զաղաչանս մեր քեզ մատուցանեմք,
որ թափառորդ ես յաւիտենից . ըզ-
ննջեցեալսն մեր արժանի արա տէր՝
ընդունիլ ի կենանդ յաւիտենից ։
Արտասուս ինձ շնորհեա ի յատա-
խտութիւն տէր , զի լուացից ըզ-
մեղս անձին իմոյ որպէս պտուղիկն.
աղաչեմ և կեցո ։
Զատակեցայ ես ի հեծութեան
իմում . լուսոյ զամենայն գիշեր

զնահիճս իմ, և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացի, զի լուացից
զմեղս անձին իմոյ որպէս պատնէ-
կըն. ապաչեմ և կեցո։
Որ ապըխ ըզ ես անապական քրիս-
տոս Աստուած. զվիրաւորեալ ան-
ձըն իմ՝ի մեղաց՝ բժշկեա տէր բըլխ-
մամբ արտասուաց և կեցո։
Ո՛մոլորեալ ծառայս խնդրեա
տէր. և մի դատապարտեր զնա՝ի
յաւուրն այցելութեան քո մար-
դասէր։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես՝որպէս զչխար կո-
րուսեալ. խնդրեա զծառայս քո՝
զի զպատուիրանս քո ես ոչ մոռա-
ցայ. և մի տատապարտեր զնա՝ի
յաւուրն այցելութեան քո՝ մար-
դասէր։
Որ մոլորեցայ՝ի հօտէ քումմէ, հո-
վիւ բարի՝ խնդրեա զնա զմոլորեա-

լըս , և արժանաւորեա խառնիլ ՚ի
հօտ քո Քրիստոս , և կեցո ։

Ի խորոյ սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

ԲԱՆ ՀԲ ։

Ա. Ով քանզի օր է օրհնաբա-
նեալ և լուսանորոգ՝ կշռութեան
երկուց ընտրութեանց՝ արարածո-
ցըս սատանութեանց՝ յեղանակելոյ
յայլ լինն էութիւն երկնակենցաղ
անխոնջադրելի , ամբարձելոցն խո-
նարհութեան և կործանելոցս վեր-
բերութեան , սարսափելի ուրբա-
թուս մեծի պատերխս . յորում եկն
եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ
զայս նուագ ձայնի հեծութեան՝
զուարճախառն երկիւղիւ . ահա
ընձայել համարիմ առել աստուածո՛յ
քոյոյ այսի՝ զոր ընդ իմ կրեցեր ։ ։

Աստուած բոլորից։

Ե. կացեր յառնելի քում՝ ըստ տեզծուածոյն իմում կերպիւ. ոչ խօսեցար՝ տուիր բանի. ոչ բարբառեցար՝ հաստիր լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ առաքիր երկնի. ոչ մռնչեցեր՝ ամենապղեցիկ փողդ մեծութեան. ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչն զքեզ տանջանաց մահու. ոչ՝ի կապեն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յատուտակեն զժուարութեան. ոչ՝ի թլբնուն թշնամանեցեր, և ոչ ընդկուիեն երեսիք խուովեցար. ոչ ընդկատակեն սրտմտեցար, և ոչ ընդխաղ արկանեն երես փոխեցեր։ Սերովբեացուցին զզգեստ պատմուճանին լերթեալ՝ի տկարէ, և զարձեալ ապուշին լեր անվրիանալ ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր արբեալ

կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լե-
ղեայ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մը-
թերեալ նախանձ դառնութեանն.
ճաշակեաց վհատութեամբ, և ար-
գել անդէն տարակուսանօք. առին
մոլեգնաբար, և դարձեալ մատու-
ցին անպատկառապէս: Գանիւ
հարուածոց յետին անարդութեան
՚ի մէջ խառնիճաղանջն ամբոխի
դատապարտեցին. ծունր կրկնեցին
նախատանաց, և պատկ եդին ար-
համարհութեան:

Գ. Ոչ եւս՝ հանգիստ կեն-
դանարարիդ, եթէ ոչ՝ զպտղի մա-
հուն կրել քեզ պատրաստեցին.
ընկալար իբր երկայնամիտ, առեր
իբրեւ ղհեզ, բարձեր որպէս համ-
բերող, ըստանձնեալ իբր զպարտա-
կան՝ զփրկեան վշտաց: Որպէս զծա-
ղիկ շուշանաց հովտաց՝ ուսում բե-
րեալ զկենն կենաց, զի յարհաս-
տաց գիշերայնոց՝ զիւրակերտս գա-

հաւատակս մատնեալքն գոյութեա-
նըս՝ պահպանեցէ՛ ի դատապար-
տութենէն վայրի՝ եւ՛ ի խրատ-
ման խնամոյից։ Հանին արտաքս ի-
բրու ղողկակէզ. կախեցին եւ՛ ըզ-
խոյն սաբեկայ՝ ձգեալ զերկերացն.
տարածեցին՛ ի սեղան խաչին եւ՛
զպատարագ. բեւեռեցին որպէս
չարագործ. պնդեցին եւ՛ զասլըս-
տամբ, զխաղաղութիւնդ երկնա-
ւոր՝ եւ՛ զաւազակ, զանկատուա-
մեծութի՛ն եւ՛ զտառապեալ, զաւ
՛ի բրտութենէ պաշտեցեալդ՝ եւ՛ ըզ-
քամահեալ, զսոհմանդ կենաց՝ ի-
բրու զարժանաւոր ատելման մա-
հու. զաւետարանիս նկարիչ՝ եւ՛
ցնայհոյիչ օրինին. զերեր և զկատա-
րումն մարգարէից՝ եւ՛ զհամառօ-
տիչ դրեցելոցն, զձառապայթդ
փառաց՝ և՛ զինեալ անբնին խորհրդոց
հօր՝ եւ՛ զնեարհակ ծնողիդ համայ-
զօրհնեալդ խակապէս՝ եւ՛ զտառա-

պրեալ. զկատպ օրինին լուծիչդ՝ իբր զայր ի նզովս պրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալա-նաւոր. զահաւորդ երկնի և երկ-րի՝ իբր զհաւատի պատժաւոր. զ՚ի լոյս ունմատոյց ծածկեալդ՝ իբր զհոգածին ընդունեալ։

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ և եր-կայնամիտ բարերարութիւնդ ո՞ղորմածիդ գթութեան, որ վան ապականաւոր և անօրինեալ ծառա-յիս՝ ոչերդ բոլորից՝ զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական հաճութեամբ տարեալ՝ մարմնոյդ մխութեամբ ի քեզ ընկալար. եւ մինչեւ ի քնարան հնոմին տապանի անպակաս ի լուծենէ ամբողջնոյ-նութեան Աստուած անքննին՝ զը-նոյն կրեալ նախատինս անճառ համբերութեան, յարեար կենդա-նի ինքնիշխանի բարձրութեամբ լու-ոյ՝ անեռազ մարմնով և անթե-

ի աստուածութեամբ : Օրհնեալ փառօք, գովեալ պիտութեամբ, բարեբանեալ միշտ ողորմութեամբ, յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու գառնեցւոյ ասացեալ :

Լապէս բարի և ամենակարող զօրութիւն Աստուած յաւիտենական, որ յայտնի առուր հրամայեցեր երկրի, և եհան զանասունս և ըղ աղաղունս և զպաղանս ըստ ազգի . և չհանդուրժեալ բնութեամբ բա րինդ՝ արարեր զմարդն ի հողոյ ի պատկեր և ի նմանութիւն արար չապեսիդ տիեզերաց, և կացու ցեր ոտեր և իշխան ի վերայ բոլո րեցուանց քո արարածոց, և զուշա ցուցեր զնա կալ ի պատուիրանի քում, և վայելել ըզարիան՝ զոր

եւտւբ նմա ձրի եւ առանց փոխա-
րինի ի քումմէ առաւուլթենէ ։

Եւ արդ տէր իմ եւ Աստուած
իմ՝ որ զիս հազա անարդութեան
այսպիսի անկշռելի բարութեամբ
բարգաւաճեցեր , ես ինքնին հրա-
պուրանաց թշնամւոյն կենաց ան-
ասցեալ՝ պատուհասանաց կենարա-
րիդ հեատեցի . և օտարացայ ի
նմանութենէ հաստատղիդ իմոյ Ա-
ստուծոյ . եղծի զգեղեցկութի կեր-
պարանաց հոգւոյս՝ ազդի ազդի ա-
նօրէնութէք , և ոչ զարհաւրեցայ ։

Պերճացուցեր զիս իմացական
մտօք խորհիլ ի քէն և ընտրել
զարին . իսկ ես վարեալ անմտու-
թեամբ՝ յօժարեցայ ի չարիս ։ Ամ
բարձեր զիս ի նմանութիւն աստ-
ուածութեանդ քո անձնիշխան կա-
մօք , և ես ծառայ եղեալ կրից մար-
միոյս՝ հաւասարեցայ անասնոց ան-
բանից ։ Թողի զլոյս հրամանաց քոց՝

զոր եւտուր ինձ առաքինորդել նովաւ
պղնացս ոտից իմոց ի ճանապարհ
ուղիղ երկնից օրհնեւանին, և ես
ընդ խաւար գնացեալ՝ անկայ ի խոր
խորատ անեղանելի կորստեան վէի։

Այլ դու մարդասէր և երկայ-
նամիտ՝ մի խոպան բարկանար ինձ,
և մի ոխս պահեր յաւիտեան. զի
ի քեզ անկայ ես յարպանդէ, և
դու ես Աստուած իմ և տէր։ Զի
Թա յիս ի գործս ձեռաց քոց, և նո-
րոգեա զկանդարեալ մեղօք պատ-
կերս բարերարութեան քո ի ձե-
ռըն աստուածեղէն շնորհաց քոց։
Լուսաւորեա զաչս մտաց իմոց ու-
ղղել զշաւիղս իմ ի ճանապարհս օ
րինաց քոց։ Սանձակոծեա զերկրա-
քարշ բաղձանս և զանբան կրից
բռնութիւն երկիւղիւդ քով սրբ-
բով։ Վառեա զհոգի իմ սիրով աս-
տուածութեանդ քո՝ մատուցանել
պատարագ օրհնութեան ըստ հա-

ձայիւ բարեբարութեան քո։ Մի՛ թողուր զիս ի ձեռս թշնամւոյն փրկութեան իմոյ, որ հանդերձեալ է արկանել զիս ի խաւարն արտաքին. այլ լեր այցելու բարեգթութեամբ քով, և փրկեա զիս։

Ընկաւ բեկաւ զօրութիւն իմ ի մահաբեր հարուածոյ հակառակորդին, և մեղք իմ կոտցան ի հող ի ծանրութենէ բեռանցս մեղաց. այլ դու ողորմած՝ յարո ըզբազմամեղ անձն իմ, և զօրացո զիս թօթափել զչարիս, և խոկալ զիըբսանանս օրինացդ քոյ։ Հարայ ի թունոյ աներեւոյթ վիշապին, և մահ անմեռ կայ առաջի իմ յամենայն ժամ. զթա յիս օրհնեալ և ամենողորմ, և մատո ինձ զդեղթափ ապաքինիչ երկնաձիր շնորհաց քոյ, զի կեցից և փառաւորեցից զանձառ մարդասիրութիւնդ՝ այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն։



Աջակէտ մայր Աստուծոյ գխիտծին ըս
ձմրդի, զի չնորհեցէ մեզ ըստ ու.աջա-
կին գդրախտին փափկու.թիւն



ԵԱՒԱԹ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր լուր աղօթից իմոց, ունկն կալ դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քոյ։
Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։
Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ։ ԵՒ նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և՝ սիրտ
իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառաջինս, խոր-
հեցայ յամենայն գործս քո, յարա-
տութս ձեռաց քոց խորհեցայ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ։
Ընձն իմ որպէս երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր՝
զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։
Մի դարձուցաներ զերեսս քո յիս
նէն, նմանիցիմ այնոցիկ որ ի-
նեն ՚ի գուբ։
Լսել արա ինձ առաւօտու զողոր-
մութիւնդ քո, զի ես ՚ի քեզ տէր
յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհ յոր և գնա-
ցից, զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց տէր՝
զի ղքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո, զի
դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր կեցուսցես
զիս արդարութեամբ քով, հան-
ցես ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա զը-
թշնամիս իմ, և կորո զամենայն նե-
ղիչս անձին իմոյ, զի ես ծառայ
քո եմ։

ՀԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

ԷՅ. Համբառնամ աւ քեզ
տէր զաչս իմ, նայեա յիս գթու-
թեամբդ քո, և ողորմեա։
Դու ես յոյս և ապաւէն իմ, զեր-
ծո զիս յորոգայթէ մեղայ, և ողոր։
Ապրեցուցիչ իմ և փրկիչ իմ, ապ-
րեցո զիս յորոգայթէ մեղաց, և
ողորմեա։
Ողորմութեամբ յանցանօք ծան-

րաբեռնեալ է անձն իմ. միայնոյ
քեզ մարդասիրի աղաչեմ. ողոր-
մեա ինձ Աստուած:

Բղխեսցէ արտասուս և հառա-
չանօք սրտի իմոյ անդադար հայ-
ցեմ բազմամեղութեամբ. քաւեա
զիս Աստուած:

Բազմապատիկ մարդասէր՝ հնարհեա
զթութիւն իմոյ յանցանացդ, զի
առ քեզ միայն պաղատիմ. քաւեա
զիս Աստուած:

Ընտուած մարդասէր՝ որ զմեզ-
ս աւուրն արդարացուցեր. քաւեա
զիս զմեղաւորս:

Որ քաղցիւս հանդերձի քո զմեզ
ձեցեալն ՚ի քեզ բժշկեցեր. քաւ-
եա զիս զմեղաւորս:

Որ բանիւս հրամանի քո զանդա-
մալոյծն առողջացուցեր. քաւեա
զիս զմեղաւորս:

Որ զաղաղակ կնոջն այլազգւոյ առ-
ընկալեր՝ փրկիչ մարդասիրապէս,

և զիմա ապաշխարութեան արա արժանի զձայն մեղսացելոյս ընդունողդ
Որ հառաչմամբ ձայնի աղաչանոյն ոչ լսեցեր՝ վրկիչ ընդունակ մեղաւորաց, և զիմա ապաշխարութեան արա արժանի զձայն մեղսացելոյս ընդունողդ։

Որ զառաջնապարգեւի քո նչխար ոչ խնայեցեր ընձեռել չանն հովւասիրի, և զիմա ապաշխարութե արա արժանի զձայն մեղսացելոյս ընդունողդ։

Ընկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց. մի՛ անտես առներ հայր՝ զաղաչանս իմ։ Աղաչակեմ որպէս մաքսաւորն, և հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս պառնիկն. մի՛ անտես առներ հայր՝ զաղաչանս իմ։

Ցաներեւոյթ թշնամւոյն պարտեցայ, և՛ ի գաղանի նեռէ բռնաւորեալ եմ վիրաւորեցայ. մի՛ անտես

առներ հայր՝ զաղաչանս իմ։
Ընկանիմ առաջի քո տէր, բազ-
մամեղիս ողորմեա ։
Աղաղակեմ առ քեզ վրկիչ քանա-
նացւոյն զձայն, բազմամեղիս ո-
ղորմեա ։
Մաքսաւորին հառաչմամբ կար-
դամ առ քեզ վրկիչ և բարեբար,
բազմամեղիս ողորմեա ։
Ողորմեա ինձ Քրիստոս՝ ողոր-
մութեամբդ քո մեծաւ, զի կա-
րօտ եմ ես ընդհի քո և ողորմու-
թեան, ողորմեա և լուր ինձ բազ-
մամեղիս ։
Լուր տէր ձայնի ողբալոյս և ցա-
ւագին պաղատանացս, որ առ-
թով կամ առաջի քո իմ չարաչար
վարուքս, ողորմեա և լուր ինձ
բազմամեղիս ։
Ընկալ տէր զաղաչանս իմ և զհա-
ռաչանս սրտի իմոյ, որ ազաղակեմ
որպէս կլինն քանանացի, ողորմեա

և լսեր ինձ բազմամեղիս։

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու։ և կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր զմահացեալքս ի յաւիտենական անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ։

Փառք հօր և որդւոյ։

Որ անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն. Մարիամ մայր Աստուծոյ, բարեխօսեա առ միածին Որդին լուծանել զկապանս մեղաց մերոց, և աղաչեա փրկել զանձինս մեր ի վտանգէ։

Այժմ և միշտ և յաւիտեան։

Բանն անեղ համագոյ որ ընդ հօր և սուրբ հոգւոյն երեւեալ ի յերկիր պայծառացան արարածք. հնչին կարողութեամբ և զմեզ վերացոյց յորդեգրութեանն։

Եւ Քրիստոս Աստուած՝ յոյս ապաշխարութեան, շնորհեա զիմ ղութիւն բանալ յանցանաց իմոց։ Առ քեզ բարմադուիմ՝ ապաւինեալ կարդալոյ, մի մերժեր զիս յաղերմութենէ քումմէ։

Որպէս զաւազանն ազդակեմ առ քեզ, յիշեա և զիս աեր՝ ի քում յարքայութեանդ։

Օմեք խոստովան լինիմ առ քեզ Քրիստոս, որ միայնդ ես բանալ մադութ Թողութեամբ. ողորմեա ինձ Աստուած։

Դու աեր՝ որ ճշմարտութեանդ ես սիրող, և քննես զծածուկս գաղտնեաց սրտի իմոյ. ողորմեա ինձ Աստուած։

Տուր ինձ ցնծութիւն փրկ լթեան, և հոգւով աերութեանդ քո հաստատեա զիս. և ողորմեա ինձ Աստուած։

Ընկեր յանցանաց զիս ածկեսցեն,

և մեղք իմ բաղում վիս յանդի-
մանեն։

Արդ վինչ արարից մեղուցեալ
անձամբս, որ չեմ ապրելոց յահա-
պին հրոյն։

Մեզայ քեզ Քրիստոս որդի Ա-
ստուծոյ. ընդհեա զմեղսութիւն
բաղում յանցանաց իմոց։

Տէր՝ որ ի մէջ լերինն ապրեցա-
ցուցեր զՅովն ի վիմէն։

Տէր՝ ի սրտէ իմմէ հան ինձ արտա-
սուս ապաշխարութեան։

Զի կեցից և ապաշխարութեամբ
ապրեցայց ի հանդերձեալ քոց
դատաստանոյ։

Ողորմեալ անձամբ կարդամ
առ քեզ Հայր երկնաւոր, օգնեա
ինձ ի նեղութեանս՝ որ մեղաբս եմ
մեռեալ. օգնեա ինձ։

Վիրաւորեցայ ես յանեպսպիծ մըղ-
նամոյն. բժիշկ հիւանդաց՝ բժշկեա
զիս զհիւանդութիւս, որ մեղաբս եմ

մեռեալ. օգնեա ինձ։
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորու-
սեալ. խնդրող զերեզց՝ խնդրեա
զիս զմոլորեալս, որ մեղօքս եմ մե-
ռեալ. օգնեա ինձ։
Աղջայ քեզ տէր՝ քաւեա զիս,
և ողորմեա ինձ Աստուած։
Ոչխար եմ բանաւոր հօտի քո, և առ
քեզ ապաւինիմ հովիւ բարի. խնդ-
րեա զիս զմոլորեալս, և ողորմեա ինձ
Աստուած։
Ի ծովու մեղաց ալեկոծեալ եմ, և
առ քեզ ազաղակեմ՝ նաւապետ
բարի. փրկեա զիս ի վտանգէս, և
ողորմեա ինձ Աստուած։
Վայն որոյ աղաչեա մայր Աս-
տուածոյ Մարիամ զմիածին քո ղոր-
ծին, զի չնորհեսցէ ըստ աւազա-
կին ժառանգել վերսին մեզ ըզ-
դրախտին վայելչութիւն։
Փառք հօր և որդւոյ։
Ցնծա Մարիամ արեգականն ար-

դարուԹեան արեւելք. և աղաչեա զաւ ի քէն ծնեալն Աստուած ման մեր, զի դարձուսցէ վերըստին զմեզ ի դրախտին ժառանգուԹիւն։

Ամէն և զկնի և յաւիտեան։

ՑաղԹող զօրուԹեամբ խաչի քո պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած, որ տարածեցեր զձեռս քո ի նմա, և լուծեր զկնիք դատապարտուԹեան յանցանաց մերոց՝ ապրեցուցանել զմեզ ի պատրանաց Թշնամւոյն։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ ԽԲ.

Ա. Ել արդ՝ զինչ գոյ ասել ամաչելոյս յերեսաց մեծիդ ահաւորուԹենէ, բայց եԹէ համ

ցանալ, և հող ի բերան եղեալ
լռել ի սրտի, քան մարդասիրու-
թեան իրատու, ահա ի բարւոյն
կարկառեալ ի յոյս : Խակ եթէ ըզ-
միականս շարժողութեան շրթանցս
բացից բռնադատեցից՝ խօսել կա-
մեցեալ, դարձեալ վնասն ձայն կրկ-
նակական եղերերդութեան լա-
լեաց բաղմութեան խեթ մտացս
յառաջադրէ :

Բ. Նա արդ՝ ողբակից մեծ մե-
ղաւորին անօրինելոյ կամաւ առ ի
մահ՝ պնորին գոչումն երկրորդե-
ցից և ես ընդ նմին, մեղայ ասէր՝
մեղայ, և անօրէնութեանց իմոց
ինձէն վկայեմ : Հիւսեալ ընդ նը-
մին ըզանս յիանեղորդի սաղմոսին,
անթիւս դրեմ զպարտուցս սակ
անձինս մեղանայ՝ քան զհիւղ եր-
կրի հոլմանոս փոշւոյ ընդ օդս ա-
մենայն տարածեցեալ :

Գ. Աղեղ յերկինս և առաջի

քո, ընդ անառակ որդւոյն պատ-
կառեցեալ՝ հայրենի դիմօդ վերա-
նալն դարձեալ՝ թախանձ արկանեմ
զղջմանելին ձայն աղերսանաց ար-
տօսրածին ողբով քո՛չման՝ ի տալ
խաւր դէմս մատուցեալ առաջի
քոյ տարածանեմ, հայր դիտու-
թեանց, Աստուած բոլորից, չեմ
արժանի կոչիլ, և ոչ բնաւին առ
այս անուանիլ, ոչ միայն որդի,
այլ և անպիտան ստրկաբան վարձ-
կան: Ընկալ զսոսին տարադրա-
կան, պարտական ինաւսից. և ըզ-
ցաւ քաղցոյս լկանաց նեղոյս նը-
ւազեցեալ՝ կենաց քո հացիւդ
քաշկեացես: Լեր ընդ առաջ քո
ողորմութեամբդ՝ ի սկզբնաւորս
ապաւինութեան. զգեցո զիմաց
և անխոտակալ՝ անօրինեալս մեղա-
պարտի զնախահպատուս հանդերձ
ձին ծածկոյթ. սանդակորոյս ձե-
ռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մա-

տանուցն համարձակութեան ա-
մենատաւ կամաք մատուցես. ըզ-
գարշապարացս թշուառութիւն
մերկութեան ոտից՝ պատսպարու-
թեամբ աւետարանական ամրա-
վերարկու օդից կօշկաց և յօձին
թիւնից միշտ ամրացուցես: Ըզ-
զուարակդ պարարակի եղինդ երկ-
նայնոյ, որ է միածին որդիդ քո
օրհնեալ, իսկապէս մարդասիրու-
թեամբ՝ կարօտելոյս բարեաց նը-
վիրեա. որ մատուցեալ միշտ և
անպակաս ճնոյ ի լսութեան յա-
րակայ ջենեալ ի սպանդարանի ան-
թիւ սեղանոյ անապատութեամբ՝
բոլոր յամենեսին և բնաւ յամե-
նայնումն, էութեամբ յերկինս և
իսկութեամբ ի տորինս, աննը-
ւազ մարդկութեամբ՝ և անթերի
աստուածութեամբ, վիշտեալ՝ և
բաշխի ի մատունս անհատս, զի
զհամայնն հաւաքեացէ առ ի նոյն

մարմին իւրոյն գլխոյ . քեզ փառք
ընդ նմին՝ հայր ողորմութեան յա-
ւիտեան . ամէն :

Աղօթք առ Հայրն երկնաւոր , Յովհաննու
գառնեցւոյ ասացեալ :

Ստուած ամենակալ՝ անքա-
ւելի և անճառելի , անաչխատ բը-
նութիւն և անհասարանալի զօրու-
թիւն , որ յայսմ աւուր հանգեար
յամենայն գործոց քոց՝ զոր արա-
րեր , և օրհնեցեր զնա և սրբեցեր
ամենևիմաստ խորհրդով և կանխա-
գիտութեամբ քով :

Արդ՝ ես ծնուանդս մեղաց՝ ան-
կեալ համ յախտ դառնագին ցա-
ւոց հոգեկան վնասուց , զոր չին-
եաց յիս հողմն մահածին իշխանին
խաւարի , և ոչ գոյ ինձ հանգիստ
դժնդակ տանջանացս : Այլ դու

ամենայնի՝ ապաքինեա զանբժշկելի հիւանդութիւն հոգւոյս, աննա- հանջելի հրամանաւ քով, և հան- պո զիս յանհնարին տանջանացս՝ ո- րով հասեալ կամ՝ ի գրուն ճահու, զի ամենայնի կարող ես և հզօր, և չիք քեզ իր անհնարութ։

Ակն երկրութեցս և բաղձանք հեշտալեաց գերեալ գերիեալ ըղ- միտս իմ՝ էարուչար վշտօք ծառա- յեցուցանեն զիս հանապազօր՝ ի պակաս և ի անուտիս, և ոչ եր- բեք տան գոլ և դադար ոգի առ- նուլ, և խոկալ խորհիլ զերս ազա- տութեան յանտանելի կրից կա- րեաց և դառն աշխատութեանցս։ Եւ ահա ազաչեմ զքեզ բարերար՝ որ փրկութիւնդ ես ամենայնի և դիւրիչ վշտաց նեղելոց, տուր ինձ գոանել երես՝ ի տառապանաց աս- տի յազատութիւն մշանջենաւոր կենաց և անանց հանդստեան յոր-

մէ մերժեալ են ցաւք և հեծու-
թիւնք ։

Ելիք յանցանաց յուզեալք ի հոգւոյ հրապուրանաց բանսարկուին բաղխեն զնաւակ մարմնոյս հինուածոյ, և սպառնան խորասոյզ առնել յանդունդս խաւարի անզերծ տանջանաց ։ Իսկ դու բարեգութ փրկեա զիս՝իշխաց ամենազօր աջովդ հնարհի, և հասո՛ ինձ սահանպիսան անքոյթ խաղաղութեն երկնային յարկի, ուր ամբարեալ պահին ամենայն գանձք բարեաց և անզբաղ բերկրութիւնք ։

Ո՛ի Թողուր զիս տէր Աստուած իմ՝ի կամս անձին իմոյ, զի մի ըստ յօժարութեան ապականեալ բընութեանս ստորքարշ եղէց յանցաւորս և՛ ի նոտիս . և մի՛ ի բաց ցեայ առնիր յինէն նահանջելով զնպաստս հնարհաց և ողորմութե՛ քո վասն անօրէնութեան իմոյ .

այլ ըստ սովորական մարդասիրու-
թեան քում խնայեա յիս ի սառել
ծուաձս քո՝ որ առ քեզ աղաղա-
կեմ կոչիտապին հեծութեամբ։

Լուր ինձ անհապաղ, զիա
մարդասէր, ներեա անյիշաչար, և
ողորմեա բազմամեղ անձին իմոյ
ըստ մեծի ողորմութեան քում.
արա առ իս նշան բարի ի փառս
անուանդ քում սրբոյ, և քաւեա
զմեղս իմ ի ձեռն ամենաքաւական
շնորհաց քոց. զի քաղցր ես դու
ասէր, և զիտութիւն քո անչափ։

Ընդէմ ղբեղ մարդասէր՝ մի
մատներ զիս ի ձեռս գժախտական
գաղանաց, որ բացեալ զկոկորդս
իւրեանց՝ խնդրեն կեղեքել զհոգի
իմ ամենածախ ժանեօք. հայր ինա-
ա զօրութեամբ բազկի քո ի հա-
լածս անողջանալիս, և զերծո
զիս զծառայս քո ի մահաբեր վը-
տանգէս. զի դու ես փրկութիւն


իմ և կեանք, և առ՝ի քէն է օգ-
նութիւն իմ յամենայն ժամ։

Տարակուսեալ վարանիմ վասն բազմութեան մեղաց իմոց, յոր-ժամ նկարեմ առաջի աչաց սեաւ-թեան մատցս ղատաստանն ա-նաչառ, զմերկապարանոց յանդի-մանութիւնն ամենայն գործոց, զպատիժն առակալի մեզաւորաց և անդարձից, զհուրն անշէջ, զորդ-նեն անմահ, և զդատապարտու-թիւնն յաւիտենական։

Եւ քանզի ոչ կարեմ իմանալ զո-րութեամբ թօթափիլ յանձնէ ըզ-բեռինս մեղաց, և աղաւթիլ յար-ժանահաս պատժոցս. վասն որոյ անձամբ բեկեալ գոչեմ առ քեզ մարդասէր, գործակից լեր ինձ՝ի դառնալ յեռս յանօրէնութեան գնացից իմոց՝ և դիմել առ քեզ յամենայն զօրութենէ և՝ի մտաց, և սրտառուչ զղջմամբ գտանել

զԹողութիւն և ղննուհս , և ողոր
մութեամբ քով արժանաւորիլ ընդ
սուրբս քո մշանջենաւոր հանգըս
տեան յաւիքեսութեան քումմ յեր
կինս . և ընդ նոսին փառաւորել
անլռելի գոհաբանութեամբ զա
մենազօր տէրութիւն քո յամենայն
յաւիտեանս . ամէն :





Ա Ղ Օ Թ Ք

Հ Ա Ն Գ Ս Տ Ե Ա Ն Ժ Ա Մ Ո Ւ Ն

Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի։

Աւանդեա տէր զլոյս քո՝ և ըզճշմարտութիւն քո. զի առաջնորդեացեն ինձ, և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։
Մոխ աւազի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութիւք՝ Աստուած Աստուած իմ։

Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ,
կամ ընդէր խռովես զիս. յուսա
առ Աստուած, խոստովանեցայ նմա.
փրկիչ երեսաց իմոց Աստուած ի։
փառք հօր և որդւոյ և։
Ա յժմ և միշտ և յաւիտեանս։

Ե՛ե՛ս խաղաղութեան զքեզ աղաչեցուք։
Օրհնութի՛ւն և փառք հօր և որդւոյ և։

Լ ԿԵՑԷ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի այք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի ՚ի բացես առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեսցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

գնայի ես յանդորրու. զի զպատա-
ւիրանս քո խնդրեցի:
Խօսէի զվկայութիւնս քո առաջի
թագաւորաց, և ոչ ամաչէի:
Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր
սիրեցի:
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուի-
րանս քո՝ զոր սիրեցի, և խորհէի
յարդարութեան քումմ:
Ցիշեա զբան ծառայի քո, յոր և.
յուսացուցեր զիս:
Սա մխիթարեցեալ զիս՚ի խոնարհու-
թեան իմում. զի բան քո կեցոյց զիս:
Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խո-
տորեցայ:
Ցիշեցի զվրաւունս քո յաւիտենից
տէր, և մխիթարեցայ:
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղա-
ւորաց, և ց.ք Թողին զօրէնս քո:
Գովելի են ինձ իրաւունք քո ՚ի
տեղւոջ պանդխտութեան իմոյ:

Ցիշեցի ՚ի դիշերի զանուն քո տէր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղեւ ինձ ձանապարհ ՚ի կեանս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ժանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես ՚ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք ինէն չարք, եւ քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս. և մի յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութենանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Ցանցաւորս համարեցայ զամենայն

մեղաւոր երկրի, վասն այսորիկ
սիրեցի զպատուիրանս քո։
Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։
Ներձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում ի մատուցն արա զիս։
Մոցեն աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քո փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութիւնք են։
Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում տէր, և օրէնք քո խօսք իմ էին։
կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կո-
րուսեալ. խնդրեա զծառայս քո, զի
զպատուէրսն քո ես ոչ մոռացայ:
Ամ ևկեսցեն ՚ի վերայ մեր ուղք ամ
բարտաւանից, և ձեռք մեղաւո-
րաց մի դողացուսցեն զմեզ:
Անդ անկան ամենեքեան որք գոր-
ծեն զանօրէնութիւն, մերժեցին
և այլ մի կարասցեն հաստատել:
Նա ՚ի տէր յուսացայ, ցնծացայց և
ուրախ եղէց Աստուած փրկիչ իմ:
Տէր տէր ես ինձ զօրութիւն և
կացոյց զոտս իմ ՚ի հաստատութե-
ն ՚ի վերայ պարանոցի թշնամեաց
կացոյց զիս, և հանդոյց զիս երագ
երագ:
Որ բնակեալն ես յօգնութիւն բարձ-
րելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ
յերկինս հանդիցէ:
Ասացէ առաւն՝ ընդունող իմ ես.
ապաւէն իմ Աստուած, և ես յու-
սամ ՚ինա:

Նա փրկեաց զնս յորդայթէ որսո-
ղին, և՛ի բանից՝ ի խռովութենէ:
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ·
՛ի հովանի թևոց նորա յուսացիս:
Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ՝
ճշմարտութիւն նորա:
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշե-
րի, ևոչ՛ի նետէ՝ որ թռչի՛ ի տուէ:
Ցիրէ որ ջրջի՛ ի խաւարի, ՛ի դայ-
թակղութենէ դևւին՛ ի հասարակ
աւուր:
Անկցի՛ն՛ի կողմանէ քումմէ հազարք
և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ
քեզ ինչ ոչ մերձեսցին:
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու ոեր յոյս իմ ես:
Զբարձրեաւն ստարեր քեզ ապա-
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք,
և տանջանք մի մերձեսցին՛ ի յար-
կըս քո.
Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ

է վանք, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազում իւրեանց ընկալցին զքեզ, զի մի երբեք հարցես զքարի զոան քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լսեցայց նմա. և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւորս արարից զնա. երկայնաւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Ընդ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ. և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր

Աստուած մեր, մինչեւ ողորմեցիս ի վերայ մեր:

Ողորմեա մեզ տէր՝ ողորմեա մեզ. զի բազում լցաք արհամարհանօք:

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. արհամարհանօքամբարտաւանից:

Աստուած յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա զիս:

Աստուած լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոց:

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:

Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ի չինամիս իմ, ճշմարտութեամբ քում սատակեա զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մա-

տուցից քեզ. և խոստովան եղէց անուան քումմ տէր, զի բարի է: Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եթես աչն իմ:

Օրհնեալ ես դու տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և առաքեալ բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոյ. գովեալ և առաքեալ բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և առաքեալ բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո. գովեալ և առաքեալ բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես որ նայիս ի խորհուրդս և հայիս յանդունդս. գովեալ և առաքեալ բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից. գովեալ և առաք-

ւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեցէք զԱստուած ի սրբու-
թեան նորա. օրհնեցէք զնա ի
հաստատութեան ի զօրութեան
նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նո-
րա. օրհնեցէք զնա ի բազում մե-
ծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնու-
թեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք
և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, պա-
ւեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաջս,
պսակեցէք զնա ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ի ձայն փոհութե.
ամենայն հոգի օրհնեցէք զտեր։

Ընդ որձակեա զծառայս քո տէր՝
ըստ բանի քում՝ ի խաղաղութիւն,
զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝
զոր պատրաստեցեր առաջի ամե-
նայն ժողովրդոց։

Եւս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի։ Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զնա ազ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առնէր։

Տէր հան ՚ի բանտէ զանձն իմ. դո հանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ ապաւեն արդարք՝ մինչեւ հատուսցես։

Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այլ արար ՚ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածոց իւրոց. արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցնուեաց զամբարտաւանս ի մե-
տաց սրտի, և քակեաց զհզօրս յա-
թոռոց։

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս
եկից բարութեամբ, և զմեծատու-
նըս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի
իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝
ընդ Աբրահամու և զաւակի նորա
յաւիտեան։

Տուր զօրութիւն ծառայի քո, կե-
ցո զորդի աղախնոյ քո, և արա
առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն,
զի դու տէր օգնեցեր ինձ և մխի-
թարեցեր զիս։

Փառք Հօր և որդւոյ և
Ա յժմ և միշտ և յաւիտեանս։

Մաղթանք

Ընձեռ իմ ի ձեռս քո ե յամե-

նայն ժամ, և՛ ու՛րբ նայէ քո յուսացեալ եմ Թագաւոր երկնաւոր. զթազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ։

Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զաղաչանեալս՝ի քեզ. այլ պահեա պատուական և ու՛րբ նաչիւ քով՛ի խաղաղութեան։

Քարող։

Ընդհանուք զամենական Աստուած, և խնդրեսցուք՛ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ՛ի դիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր՝ մինչեւ՛ի կատարումն ժամանակի ամաց մերոց։

Ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Զհանդիսատ գիշերիս խաղաղութիւն անցուցանել՝ հաւատով ի տեառնէ խնդրեցուք։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի տեառնէ խնդրեցուք։

Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի տեառնէ խընդրեցուք։

Զարբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի տեառնէ խնդրեցուք։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և աւուրք հաւատոյս մերոյ՝ զտէր աղաչեցուք։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քումմ, արասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Աղօթք

Տէր Աստուած մեր, դու պա-
հեա զմեզ խաղաղութեամբ ի գի-
շերիս յայսմիկ և յամենայն ժամա-
նակի: Ընդ սուրբ երկիւղ քո բե-
ւեռեալ պահեա զմիտս և զխոր-
հուրդս մեր: Որպէս զի յամենայն
ժամ քեզ պահպանեալ լինուք յո-
տոպայթից թշնամւոյն: Եւ քեզ
հանցուք զօրհնութիւն և զխառս
հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Խաղաղութիւն Յամենեցուն:

Երեշտակի խաղաղութեան
յանձն արա զանձինս մեր՝ տէր զօ-
րութեանց. որ եկեալ պահեսցէ
զմեզ անխռով ի տուէ և ի գի-
շերի՝ յարձնութեան և ի հան-
գաստեան մերում, զի դու ես արա-

րիչ լուսոյ, և հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ՝ տէր Աստուած մեր, զհանդիստ գիշերիս զքնարհեա խաղաղութեամբ անցուցանել, և հասանիլ ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և ի վառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս Դ.

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեցուք և զարթիցուք. զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ:

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան, ի նեղութեանէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց: Որդիք մարդկան՝ մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէր սիրէք զնան-

րութիւն, և խնդրէք զաստուածութիւն
ձանձրութք ի աքանչելիս արար տէր
սրբոյ իւրում. և տէր լուիցէ ինձ
՚ի կարդալ իմում առնա։
Բարեկամայք՝ և մի մեղանչէք. զոր
ինչ ասէք ՚ի սիրտս ձեր՝ յանկողինս
ձեր ընդհատարուք։
Մատուցէք պատարագս արդարու-
թեան, և յուսացարուք ՚ի տէր։
Բազումք ասեին թէ ո՛ ցուցցէ
մեզ զբարութիւն տեառն. նշա-
նեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց
և եառուր ուրախութիւն սրտից
մերոց։
Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեամբ յայս և ՚ի սոյն
ննջեցուք և զարթիցուք. զի դու
տէր միայն առանձին յուսով քո
բնակեցուցեր զմեզ։

Աղերսիա Օրթի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քումմ։
Երկիւղածութեամբ լուարուք։
Սրբոյ առաքարանիս՝ որ ըսպ Յովհաննու։
Փառք քեզ տէր Աստուած մեր։
Պռօսխուժէ։
Առ Աստուած։

Տէրն հոր Յիսուս Քրիստոս ասէ։

Ումն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ ապաձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ։

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Օրըբ խաչիւս աղաչեցուք պահէր, զի առաւել փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ հնորհիւ ո-ղորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո և ո-ղորմեա։

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քոյ ի խաղաղութեան. փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամեացն։ Արժա-նաւորեա զոհութեամբ փառա-ւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի։

Ընկալութիւնք առաջի քոյ՝ սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանա-

բատ ՝ զկոյտդ , բարեխօսեա վասն անձանց մերոց , և աղաչեա զմիա-ծին որդւոյդ վրկել զմեզ ՝ ի փորձու-թենէ և յամենայն վտանգից մերոց։

Մաղթանք ջօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոց, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։

ԲԱՆ ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ ոչեր Աստուածած հզօր՝ զդառնացօղիս զաղաչանս. մատիր զթութեամբ առ պատկառեալս զիմօք. փարատեա ամենապարգեւ՝ զամօթական տրտմութիւնս. բարձ յինէն ողբումած՝ զանըմբեռելի ծանրութիւնս. անջնջեսեա հնարաւոր՝ զմահացու կրծութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զնաւթողին հոգւոյ թիւնս. բացատրեա վերնային՝ զմոլեցեալն մառախուղ. կնքեա կեցուցիչ՝ զկա

րուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար գըտ-
մունս. խորտակեա անքննին՝ զմար-
տողին դիմեցմունս: Տեառնապը-
րեա քո անուամբդ զլուսանցոյց
երդ յարկիս. պարփակեա քո ձե-
ռամբդ զառաստաղ տաճարիս,
գծապրեա քո արեամբդ զմուտ
սեմոց սենեկիս. կերպացո զքո նը-
շանդ ի հետս ելից մաղթողիս.
ամրացո քո աջովդ զհանգստեանս
խշտի. մաքրեացես ի հալածից ըզ-
ծածկարան անկողնոյս. պահեացես
քո կամօքդ զտատապեալ անձն
ոչնոյս. անխարդախ արուցես ըզ-
քո շնորհեալ ջուընչ մարմնոյս. կա-
ցուսցես շրջափակ զպար զօրուդ
երկնայնոյ. կարգեացես ի դիմի
ընդդէմ դիւացն դասու: Տուր
հանգիստ բերկրութեան մահա-
հանգոյնս նիրհման ի խորութեան
գիշերիս, բարեխաւսութեամբ հայ-

ցուածոց սրբոյ Աստուածածնիդ՝
և ամենայն ընտրելոց ։ Ամփոփեալ
պարուրեա զպատուհան տեսու-
թեանց՝ զպայարանացս խնամոյ՝
անզարհուրելի զեռեղմամբ՝ ի ծը-
փական խռովութեանց, կենցա-
ղական զբաղմանց. անրջական ե-
րազոց. խօլականաց ցնորից. յիշա-
տակաւ քո յուսոյդ՝ անվնասել
պաշտպանեալ ։ Եւ սփոփեալ վե-
րըստին ի ննջմանէ ծանրութեան՝
ամենազգաստ արթնութեբ. հոգե-
նորոգ զուարթութեամբ ի քեզ
արձանացեալ, զայս ձայն մաղթա-
նաց՝ բուրմամբ հաւատոց՝ քեզ ա-
մենօրհնեալ Թագաւոր փառաց
անձառից, փառաբանողաց երկնա-
դումար խմբից երգակցեալ յեր-
կինս առաքել ։ Զի դու փառա-
որեալ ես յամենայն արարածոց
յաւիտեան յաւիտենից. ամէն ։

ԲԱՆ ԽԱ.

Ոդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի. հօդդ ահաւորի անքնին ճնաւնդ. որ տկարանայ առ՝ի քէն և ո՛չ ինչ։ Որ՝ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք, հալածին դեւք. ընկին յանդանք. խղին կապանք. խորտակին շղթայք, կենդանանծնին մահացեալք. բըժշկին հարուածք. ողջանան վէրք. քաւնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախուստ խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. ապաւի աղջամուղջն. վերանայ մուրճն. գնայ դիշերն. տարածրի տապնանդն. էքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձե-

ռըն քո ամենակար՝ քաւիչդ ամե-
նայնի ։

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան
ոգիս՝ այլ կեցուցանել. Թող ինձ
վանիս չարիան իմ բազում՝ ողոր-
մութեամբդ. զի դու միայն ես
յերկնի անճառ, և յերկրի անզըն-
նին. ՚ի տարր գոյի, և յեղյս ծա-
գաց աշխարհի, սկիզբն ամենայնի
և յամենայնի ամենայն լըմամբ,
օրհնեալ ՚ի բարձունս. և քեզ ընդ
հօր և հոգւոյդ սրբոյ վաստք յա-
ւիտեանս. ամէն ։

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց ՚ի Քրիստոս, զոր արարեալ է սրբոյն Ներսէսի շնորհալւոյ՝ Հայոց կաթուղիկոսի ։

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և. ան-

մահ քնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. և ողորմեա քո արարածոց և ինձ քաղմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միանական սուրբ երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ ըզխաւար մեղացդ և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ՝ իժամուս յայսմիկ աղօթել քեզ՝ ի հաճոյս, և ընդունել՝ ի քէն զինդրուածս իմ. և ողոր։

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդիդ քո սիրելի՝ ի լանդիր մերոցեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ո։

Որդի Աստուծոյ Աստուած ճշմա-
րիտ՝ որ խոնարհեցար ի հայրական
ծոցոյ և առեր մարմին ի սրբոյ
կուսէն Մարիամայ վասն մերոյ
փրկութեան. խաչեցար թաղեցար
և յարեար ի մեռելոց՝ և համբար-
ձար փառօք առ Հայր, մեղայ յեր-
կինս և առաջի քո. յիշեա զիս որ-
պէս զաւազակին յորժամ գաս ար-
քայութեամբ քով. և ողոր։

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմա-
րիտ՝ որ իջեր ի Յորդանան և ի
վերնատունն, եւ լուսաւորեցեր
զիս մկրտութեամբ սուրբ աւա-
զանին, մեղայ յերկինս և առաջի
քո. մաքրեա զիս վերստին աստ-
ուածային հրով քո՝ որպէս հրե-
ղէն լեզուօք սուրբ գառաքեալն.
և ողոր։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մը-
տօք իմովք, հոգւով և մարմնով
իմով. մի յիշեր զմեղս իմ գառա-

Քինա վասն անուանդ քոմ արքայ։
և ողոր ։

Տէսող ամենայնի՝ մեղայ քեզ խոր-
հրդով բանիւ և գործով. ընդեա
զձեռապիր յանցանաց իմոց, և գը-
րեա զանուն իմ ՚ի գպրութեան
կենաց. և ողոր ։

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կա-
մաւ և ակամայ, գիտութեամբ և
անգիտութեամբ. թողութիւն շը-
նորհեա մեղաւորիս, զի ՚ի ծննդե-
նէ սուրբ աւազանին մինչեւ ցայ-
սօր մեղուցեալ եմ առաջի Աստ-
ուածութեանդ քո գպայարանօք հ-
մովք, և ամենայն անդամօք ՚մար-
միոյս. և ողոր ։

Ամենահնամ տէր՝ դիր պահապան
աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ՚ձ
եւս հայիլ յարտաս, և ականջաց ի-
մոց՝ ՚ձ ախորժել լսել զբանս չա-
րութեան, և բերանոյ իմոյ՝ ՚ձ լսո-
ւիլ զատութիւն, և սրտի իմոյ՝ ՚ձ

խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զճարժուճն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմ։

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զկիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողորմ։

Իմաստութիւն հօր Յիսուս՝ տուր ինձ իմաստութիւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմ։

Կամեցող բարեաց տէր կամարար՝

մի թողուր զիս ի կամս անձին իմոյ
գնալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց.
և ողջ ։

Աղաչեմ երկնաւոր՝ տուր ինձ զար-
քայութիւն քո զոր խոստացար սի-
րելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ
առնել զմեղս, և սիրել զքեզ մի-
այն, և առնել զկամս քո. և ողջ ։
Խնամով արարածոց՝ պահեա նշա-
նաւ խաչի քո զիմս և զմարմին
իմ՝ի պատրանաց մեղաց, ի փար-
ձուրեանց դիւաց, և ի մարդոց
անիրաւաց, և յամենայն վտանգից
հոգւոյ և մարմնոյ. և ողջ ։
Պահապան ամենայնի գրիտաս՝ աղ
քո հովանի լինի ի վերայ իմ՝ի տը-
ւէ և ի գիշերի. ի նստիլ՝ի տան,
ի գնալ՝ի ճանապարհ, ի ննջել
և ի յառնել, զի մի երբէք տասա-
նեցայց. և ողջ ։
Առատաձ իմ, որ բանաս զձեռն

քո, և լնուս զամենայն արարած ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ, դու հոգա և պատրաստեա զկեաս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայամհետէ մինչեւ յաւիտեան. և. ողոր:

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս ՚ի ջար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բեւեռեա ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, եւ զերկիւղ գեհենին, և զսէր արքայութեան, զի զղջացայց ՚ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և ողոր: Աղբիւր անմահութեան՝ աղբեւրացո ՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զերանելն իմ յաշխարհէս. և ողոր:

Պարգեւիչ ողորմութեան՝ պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ

մարմնոյ և արեան քո հաղորդու-
թեամբ գալ առ քեզ. և ողոր։
Բարերար տէր՝ հրեշտակի բարուց
յանձն արասցես զիս քաղցրութիւն
առանդել զհոգի իմ, և անխոտոր
անցուցանել ընդ չարութիւն այսո-
ցըն՝ որ են՝ ի ներքոյ երկնից. և ո։
Լայս ճշմարիտ փրիստոս՝ արժանա-
ւորեա զհոգի իմ ուրախութեամբ
տեսանել զլոյս փառացդ քոյ՝ ի կոչ-
ման աւուրն, և հանդիսիլ յուսով
բարեաց յօթեւանս արդարոց մին-
չեւ յօր մեծի գալստեան քո. և ո։
Դատաւոր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս և
զմեռեալս, մի մոռաներ՝ ի դատաս-
տան ընդ ծառայի քում. այլ փրկե-
կեա զիս՝ ի յաւիտենական հրոյն,
և ընկալ արա ինձ զերանելեսն կո-
չումն արդարոց յերկնից աքքայու-
թիւնդ. և ողոր։
Ամենողորմ տէր՝ ողորմեա ամենայն

հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օ-
տարաց, ծանօթից և անծանօթից,
կենդանեաց և մեռելոց. չնորհեա
և թշնամեաց իմոց և ատելեաց ըզ-
թողութիւն որ առ իս յանցանաց,
և դարձո զնոսա ՚ի չարեացն զոր
ունին վասն իմ, զի ողորմութեան
քում արժանի եղիցին. և ողոր-
փառաւորեալ տէր՝ ընկալ զաղա-
չանս ծառայիս քո, և կատարեա
՚ի բարի զխնդրուածս իմ՝ բարե-
խօսութեամբ սրբոյ Աստուա-
ծածնին, և Յովհաննու Մկրտչին,
և սրբոյն Ստեփաննոսի նախավկա-
յին, և սրբոյն Գրիգորի մերոյ լու-
սաւորչին, և սրբոց առաքելոց՝
մարգարէից՝ վարդապետաց՝ մար-
տիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւո-
րաց՝ կուսանաց, և ամենայն սրբո-
ցոց քոց երկնաւորաց և երկրաւո-
րաց: Եւ քեզ փառք և երկրպա-
գութիւն անբաժանելի սուրբ եր-

ըորդութեանդ յաւիտեանս աւրհնեցից . ամէն :

Վասն սրբոյ Աստուածածնին բարեխօսութեանն՝ ոէր ընկալ զաղաչանս մեր , և կեցո զմեզ :

Սուրբ Աստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Տայր ի յերկինս . զի կամեցեալ ողորմեսցի՝ և դթասցեալ կեցուսցէ զարարածս իւր : Ամենակալ ոէր Աստուած մեր կեցո և ողորմեա :

Ընկալ ոէր զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի որդւոյ քո , և աղաչանօք ամենայն սրբոց քոց , և որոց այսօր է յիշատակ : Լուր մեզ ոէր՝ և ողորմեա , ներեա քաւեա և թող զմեղս մեր : Արժանաւորեա զոհութեամբ փա-

առաւօրել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սրբոյ հոգւոյդ . այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Օրհնեալ ես ի Յիսուս Քրիստոս . ամէն :

Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի :

Օ հանգստեան զաղօթս և զա-
ղաչանս ընկալ մարդասէր Աստ-
ուած ի հաճոյս բարերար կամաց
քոց . և մեր մեղաց և բազում յան-
ցանացն թողութիւն շնորհեա . և
քեզ փառք յաւիտեանս . ամէն :

Փառք քեզ տէր Աստուած մեր
որ պարգեւեցեր զօրս զայս բա-
րեաւ և խաղաղութեամբ անցու-
ցանել :

Մարդասէր Աստուած՝ զառաջա-
կայ գիշերս որ ի վերայ մեր գա-
լոց է , ի մեղաց փրկեա , ի չարեաց
ազատեա , և ի գործս բարիս ա-

ռաջնորդեա ։

Աստուած օրհնութեանցն և փա-
ռաբանութեանցն արժանի արա
զամենայն հաւատացեալս անուա-
նըդ քումմ սրբոյ , և պահեա ՚ի խա-
ղաղութեան ։

Տէր Աստուած մեր՝ տուր զքո խա-
ղաղութիւնդ ամենայն աշխարհի ,
բարձ ըզյաստուածն և զպատուհան
՚ի յարարածոցս ։

Ողորմեա հարց և եղբարց մերոց՝
կենդանեաց և հանգուցելոց ։

Ողորմեա զեկեղեցի հինոզաց , և-
րախտաւորաց , պողատուէից , սպա-
սաւորաց , և այնոցիկ որք ընդ հո-
վանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգ-
գուցեալ ։

Տէր Աստուած՝ օգնեա Թագաւո-
րացն քրիստոնէից , և իշխանացն
բարեպաշտից , զօրաց և զաւակաց
նոցին՝ պահելով ՚ի խաղաղութե ։

Տէր Աստուած մեր՝ պահեա զա-

առջնորդս և զերկայրութիւնս մեր
ամբողջ և անխափ՛ի կամս ողոր-
մութեան քոյ։

Նշանաւ սուրբ և պատուական խա-
չիւ քով՝ հալածեա զերեւելի և զա-
ներեւոյթ թշնամին՛ի սահմանաց
մերոց և՛ի բնակութենէս մերմէ։
Փրկեա զմեզ՛ի հրոյն յաւիտենից,
և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնեալ եղերուք՛ի Տեառնէ
սուրբ հոգւոյն. հանգերուք խա-
չաձեւութեամբ, և տէր երկնի՝ընդ
ամենեսեան. ամէն։



ՄԱՂԹԱՆՔ

Առ սուրբ Աստուածածինն, եւ առ
ամենայն սուրբսն Աստուծոյ.
յետ եկեցչին ասաս :

Աստուածածին ամենօրհնեալ
ղպաղատանըս մեր ընկալ,
՚ի հանգստեան ժամուս հասեալ
առ քեզ գոչեմք անձամբ թախծեալ։
Բանին կենաց բարձող եղեր,
զԱստուած մարմնով պարապրեցեր,
առ բանն Աստուած բարեխօս լեր
՚ի փորձանաց ըզմեզ փրկել։
Գովեալ ես դու փայտ փրկութեան,
ամենօրհնեալ յաղթող նըշան.
՚ի գիշերիս ըստուերական
ծագեա մեզ ղլոյդ սրփիական։
Դաղան ՚ի քէն գոռնդք խաւարին,
ամենահրաշ ղէն արարչին.
ըզմեզ պահեա շնորհիւ քոյին
՚ի գիշերիս աղջամղջին։
Երկոտասան սուրբ առաքեալք,
եօթանասուն աշակերտեալք,
յանձառ լուսոյն լոյս անուանեալք,
որթոյն կենաց պըտղաբերեալք։

Զ ձեզ աղաչեմք սրտաւսուապին,
և ողաւատիմք կողկողագին,
վանիչ լերուք դիւաց դընդին
ոչ մերձենալ առ մեզ չարին։
Էին ընտրեալք բանին կենաց,
գումարք գասուց առեանողաց,
որք զատագան ժամանակաց
գուշակեցիք հոգւով շնորհաց։
Ընդ մեզ լերա՛ք աղօթակից
որք Աստուծոյ էք խօսակից.
փըրկել ըզմեզ ՚ի վտանգից
՚ի յարքինութեան և չերազից
Թագաւորին երկնաւորի
երկրպագող ՚ի յարգանդի,
մեծ Կարապետ սուրբ ածողդի,
միչնորդ կենաց և օրինի։
Ժամանեա մեզ ՚ի յօգնութիւն,
զի մի՛ մոցուք ՚ի վորձութիւն.
մաքուր մարմնով լինիլ ՚ի քուն,
արդար հոգւով մնալ արթուն.
Ի քէն հայցեմք արտասուագին,
Նախավկայ Տեառն առաքչին,
սուրբ Ստեփաննոս բացող գերկին,
առեող գՅիսուս յաջմէ ծնողին։
ԵՒեր բարեխօս արեամբ քոյին
տալ մեզ հանգիստ ՚ի յանկողնին,
արթուն լինիլ յառաւօտին,
բարերանել զլոյն անքընին։
Խընդրեմք ՚ի քէն, հայր պատուական,

լուսաւորիչ ազգի մարդկան,
տէր սուրբ Գրիգոր պետ Պարթեւաստան,
լեր մեզ պարիսպ և պահապան։
Ծընողաբար ՚ի մեզ գթիլ,
զցրուեալ ղտրդիքս քո ժողովեա.
յուրախութիւն լցմեզ կոչեա,
և ՚ի բարին առաջնորդեա։
Կենդանարար Թագաւորին
դուք ճշմարիտ ղինուորք նըմին,
սուրբ Մարտիրոսք վըկայք Քրիստին,
ոչք յաղթեցիք զԼըշնամին։
Հօրըն լուսոյ միշտ մաղթեցէք,
ղտրդին ընդ հօր աղաչեցէք.
հոգւոյն շնորհօք մեզ օգնեցէք,
՚ի բանսարկուէն զմեզ Թաւեցէք։
Զիւնախոյլեալ երամք ընտրեալ
ճըգնաւորաց դասք երանեալ,
Թուչնոց երկնից էք նմանեալ,
յայտս և ՚ի ծերպըս բընակեալ.
Ղօղեալ հոգւոց մեր ՚ի մարմին,
լերուք պարիսպք ընդդեմ չարին,
զի յաղթեսցաք հակառակին,
խորտակելով ըզկնա նորին։
Ճրագունք վառեալ լուսով ՚ի լի,
սուրբ կուսանաց դասք երամի,
արժան եղեալք առագաստին
և անթառամ սուրբ պըսակին։
Մեզ բարեխօս լերուք սիրով,
առ տէր Յիսուս աղերսելով,

'ի փորձանաց ըղմեզ փըրկելով,
յանշէջ հրոյն ազատելով։
Յանեզ լուսոյ աստուածային,
լուսոյ առեղծեալք բանիւ նորին.
պարդարեցայք հոգւով շնորհին
դասք իննեկի զօրք երկնային։
Նախախնամել վեզ փուխթաջիք,
և յօգնութիւն առ մեզ հասչիք,
որ Աստուծոյ հրաման առիք,
ոմ ճշմարիտ մեր սիրելիք։
Շնորհաւոր ազգի մարդկան
տեր մեր Յիսուս անքըննական,
ըղմեզ պահեա միշտ անսասան
աստի մինչ յօր քո գալստեան։
Ողորմութիւն մեզ պարգեւեա,
զհիւանդ հոգիս մեր բժշկեա.
'ի բանսարկուէն զմեզ փրկեա,
և 'ի չարեաց անփորձ պահեա։
Զար իշխանքըն խաւարին
ոչք ընդ ծառայս քո մարանչին.
քո նշանաւ սրբոյ Խաչին
աներեւոյթ կռիւ անեսցին։
Պարգեւիչ՝ բարեաց մարդկան,
ամենառատ յամենեսեան.
պատրաստեցո մեզ անխափան
զպէտս հոգւոյ և մարմնական։
Քեզ շնորհեա՝ ինձ արտասուաց
զկնի լուացիչ զգործս չարեաց,
աթոռ և էջ քոց հարսանեաց

ընդ իմաստուն սուրբ կուսանաց։
Ոհո բարի՛ իմ տէր Յիսուս,
և հոգ կենաց սովեալ հոգւոյս,
առաքինութեա մոլորելոյս,
և կերակրեա զմիտս ընդ մարմնոյս։
Սրբեա զհոգիս յաղտոյ մեղաց
՝ի զանազան չար փորձանաց.
տուր ինձ գնալ ըստ քո կամաց,
զի արժանի եղէց փառաց։
Վխրաւորեաց զիս Թշնամին,
այն որ չկամի զկեանս մարդկային,
զիս բերժըշկեա տէր երկնային,
լուսաւորեա լուսով քոյին։
Տրտմեալ հոգւոյս լեր ըսփսիխ,
ցաւած մարմնոյս լեր դարմանիչ,
մոլար մտացըս լեր ուղիչ,
ամենառատ բարեաց առուիչ։
Բամից սրբոց աղաչանաց,
հինեւակ դասուց հրեղէն զօրաց,
առաքելոց քոց սիրտզաց,
մարգարէիս տեառնողաց։
Ցանկալի հայրապետաց,
և երջանիկ վարդապետաց.
արիւնաներկ մարտիրոսաց,
և գերազոյն Ճգնաւորաց։
Ի բառասնեակ սուրբ կուսանաց,
որք փեսայիդ սպասեն փառաց,
և աներեսյն մանկտուր անճանց

հետեւողաց քոյին կամաց ։
Փրկեա զհոգիս ի տանջանաց,
զաղբատեսիլ յանքուն որդանց ։
լսել առաւր զձայն քո աւետաց
զոր խոստացար քոց սիրողաց ։
Քեզ հօրըդ փառք միշտ առաքեմք,
զորդիդ ընդ հօրըդ գաւանեմք,
ըզհոգիդ սուրբ բարեբանեմք,
երրորդութեանդ երկրպագեմք ։



